



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material



31.99.099  
9-99

694





288.434

ՄԻՒԵՅՆԻԻ ՊԵՏԿԱՆՆԵՆՆՅՑ

891.99.09

ԿՐԻՏԻԻԲ

7-29

4

ՅԵԿՈՐԵՅ ԿԱՐԵՆՆԵՆՆՅՑ

Հեղինակու թեան վրաս



1861

ԹԻՖԼԻՍ :



Ի Տպարանի Ներսիսեան Հոգևոր Գալուցի  
Հայոց Ընծայելոյ Ղզղիուհան Գեորգոյ  
Լ. Բժրուհեոյ :



04.12.2013

APR 2013

OFFICE OF THE DIRECTOR

4-4249

OFFICE OF THE DIRECTOR

OFFICE OF THE DIRECTOR



4-4249

OFFICE OF THE DIRECTOR

Faint, illegible text at the bottom of the page, possibly bleed-through from the reverse side.





# ԿՐԻՏԻՔ

Նորուստ դուրս եկաւ մամուլի տակից հետաքրքրուէ արժա-  
 նի գիրք՝ ԵՌԵՎԱՆԻԿ ԿՐԻՏԻՔԻ ՄԱՐԿԻՆԻ ԱՊՐԻՄՈՍԻԱՅ ՀԱՅՈՅ ԸՍ-  
 ԿԱՐԱՄԱՐԻՔԻ, ՈՂԲԵՐՓՈՒԼԻՆԻ ԱՂԳԱՅԻՆ ԱՊՈՏՈՒԼԻՆԻՅԻ, ԲՈՃՈՒ-  
 ՆԱԾ ԵՐԵՎԱՆԻ ԳԵՐԱՅ, ԳՈՐԾ՝ ՀՅԱԿՈՎԲԱՅ ԱՊՐԵՆԵՄԻՅԻ,  
 1860, 'ի ԹԻՔԷԼԻՂ:

Հայոց դրականութեան մէջ կան մէկ քանի ողբեր-  
 ցութիւնք աղգային որատմութիւնից առած, բայց մին-  
 չև էսօր նրանցից ոչ մէկը չի ընկել անաչառ և կա-  
 նոնաւոր կրիտիկի տակ և ոչ մէկի համար հրապարա-  
 կական դատաստան չի կարուել արժանաւորութեանց կամ  
 թերութեանց մասին, այլ լսում ենք միայն միակողմանի  
 գնահատութիւն: Արանից յառաջանում է էն մնասը,  
 որ շատ Հայեր բնաւ չեն կարդում և ամենեին տեղե-  
 կութիւն չունին էնպիսի օգտակար հեղինակութիւննե-  
 ըից, ոմանք՝ լսելով միայն են ստանում թերի տեղե-  
 կութիւն, իսկ ոմանք աչքով տեսածը միայն հաւանե-  
 լով, չեն աշխատում խորամուտ լինիլ հեղինակութեան  
 ներքին յատկութեանը, և ստանում են ծուռը դա-  
 դախարներ:

Ես շատ սիրում եմ թէատրոնը իրա բովանդակ գե-  
 ղեցկութիւններով և շատ մեծ ախորժանօք եմ կարդում  
 ձեռք ընկած թէատրոնական հատուածները և մանաւանդ  
 նրանց վրա դրած կրիտիկը, Ես պատճառաւ իմ մտա-  
 ւոր աշխատութեանց մեծ մասը նուիրել եմ թէատրո-

նին և սրտով ցանկանում եմ, գտնեա՛ մէկ մտաւ, օգուտ  
բերել սրտով իմ աղբին: Աւտի յանձն եմ առնում  
( մե՛ծ յանդգնութիւն է իմ կողմից ) ամէն նոր դուրս  
եկած թէաւրոնական հատուածների վրա իմ մասնա-  
ւոր ակնարկութիւնը հաղորդել ընթերցասիրաց, և աղ-  
գի մտադրութիւնը դարձնել նրանց արժանաւորութեանց  
կամ թերութեանց վրա: Իս նպատակաւ իմ հայեց-  
ուածքը և կարծիքը ( էս առաջին անգամս ) Հո-շմիչ  
գրքի վրա ներկայացնում եմ մեր ուսումնականաց և բո-  
լոր աղգի դատաստանին և խնդրում եմ չըճանձրանալ  
արտասանել իրանց անաչառ վճիռը:

Ներկայ գրութեա մէջ կանոնաւոր կարգը պահպանելու  
համար ես հարկաւոր եմ համարում զննել էս գրքի երեք  
շանաղան կողմերից. նախ՝ իբրև Լեւոնտիանի հասարակ-  
քատ որում աղբերգութիւն է, երկրորդ՝ իբրև պատմա-Լի-ն,  
քատ որում աղբային պատմութիւնիցն է առած, և եր-  
րորդ՝ իբրև գրականական աշխատութիւն: Այլ ջուճը մէկ  
քանի խօսք կըխօսեմ, թէ ի՞նչպէս կատարուեցաւ էս  
աղբերգութիւնը բեմի վրա:

Այսինքն գրքի ճակատից, ուր հասկն է գրած՝ ողբեր-  
գու-Լի-ն բաժանած երեք հանգիսի վրա: Հինգէս բառը  
պ. Արինեանցը գրել է էս տեղ գործողու-Լի-ն բառի  
տեղ: Իմ կարծիքով էդ գործածութիւնը հիմք չունի:  
Երրորդ Եւրոպացի աղբաց մէջ թէաւրոնական հատուած-  
ների բաժանմունքը կոչուում են «հի» (գործողութիւն):  
Էս բառով հասկանում ենք հատուածի մասը, ուր զա-  
նաղան տեսարաններով պատկերանում է անցքի որոշ  
ժամանակը և տեղին. և «հի» բառը շատ ճիշտ է թարգ-  
մանած մեր լեզուումը գործողու-Լի-ն. այլ թէ ո՞ր հի-  
ման վրա և ի՞նչ խորհրդով է փոխել պ. Արինե-  
անցը էդ թարգմանութիւնը, ինձ յայտնի չէ. միայն  
էսքանը գիտեմ, որ «հի» բառը չի կարող ունենալ  
գործողու-Լի-ն բառի տեղը և նշանակութիւնը: Հան-

նին և սրտով ցանկանում եմ, գոնե՛ս մէկ մտաւոր, օգուտ  
 բերել սրտով իմ աղօթին: Աւստի յանձն եմ առնում  
 ( մե՛ծ յանդգնութիւն է իմ կողմից ) ամէն նոր դուրս  
 եկած թէաւորոնական հատուածների վրա իմ մասնա-  
 ւոր ակնարկութիւնը հաղորդել ընթերցասիրաց, և աղ-  
 զի մտադրութիւնը դարձնել նրանց արժանաւորութեանց  
 կամ թերութեանց վրա: Իս նպատակաւ իմ հայեց-  
 ուածքը և կարծիքը ( էս առաջին անգամս ) ( Հո-շմիհ  
 գրքի վրա ներկայացնում եմ մեր ուսումնականաց և բո-  
 լոր աղօթի դատաստանին և խնդրում եմ չըձանձրանալ  
 արտասանել իրանց անաչառ վճիռը:

Ներկայ գրուե՛ս մէջ կանոնաւոր կարգը պահպանելու  
 համար ես հարկաւոր եմ համարում զննել էս գրքը երեք  
 զանազան կողմերից. նախ՝ իբրև Թէաւորոնական հասո-  
 ըստ որում սղբերգութիւն է, երկրորդ՝ իբրև պատմա-  
 ըստ որում աղգային պատմութիւնիցն է առած, և եր-  
 րորդ՝ իբրև գրականական աշխատութիւն: Այլ ջու՛մը մէկ  
 քանի խօսք կըխօսեմ, թէ ի՞նչպէս կատարուեցաւ էս  
 սղբերգութիւնը բեմի վրա:

Այսեք գրքի ճակատից, ուր հասկն է գրած՝ ոչ բեր-  
 գո-Թի-ն բաժանած երեք հանգիսի վրա: Հինգէս բառը  
 պ. Արիներեանցը գրել է էս տեղ գործողութիւն բառի  
 տեղ: Իմ կարծիքով էդ գործածութիւնը հիմք չունի:  
 Բոլոր Աւրոպացի աղգաց մէջ թէաւորոնական հատուած-  
 ների բաժանմունքը կոչուում են «ի» (գործողութիւն):  
 Իս բառով հասկանում ենք հատուածի մասը, ուր զա-  
 նազան տեսարաններով պատկերանում է անցքի որոշ  
 ժամանակը և տեղին. և «ի» բառը շատ ճիշդ է թարգ-  
 մանած մեր լեզուումը գործողութիւն: այլ թէ ո՛ր հի-  
 ման վրա և ի՞նչ խորհրդով է փոխել պ. Արինե-  
 անցը էդ թարգմանութիւնը, ինձ յայտնի չէ. միայն  
 էսքանը գիտեմ, որ հինգէս բառը չի կարող ունենալ  
 գործողութիւն բառի տեղը և նշանակութիւնը: Հան-

կարծիքով լեզուի մաքրութիւնը պահանջում է՝ տալ ամէն բանին իրա տեղը և էնդրով պահպանել նրա ճիշդ նշանակութիւնը:

Թողնենք առ ժամանակ պ. Արեւնեանցի յառաջաբանը և տեսնենք, թէ ինչպէս է շարադրել, բանաստեղծել և զարդարել նա առաջիկայ ողբերգութիւնը: Այլ որովհետև ներկայ քննութեան սահմանների մէջ մտնում են երեք գլխաւոր յատկութիւնք, վասն որոյ հարկաւոր է համառօտիւ հանել գրքի բովանդակութիւնը, առանց փոփոխութեան դուրս գրելով պ. Արեւնեանցի գործածած բառերը, կէտադրութիւնքը, և ճիշդ ցոյց տալով նրա լեզուն և ոճը: (Միայն երբ կը յատկացնեմ նօտք տառերով, իսկ ուղղելին կը դնեմ փակագծի միջումը:)

Գ Ո Ր Ծ Ա.

Տ Ե Մ Ր Մ Ի Ա.

Գործողութիւնը կատարուում է Հասապիւան քաղաքումը Արդեանի պալատումը, Արդանը նստած է Հայաստանի ձեով զարդարած սենեակումը, (•) վարագոյրը բացուելից յետոյ հանչած է իւր եղբայր Հմայեակին և ասում է:

Հմայեակին կանչել հարկաւոր չէր, ըստ որում նա բեմի վրա էր. իսկ եթէ բեմի վրա չէր, ուրեմն հարկաւոր էր, որ Արդանը ձայն տար, կամ ծառայող զարկէր կանչելու, և յետոյ պէտք էր ասել, թէ Հմայեակը ներս է գալի. բայց եր չըկայ, ուրեմն բոլոր վերջին շարքը՝ վարագոյրը բացուելից յետոյ հանչած է իւր եղբայր Հմայեակին և ասում է՝ — ըստ ամենայնի աւելորդ է: Այլ ընդհակառակը պէտք էր յատկացնել սկզբումը, թէ ովքեր են ներկայ էս տեսարանումը:

Արդան: «Հմայեակ, ես համբաւ ասաց (ստացայ), որ Արաց Աղգէն արքայի եղբայր Չըջիկ իշխանը գա-

լիս է մեզ մօտ դեօպանութեամբ. և զարմանքն «յն է  
 (էն է)» որ ոչ մարդպանի մօտն է դալի և ոչ հազարա-  
 պետի» այլ ուղղակի ինձ մօտ: Վեօպանութեամբ ապառճաք  
 ինձ յայտնի չէ, բայց ինչ և իցէ, մենք պէտք է ընդու-  
 նենք նրան «յնպէս» (էնպէս)՝ ինչպէս ընդունում էին  
 Մ. ըշակունի թագաւորները օտար երկրից եկած դեօպան-  
 ները (ըին): Աւրեմն դնա՛, ա՛ռ քեզ հետ Մ. ըշաւիր Արամ-  
 սարականը (ին), Թաթուլ Վիմաքսեանը (ին) և միւս  
 նախարարներից մի քանիսը (ին), և իմ թիկնապահ զօր-  
 քերից մի գունդ. ( ) և գնա՛ Ս. ջլիկ իշխանին ընդ ա-  
 ռաջ. և ուր որ հանդիպես նորան, տուր պատշաճաւ որ  
 ողջոյնը, հարցրու (ո՛ւ) Ապղէն արքայի և նոյն (նրա)  
 աշխարհի որպիսութիւնը. ( ) և հրաւիրէ (է ) որ մեզ  
 մօտ վեր գայ. ( : )

Վեօպանին պատշաճաւ որ ողջոյն տալը, նրա և նրա  
 թագաւորի առողջութիւնը հարցնելը, արեւելե ընդ-  
 առաջ գնացողի գործն է և պաշտօնն է. իսկ թագաւո-  
 րի և նրա որպիսութիւնը հարցնելը նրա գործը չէ:

Մ. աջին երկու հարցմանց պատասխանը կարող է ա-  
 մենայն դեօպան յայտնել կարճ խօսքերով և յետոյ ին-  
 քըն էլ մոխադարձարար հարցնել և նոյնպէս կարճ պա-  
 տասխան ստանալ ճանապարհի վրա հանդիպած տեղու-  
 մը կարճ միջոցով կանգնած: Իսկ արքայի և նրա աշ-  
 խարհքի որպիսութիւնները ի՞նչպէս է կարող խեղճ դեօ-  
 պանը կարճ խօսքերով բացատրել: Վդպիտի վսեմ և  
 բազմանշանակ հարցմանցը պատասխան տալու համար  
 հարկաւոր է երկար խօսակցութիւն, որ անյարմար է հան-  
 դէսին (ցերեմոնիային), ուր ներկայ են շատ նախարարք  
 և զօրականք: Թագաւորը ունի հազար տեսակ յարակ-  
 ցութիւններ, որք նրա անդադար զբաղմանց առարկա-  
 ներն են. նրա աշխարհի որպիսութիւնները հազար տե-  
 սակ աղդեցութեանց տակն են, հազար տեսակ հանգա-  
 մանքներից և պատճառներից են յառաջանում: Աւրեմն,

Ի՞նչպէ՞ս կարող է դեսպանը կարճ խօսքով, էն էլ ճա-  
 նապարհի վրա կանգնած և բազմութեան առաջը բա-  
 ցատրել էս տեսակ որպիսո՞ւնիւնք... կամ վայելի՞ւն է  
 արդեօք, որ ընդ առաջ եկողը հսպիսի հարցմունք անի  
 և դեսպանը պատասխան սոյ, և եթէ առաջ եկողը  
 հզպիսի անտեղի հարցմունք անի, ո՞չ ապաքէն դեսպանն  
 էլ իրա կողմից կը ստիպուի հարցնել, թէ թագաւորի  
 և նրա Տ.քի ո՞ր որպիսո՞ւնիւն էս կամենում իմանալ...  
 ո՞չ ապաքէն իրա մտքումը կ'ասի, թէ էս ի՞նչ տխմար  
 հարցմունք է. ես որ տեղ կանգնեմ սրա համար  
 դիպլոմատիքական ճառ կարդամ: Կարծեմ, որ պ.  
 Կարինեանցը ինքն էլ կը վկայի, թէ հսպիսի հարցմունք  
 չի կարող առաջարկել ընդ առաջ գնացողը, ուրեմն Ար-  
 դանն էլ չէր կարող տալ իրա եղբորը հզպիսի անտեղի  
 պատուէր: Կհզպիսի հարցմունքը իրա համար կը պահէր  
 Արդանը, էն էլ ո՞չ թէ հզպէս անսահման ձևով,  
 այլ յատկացնելով առարկաները, ո՞չ թէ բազմու-  
 թեան մէջ և զօրաց առաջը, այլ առանձին խօ-  
 սակցութեան ժամանակը: Աւրեմն, լա՛ւ կը լինի, որ պ.  
 Կարինեանցը էս պարբերութեան միջից բոլորովին հանի  
 հետեւեալ շարքերը՝ «Կանչո՞ւմ է ե-ր եղբօք Տ.ճայակէն և  
 առո՞ւմ է, ... հարցրո՞ւ Ապուհէն արդեօք և նոցա աշխարհի որ-  
 պիսո՞ւնիւնք»: Ի՞նչո՞ւ յայնմանէ լաւ կը լինի, որ ուղղի բո-  
 լոր լեզուի դէմ և կետադրութեան կանոններին հակա-  
 ուակ սխալները, որ ցոյց եմ տուել նոտր առեւրով և  
 փակագծի միջումը: Մանաւանդ բարեհաճի ընդունել լե-  
 ջուի անհրաժեշտ կանոնը՝ Ընչաւոր առարկայ ցոյց տուող  
 գոյական անուան հայցական հոլովը չի կարող նման լի-  
 նիլ ուղղականին. էդ երկու հոլովների մէջ նմանութիւնը  
 միայն անշունչ և վերացական առարկայ ցոյց տուող գոյա-  
 կանաց և հաւաքական անուանց մէջ է. ըստ որում չենք  
 ասում՝ թագաւորը տեսաւ իրա փեսան, այլ՝ փեսին,  
 ծեծեց իրա սրդին, իրա տղան, իրա աղջկէն, այլ՝ օրդուն,

տղին, աղջկան, Արեմն չի կարելի դրել՝ Արշակունի թա-  
 դաւորները ընդունում էին դեպքանները, այլ-բին, Իսկ  
 անշունչ և վերացական առարկաների և հաւաքական ան-  
 ուանց մէջ ուղղականը և հայցականը իրարու նման են,  
 ըստ որում ասում ենք՝ կրակը այրեց փայտը և ոչ-ինչ,  
 գեներալը կատարեց զօրաց սաղ դունդ, և ոչ-ինչ գե-  
 նին ասարաւ նրա խելքը և ոչ-բին:

Այսպիսի անտեղի պատուէրը լսելուց յետոյ Հմայեակը  
 պատասխանում է՝ Շատ բարի (•) սիրելի եղբայր, (•)  
 ես է՛կատարեմ (կը) ձեր բոլոր հրամանները, (•) Վուք  
 անհոգ կացէ՛ք. (•) ինչ (Ինչ) ժամանակ ես Արատ-  
 շիր և Առամշապուհ թագաւորաց մօտ պաշտօնի մէջ  
 էի. (•) քանիցս անգամ Հունաց կայսեր, Պարսից,  
 Հունաց և այլ տէրութեանց դեպքանները (բին) ընդու-  
 նել և դոհութեամբ (•) շատ դոհութեամբ ուղեորել  
 եմ. ես ինքս էլ քանի անգամ օտար տէրութեանց մէջ  
 դեպքան եմ գնացել. պալատական կարգերը նոր սովո-  
 բելու չեմ, (•) Համազասպի որդին իւր սպարապետ եղ-  
 բայրը (օրը) անօթապարտ չի թողուլ օտարաց առաջերս:

Արդանին քաջ յայտնի պէտք է լինէին իրա եղբօր  
 կատարած պաշտօնները և նրա հմտութիւնը դեպքանա-  
 կան գործքերի մէջ. ուրեմն ընչի՞ն էր հարկաւոր, որ  
 Հմայեակը կրկնէր իրա եղբօր մօտ իրա արածները. . .  
 Իսկ եթէ պ. Աարինեանցը կամենում էր այցելուացը  
 կամ ընթերցողներին հասկացնել Հմայեակի արածները  
 և հմտութիւնը, պարտաւոր էր կամ ուրիշ տեսարա-  
 նոււթ պատմել տար չ'իմացող անձին մօտ, և կամ ու-  
 ըրել բերանով պատմէր: Արեմն էս պարբերութեան մէջ  
 միայն առաջին երկու շարքերն են հարկաւոր, իսկ մնա-  
 ցածները բոլորովին աւելորդ են: Անբընոււթ ցոյց կը-  
 տամ, թէ ո՞ր տեղոււթ և ինչպէս յարմար կրկնէր:

Արք որ Հմայեակը դուրս է գնում, Արդանը մը-  
 տածում է, թէ ի՞նչ կրկնի արդեօք դեպքանութեան

պատճառը . . . յետոյ ցաւում է Հայոց անմիաբանու-  
թեան վրա, որ հնքան տարաբաղդութիւններ է բերել  
Հայոց գլխին, մինչև որ Արաց արքայի դեսպանի գա-  
լուցն էլ կասկածում է: Գալիս է Արդանի հայր Հա-  
մազասար, հարցնում է, թէ էս ի՞նչ պատրաստութիւն  
է պալատի մէջ. Արդանը յայտնում է պատճառը,  
Համազասար խորհուրդ է ապի նրան շատ զգուշութեամբ  
վարուել դեսպանի հետ. Արդանը պատասխանում է,  
թէ մինչև էսօր առանց իրա հօր խորհրդոյ ոչինչ չի ա-  
րել, և այսուհետև էլ ոչինչ չի անիլ. Համազասար  
օրհնում է նրան, ասում է՝ մնաս բարեաւ, ես երբեք  
(դնամ) հանդատանամ. վաղը բարի լոյսը բացուի, կը-  
խօսենք և կըխորհենք ինչ որ անելու ենք. Արդանը  
համբուրելով իրա հօր ձեռքը ասում է՝ «գնա՛ք բարեաւ,  
հայր իմ, գիշեր բարի, Համազասար դուրս է գնում,  
Արդանը էլի մնում է բեմի վրա մէնակ:

Ես խօսակցութեանց մէջ պ. Արիներեանցը շատ լու-  
է ցոյց տուել Համազասարի հայրական հոգացողութիւնը,  
արտացալութիւնը, ազգի վիճակին կարեկցութիւնը և  
բազմափորձ հեռատեսութիւնը. Արդանի որդիական  
հնազանդութիւնը և Հայաստանի հին կանոնական յար-  
գանքը որդւոց իրանց ծնողաց մօտ: Այնպէս գեղեցիկ  
է արտայայտել Արդանի իրաւացի տրտունջը ազգի ան-  
միաբանութեան վրա. Տայց ամսն, որ պ. Արիներեանցը  
գրելու ժամանակը չի կարողացել անփոփոխ պահպանել  
բնաւորութեանց նախատիպը, ինչպէս կըտեսնենք հե-  
տեւալ քննութիւնից:

### Տ Ե Մ Ի Մ Ն Բ.

Արդանը նստած է իրա սենեակումը խորը մտած-  
մանց մէջ ընկղմած. դրսից գալիս են երգոց և նուա-  
գարանաց ձայներ, ներս է մտնում Հմայեակը:



Հ Տ Կ Ե Կ

Արեւիկի եղբայր, ահա եկաւ մեր հիւր Գ ջիկի իշխա-  
նը, (•) կ'հրամայէք (կը), որ ներկայանայ ձեզ:

Ա Կ Կ Կ Կ

Թիւ 1-ը գայ: (Հմայեալը դուրս է գնում. Աւարդանը  
մէնակ մնալով ասում է) իմ հայր Համազասպը ինձ  
խրատում է զգուշութեամբ վարուիլ Արաց իշխաննե-  
րու հետ խօսակցութեան մէջ. չըզիտեմ (•) ի'նչ ըզ-  
գուշութիւն բանեցնեմ. լաւ էր, թէ մի քիչ Վարսից  
խորամանկութիւն կարողանայի դորձ ածել, (•) բայց  
Հայն ո՞վ, խորամանկութիւն ո՞վ, և եթէ Հայը կա-  
մենայ ահամայ խորամանկութիւն դորձ դնել, իսկոյն  
կ'յայտնուի (կը), որովհետեւ բնականից, նաև սովորա-  
կանից դուրս արած նմանաձևութիւնը իսկոյն ցոյց կ'տայ  
(կը) իւր անյարմարութիւնը: Այն, իմ խօսքս պիտի  
լինի պարզ և աննենգ:»

Վախընթաց տեսարանումը Աւարդանը ուղարկեց Հը-  
մայակին դեսպանի առաջ, յետոյ եկաւ հայրը, խօսե-  
ցաւ և դուրս գնաց: Հօր Բարի Գեղէր ասելուց իմացանք,  
որ գիշեր է: Հիմի էս տեսարանումը Հմայեալը ներս  
է մտնում և ասում է, թէ դեսպանը եկաւ. ուրեմն  
էլի նայն գիշերն է, ըստ որում ո՞չ վարագոյրն է վէր ե-  
կել, ո՞չ Աւարդանն է դուրս գնացել բեմից:

Մէնքին յայտնի է, որ Վեսպանը ձիուց կամ կառ-  
քից վէր գալուց յետոյ իսկոյն չի ներկայանում, այլ  
գնում է առաջ իրա համար պատրաստած օթեանը, տէ-  
րութեան Վախարարը յայտնում է թագաւորին, սա  
նշանակում է ունկնդրութեան (առդիենցիայի) օրը և  
ժամը, և դեսպանը ներկայանում է: Աս կարգը  
նշան է պատուոյ և շքեղութեան ո՞չ միայն դեսպա-  
նի, այլ և տէրութեան համար, և ամենայն ազգաց մէջ  
միշտ և անխափան կատարուել է և կատարուում է:

Եթէ հասարակ դեսպանի ընդունելութեան համար

էս կարգը պահպանուած է, մի թէ ՊՊԻԿ Իշխանի  
 համար, որ թողաւ ի կողայը էր, չէր պահպանուիլ,  
 Ի՞նչպէս կարելի բան էր, որ նա ձիաց կամ կառքից  
 վեր կհաւ թէ չէ, իսկոյն, ճանապարհի շրեքով, թա-  
 դաթաթախս էն էլ գիշերով, ներկայանար . . . Ի՞նչ  
 էնքան վսեմ գործով էր կելլ, որ չէր կարելի մէկ  
 վայրկեան էլ յետաձգել: Է՛հ, պ. Արեւնեանց, էգուէս  
 շատապաւ և թողաթաթախս ներկայանում է միայն սուր-  
 հանգակը (կուրիերը) և ո՛չ թէ գեապանը, էն էլ թա-  
 դաւ ի կողայը գեապանը. Ադ տեսակ ներկոյնալը մեծ  
 անպատու թիւն կրկնէր ՊՊԻԿի համար. նա երբէք  
 չէր համաձայնիլ էգ տեսակ ընդունելութեանը և Հայոց  
 կողմանէ էլ շատ անվարդութիւն կրկնէր էգքան ստորաց-  
 նել Արաց թագաւորի պատիւը: Արեւն հարկաւոր էր, որ  
 Հմայեակը ներս գար և յայանէր գեապանի գալը, Աւր-  
 դանը պէտք էր անային խաչաւորդ կազմէր և աուգիւնն  
 ցիայի ժամանակ նշանակէր, և ո՛չ թէ ասէր՝ Բ՛նդ Գոյ:  
 Աւրդանը և ՊՊԻԿը շատ լաւ գիտէին թագաւորական  
 պաշտաների հանգէաները (ցերեմանիալները) և իրանց  
 ժամանակի գիպրամատիքական կարգերը. նրանք թոյլ  
 չէին տայ էգ պիտի անպատու թիւն. Ի՞նչպէս կարե-  
 լի էր, որ Աւրդանը ասէր Բ՛նդ Գ. . . էգ ի՞նչ անբա-  
 դաբաւարութիւն է. . . մի թէ չէր կարելի ասել՝ ասա՛ կա-  
 թէ է՛ք կամ կա՛ ի էր, կամ ինքրե՛ք. . . կամ մէկ ուրիշ  
 քաղաքաւորի ձեով:

Համազասար խաչաւորդ առաւ իրա որդի Աւրդանին  
 շատ զգուշութեամբ վարուել Արաց գեապանի հետ և  
 Աւրդանը մեծ եռանդով խոտուցաւ ճշգութեամբ կատա-  
 թիլ նրա խորհուրդը. բայց հիմի մէնակ մնալով փոխում է  
 իրա սուած խօսքը և ասում է՝ չէ, իմ խօսքս պիտի  
 լինի պարզ և աննե՛նգ: Մի թէ Աւրդանը էգ պիտի վատ  
 պղի էր. . . մի թէ էնքան խաբեբայ և ցածրահոգի մար-  
 դ. հաճոյ վարարչոյ էր, որ մինչև իրա հօր մօտ էլ սուտ

էր խօսում և քննեցնելով նրան հիշեալ հնազանդու-  
թեանը, ինքը իրա իմացածն էր անում: Այն պ. Ար-  
րիկեանց, խնդրում ենք, հղափոխ այլանդակ բնաւորու-  
թիւն չընծայէք մեր ազգի երեւելի և սուրբ նահապետի  
քաջ Արդանին:

Համազասպը խորհուրդ տուաւ Արդանին զհո-շո-  
ւեամբ զբո-լի դեպքանի հետ, և Արդանը խօսք տու-  
աւ. հիմի մէնակ մնալով ցանկանում է փոքր ինչ Ար-  
սից խորամանկութիւն դործ ածել: Այն թէ զգուշութիւնը  
և խորամանկութիւնը մի և նոյն միտքը ունին, որ Ար-  
դանը հարկաւոր համարեց ունենալ, բայց յետոյ ասաց,  
թէ Հայր չ'ունի: Այն թէ խորամանկութիւն բառով հաս-  
կանում ենք դիպլոմատիքական թափանցողականութիւնը,  
նրբացեալ քաղաքակրթութիւնը և ժամանակակից հան-  
գամանքին յարմարիլը, էդ Արդանն էլ ունէր, ամե-  
նայն հանձարեղ Հայ էլ ունի. էդ տեսակ խորամանկու-  
թիւնը պտուղ է հասունացած խելքի և հեռատեսու-  
թեան, ուրեմն Հայոց պանծալի յատկութիւններինց մէկն  
է: Իսկ եթէ խորամանկութիւն բառով պէտք է հաս-  
կանանք ցածր նշանակութիւնը, ո՞՞, խաբէբայութիւն,  
ստախօսութիւն և այլն, հղափոխ խորամանկութիւն չէր  
ցանկանալ Արդանը և ըսկի հարկաւոր էլ չէր նրան:

Արեւմտեանում ենք, որ Արդանի մէնակ մնացած  
ժամանակը ասած խօսքերը բովանդակում են իրանց մէջ  
սկներե հակասութիւն. Արդանի բնաւորութեանը այ-  
լանդակութիւն և անհիմն հակացողութիւն խորաման-  
կութեան: Իմ կարծիքով էդ պարբերութիւնը ըստ ա-  
մենայնի տեւորդ է, ոչինչ նպատակ չ'ունի և միայն էն  
մտքով է կայցրած, որ Արդանը մէնակ մնալով լուռ  
չըլկենայ բեմի վրա, այլ մէկ բան խօսի. . . . Այն թէ  
հղափա է, ուրեմն լուռ կըլնէր, որ պ. Արիկեանցը վե-  
րագրեալ պարբերութեան տեղ զրէր զանազան կարծիքեր,  
որ կ'որսող էր ունենալ Արդանը դեպքանի գաղտեան

պատճառաւ ին ժամանակը ոչ խորամանկա-նի-ն և ոչ պարզ և անհետք բառերը մէջ կ'ընկնէին, ոչ հակասութիւն կրօնաազանար և ոչ բնաւորութեց փոփոխութիւնս Հմայեակի առաջնորդութեամբ ներս են գալի ջր-ջիկ, Մարդպետ և Քաղաքատունի իշխանքը:

Ջրջիկ: Սղջոյն Չեզ, մեծ և փառաւոր իշխան Հայոց: Արքայան (համբուրելով ջրջիկին) Սղջամբ տեսի զ' զ ( ) արքայազն իշխան Արաստանի, ( ) ինչպէս են, առնող են մեր եղբայր Աղզգէնը և մեր սիրելի իշխանքն Արաստանի:

Ջրջիկ. Շատ լաւ են և շատ սիրոյ և յարգանաց սղջոյն կրնուիրին Չեզ, և ահա իմ եղբայր Աղզգէնը մեր ազգի հոգևոր և մարմնաւոր առաջնորդաց խորհրդովը այն նամակը յատուկ իմ ձեռամբ յանձնուի է ձեզ, որովհետև ընտանեկան գործքի համար է (տալիս է նամակը) և կ'յաւաստմի (յոյս ունիմք), որ անտես չէք առնել (չէք անիլ) այդ նամակի մէջ գրած խնդիրքը կատարելու:

Արքայան. Շատ բարի ( ) արքայազն իշխան (արքայազն իշխան), ( ) դուք երկար ճանապարհից գալով վատտակած կը լինիք, հրամայեցէք ձեզ համար պատրաստած օթեանումն հանգստանալ, ( ) մենք կ'կարդանք նամակը և վաղը կ'տնօրինենք ինչ որ արժանն է: (Քառնալով դէպի Հմայեակը) Հմայեակ, տար իշխաններին իրանց համար պատրաստեալ սուէնք, հրամայէ ստները լուանալու ջուր տալ, և կատարեցէք ինչ որ կ'վայել է (կը վայելէ կամ վայել է) մեծապատիւ հիւրերի ասպնջականութեան օրէնքին:

Հմայեակ: Շատ լաւ, սիրելի եղբայր (Շատ լաւ, սիրելի եղբայր), յոյս ունիմ, որ կարողանամ Հայոց ազգի հիւրասիրութեան բոլոր պայմանները կատարել:

Ջրջիկ. Մնաք բարեաւ, մեծ իշխան: Արքայան. Քնաք բարեաւ ( ) արքայազն իշխան:

Բաւական չէ, որ Թագաւորի եղբայր Սփիւկին ալ  
 Վարինեանցը շինել է հասարակ սուրհանդակ (կուրիեր)  
 և առանց հանգստանալոյ իսկոյն տուն բերեց Վարդանի  
 մօտ, հիմի Վարդանն էլ ընդունում է նրան էլի նոյն նը-  
 շանակութեամբ և կանգնած է խօսում հետը: Բայց  
 հղպիսի անքաղաքավարութիւն երբէք չէր անիլ Վար-  
 դանը: ըստ որում նա, գուրով սպարապետ, լաւ գիտէր,  
 թէ անվայելուչ է Թագաւորացն Իշխանի համար հղ-  
 պիսի ընդունելութիւնը:

Պատմութիւնից գիտենք, որ էն ժամանակը Հայերը  
 Թագաւորութիւն չ'ունէին, իսկ Վրացիքը ունէին. ու-  
 բնմն ո՞ր քաղաքականութիւնը կրնէրէր հղպիսի վարմունք,  
 էն էլ սպարապետի կողմից: Մի՞թէ Սփիւկին էլ էն-  
 քան չէր հասկանում իրա արքայացն ծագումը, իրա դեւ-  
 պանական պաշտօնը և իրա Թագաւորի պատիւը, որ  
 հղքան տեղը ստորացնէր իրա անձը, թոյլ տար, որ իրան  
 ներկայացնեն սպարապետի առաջը ճանապարհի թո-  
 զոտ շորերով և ներս մանելուց յետոյ էլ չըհրաւիրեն  
 նստելու: Այժմ պ. Վարինեանցը կարծում է, թէ Վար-  
 դանը և Սփիւկը չէին հասկանում հղքան տեղը, պէտք  
 է մտածէր գոնէ, թէ նրանք երկուսն էլ շատ յարակ-  
 ցութիւններ են ունեցել իրանց ժամանակակից և հա-  
 բեան ազգերի հետ, այն է՝ Պարսից, Հունաց, Հռով-  
 մայեցաց, և այլն, և թէ նրանք շատ լաւ գիտէին հղ-  
 ազգերի քաղաքականութիւնը և դիպլոմացիան: Էն ժա-  
 մանակուայ ազգերը, ՚ի թիւս որոց Հայք և Վրացիք,  
 շատ ճիշդ էին պահպանում հանդէսները (ցերեմանի-  
 անները), առաւել ճոխութեամբ և մեծաշքութեամբ  
 էին կատարում, քան թէ ներկայումս: Աւրեմն, ի՞նչ  
 պէս կարելի է, որ Վարդանը և Սփիւկը չըգիտենային  
 և չըկատարէին: Լաւ չէ, պ. Վարինեանց, առանց յը-  
 տածելու գրելը: ըստ որում հղպէս անմտադիր գրելու  
 էսպիսի այլանդակ յատկութիւններ են դուրս գուլի և

էսպիսի արտաիք են գրուում անձաւորութեանց (պերսոնալ) վրա, որպիսիք նրանք երբէք չեն ունեցել:

Անբեւումը տեսանք, որ Արդանը հրամայեց Հմայեակին ամէն բանը պատրաստել դեսպանի ընդունելութեան համար, և Հմայեակն էլ (փոքր ինչ անձնապարծութեամբ) միամտեցրուց իրա եղբօրը խոտանալով, թէ ցոյց կըրայ Հայոց ազգի հիւրասիրութեան պայմայմանները: Հիմի էս տեսարանումը Արդանը նոր մէկանց, էն էլ դեսպանների ներկայութեամբը, կրկնում է նոյն հրամանը և Հմայեակը նոր մէկանց կրկնում է իրա խոտանումը: Հարցնում ենք՝ ընչի՞ն էր հարկաւոր էս կրկնութիւնը... ո՞չ ապաքէն Արդանի պատուէրը և Հմայեակի պատասխանը բոլորովին աւելորդ են, մանաւանդ Սօջիկի և միւս իշխանների ներկայութեամբը, ըստ որում էդ անպատուութիւն է նրանց համար: Քայց պ. Աարինեանցը երկու նպատակաւ է կրկնել էս տեղ մի և նոյն բանը. նախ էնդուր համար, որ կամեցել է դեսպանների ընդունելութեան խօսակցութիւնը փոքր ինչ երկարացնել, երկրորդ՝ աշխարհաբառ գրութեան մէջ գրաբառ տարբարակութիւնը բառը մուծանել և էնդրով ցոյց տալ իրա հայկաբանութիւնը: Հաւատացէք ինձ, որ էդ բառը բազմականների և ընթերցողների ութերորդ մասը անգամ դժուար է հասկանում: Այլ ի՞նչ է էդ տեսակ խրթին բառեր գործ ածելու նպատակը աշխարհաբառի մէջ:

Երբ որ դեսպանները և Հմայեակը դուրս են գնում, Արդանը մէնակ մնալով բեմի վրա, զանազան կարծիքներ է արտասանում նամակի մասին: Վալիս են Համազասպը, Հմայեակը և Համազասպեանը: Արդանը առաջ է գնում, համբուրում է հօր ձեռքը և նստեցնում է թախտի վրա: Համազասպը հրամայում է Արդանին նստել իրա մօտ, իսկ միւս որդիքը ձեռքերը կուրծքին դրած կանգնում են իրանց հօր և մեծ եղբօր

Հանդէպ Վարդանը հարցնում է հօրից, թէ արդեօք  
 Հանդիսա քնեցաւ էս գիշերս Համազասպը պատանխա-  
 նում է, թէ հանգստութիւն չըկայ նրա համար, ըստ  
 որում Հայաստանը տատանում է այլեկոծեալ նաւի նը-  
 ման և Վրչակունեաց վերջին սերունդը Վնուշավանի  
 բերդումն է բռնած, Յետոյ հարցնում է դեսպանու-  
 թեան պատճառը. Վարդանը յայտնում է, թէ ջո-  
 ճիկ իշխանը նամակ բերեց և ասաց, թէ ընտանեկան  
 գործքի մասին է. Համազասպը հրամայում է բաց ա-  
 նել և կարգալ:

Էս խօսակցութեանց մէջ հեղինակը գեղեցիկ է ցոյց  
 տուել Համազասպի հայրենասիրութիւնը, նրա եռան-  
 դոտ և տրամալից սիրտը, նրա ցաւակցութիւնը հայրեն-  
 եաց վատաբախտութեան. և թէ ինչպէս հին ժամա-  
 նակումը որդիքը պատիւ էին տալի ծնողաց և փոքր եղ-  
 բայրները մեծին:

Վարդանը բաց է անում և կարգում է Վաղգէնի  
 նամակը: Էս նամակի մէջ գոված են Հայոց կանայքը  
 և էս պատճառաւ Վաղգէնը ընտրում է իրա համար  
 կին և Վրաստանի համար մայր Հայաստանի դուստրը,  
 Վարդան ապարապետի էրեց դուստր ամենօրհնեալ Շու-  
 շանիկին և խնդրում է ուղարկել նրան դեսպանների հետ  
 Վալասանաց շախազանցութիւնը պարզ ցոյց է տալի,  
 թէ էդ նամակը Վրացու հեղինակութիւն չէ, ըստ ո-  
 ըսւմ Վրաց թաղաւորի ազգային վառասիրութիւնը.  
 (ամբիօն նասիօնալ) շէր ներիլ նրան էդքան գովա-  
 սանք տալ օտար ազգի կանանց: Վիցուք, թէ Վաղգէ-  
 նը էդքան գովասանաց արժանի էր համարում Հայոց  
 կանանցը. բայց մի՞ թէ էդ էր միայն պատճառը, որ նա  
 Հայաստանու դուստր ընտրեց իրա համար կին: Ոչ,  
 պօ հեղինակ. էդպէս չէ. այլ զլիաւոր պատճառը էն  
 էր, որ Հայոց դաշնակցութիւնը անշուշտ հարկաւոր էր  
 նրան էն ժամանակուայ հանգամանացը մտիկ տալով:

1002  
 8130

էդ նրա քաղաքականութեան հետեւանքն էին. Մէկ էլ որ ինչքան ուղում է հաւանած ընէր Ապոստոլը (Շուշանիկին, (որին տակաւին չէր էլ տեսել), այնու ամենայնիւ չէր կարող ընծայել նրան ամենօրհնեալ անականը, ըստ որում էդ պատուանունը վայել է միայն սուրբ Աստուածածնին, և ինչպէս Ապոստոլի ժամանակումը, էնպէս էլ միշտ, ամէն տեղ և ամէն ազգք ընծայել են և ընծայում են էդ անականը միայն Աստուածածնին. իսկ Շուշանին կարող էր Ապոստոլը պատուել պարկէշաստան, աստիճանաշար, Բարեբոհի և ուրիշ արանց նման անականներով :

Ամաւիւր կարդալուց յետոյ Համազասպը հարցնում է իրա որդւոց միտքը. Արդանը պատասխանում է՝ «մեր միտքը «յն (էն) է՛լինի (կը), ինչ որ դուք է՛հրամայէք (կը)» Համազասպը պատասխանում է՝ «մեր ազգը ներքին և արտաքին թշնամիներից տկարացած (,) նման է կիսամուռ հիւանդի . . . ուրեմն պէտք է կամ Շուշանիկին կորցնել խարդախ և մտասակար թշնամիից ազատուելոյ համար և կամ մեր տուն ու տեղը վեր առնել և օտար տէրութիւն քաշուել, և ողորմելի ազգը թողնել անտէր և անօգնական. Այժմ դու հայր ես, քրննիր և տե՛ս. կամ քո դուստրը պէտք է զոհես, կամ էսպիսի վտանգաւոր ժամանակ Ապոստոլին և բոլոր Արաց ազգը թշնամացնելով քո ազգը զոհես դասերդ համար»

Եթէ Համազասպը վախենում էր բաց ասել Ապոստոլին, մի՞թէ Ապոստոլն էլ չէր հասկանում, թէ Հայք նեղացած են ներքին և արտաքին թշնամիներից. իսկ եթէ հասկանում էր, ապա ուրեմն էն էլ կըհասկանար, թէ Հայք պատիւ և օգուտ կըհամարեն իրանց համար իրանց սպարապետի աղջիկը տալ Արաց թագաւորին և էդ հնարքով ազատ մնալ նրա թշնամութիւնից. և եթէ էս դրութիւնը հասկանում էր Ապոստոլը, ուրեմն ընչի՞ն էր հարկաւոր էնքան մեծ թախանձանօք և մինչև



երկինքը դովասանք տալով խնդրելը . . . Այս կարող էր  
 պատուասիրութեամբ առաջարկել առանց ստորացնելու  
 իրա թագաւորական պատիւը, ըստ որում կհամեմատեմ  
 հետո Հայաստանի սպարապետի դուստրը թագաւորի ա-  
 մուսին տեսնելը էն ժամանակուայ Հայոց համար մեծ  
 փառք պէտք է համարուէր: Աւրեմ տեսնում ենք, որ  
 Աղգէնի բերնից հեղինակած նամակի և Համազասպի  
 խօսակցութեան մէջ շատ մեծ հակասութիւն կայ մտայ:

Աւրդանը պատասխանում է «Այթ Հայոց աղգի  
 փրկութեան համար հարկաւոր է զոհ, ես պատրաստ եմ  
 ողջակէզ մատուցանել ոչ միայն Շուշանիչը, (կին) այլ և  
 բոլոր սրգիքս, իմ ամուսինը և անձը.» Ստեղծ էսպիսի  
 վեհանձն խօսքերը, որք ցոյց են տալի Աւրդանի եռան-  
 դատ հայրենասիրութիւնը, Համազասպը փրկում է Աւր-  
 դանին, համբուրում է նրա բերանը, պատուիրում է  
 միւս սրգուցը համբուրել իրանց մեծ եղբօր ձեռքը և  
 այսուհետև հայր ճանաչել նրան . . . որդիքը կատարում  
 են հօր հրամանը, և խոստանում են հնազանդ մնալ . . .  
 հայրը օրհնում է նրանց, յետոյ ասում է «վէր կա-  
 ցէք, որդիք, Շուշանիկի մասին մեր խորհուրդը վերջա-  
 ցաւ. հրաւիրէք դեսպաններին և խօսեցէք հարսնախօ-  
 սութեան պայմանների վրա. ես կ'երթամ աղօթք կա-  
 նեմ ձեզ համար, (գուրս է գնում.) Աւրդանը հրա-  
 մայում է Հմայեակին հրաւիրել դեսպաններին. (Հմայ-  
 եակը դուրս է գնում.) յետոյ ասում է Համազաս-  
 պեանին՝ «իմ որոշմունքս արդէն հաստատ է, որ իմ նա-  
 զելի Շուշանիչը (կին) ընդունելի պատարագ մատուցանեմ  
 իմ աղգի օգտի համար. բայց լաւ չէր լինի արդեօք նախ  
 քան Արաց իշխանների գալը էս խորհուրդը յայտնէինք  
 ձեր հարս Վաստիկին»: Համազասպը պատասխան է տալի՝  
 «դեռ խօսեցէք հարսնախօսների հետ. կարելի է բանը զը-  
 լուխ չէ գալի, ինչո՞ւ 'ի զուր տեղը վրդովինք Վաստիկի  
 մայրական քնքուշ սիրտը: Այլ ասան նրանք դալիս են.»

Եւ վերջին պարբերութեան մէջ երկու անձուսի որ խալմունք կան, Արդանը առաջ հրամայում է կանչել դեսպաններին, յետոյ ասում է, թէ լու կրնիք, որ նրանց գալուց առաջ յայտնէր խորհուրդը իրա կրնկան, Այն թէ Արդանը էդքան ցնորուած մտքի տէր էր. . . Արան պատասխանում է Համազասպեանը, թէ հարկաւոր չէ, կարելի է բանը գլուխ չի գալի և այլն, Ի՞նչ պատճառաւ կարող էր բանը գլուխ չըգալ, երբ որ Աղգէնը և Ծղիկը խնդրել են, Համազասպը, Արդանը և եղբարքը վճռել են. . . Էլ ի՞նչ էր մընացել, որ հարսնախօսների կողմից կարող լինէր արգելք դառնալ: Այն թէ ասեմք, թէ էնպիսի պայմաններ ունէին առաջարկելու, որոց կարող էին չըհամաձայնիլ դեսպանները, էդ էլ չըկայ, ինչպէս կրտսանեմք շարունակութիւնից: Արեմն էս վերջին խօսակցութիւնը բոլորովին աւելորդ է, և կայրած է միայն էն նպատակաւ, որ Արդանը և Համազասպեանը մէնակ մնալով բեմի վրա լու չըկենան մինչև դեսպանների գալը:

Այստեղէք, որ էս առաջին և երկրորդ տեսարաններումը եօթն դործող անձինք են, այն է՝ Համազասպ, Արդան, Հմայեակ, Համազասպեան, Ծղիկ, Արդայեա և Քաղրատունի: Այդ անդադար գալիս են և դուրս են գնում, իսկ խեղճ Արդանը բեռած մնացել է բեմի վրա երկու օր շարունակ, ո՛չ հաց ուտելու է դնում և ո՛չ քնելու: Արկու օր է խորհուրդ են անում աղջիկ մարդու տալու, բայց Արդանը դեռ չի խօսացել իրա կնկայ հետ. . . մէկ անգամ ցանկացաւ էլ կանչել իրա կնկան և խօսիլ, բայց Համազասպեանը չըթողուց: Տեսէք, թէ ի՞նչքան գերբնական համբերութիւն ունի էս Արդանը, որ երկու օր անքուն մընալուց և սաստիկ ծամ պահելուց յետոյ, յանձն է առնում հանդիսաւոր ունկնդրութիւն (աուդիենցիա) տալ դեսպաններին: Արեւի է խեղճը կրկարծէր իրա մտքու-

մը, թէ էս առողջիւնդիսն կալ՝ ի կրնի, և վե՛ջանալոց  
 յետոյ, ինքն էլ ժամանակ կըձարի մէ թիքայ հաց ու-  
 անլու և քնելու . . . բայց խեղճի էդ յոյսն էլ չըկա-  
 տարուեցաւ (ինչպէս կըտեսնենք շարունակուած թիւնից . )  
 ըստ որում եկաւ Արացի Գ. ջիկը և շատ երկար ճառ  
 կարդաց գովելով Հայերի աղջկերանցը և ցեխի հետ հա-  
 լասարելով վրացիներին . . . յետոյ (թէպէտ գրած է Տե-  
 սարան Ա. սակայն Արդդանը էլի անշարժ մնացել է  
 բեմի վրա) ներս է գալի Աստիկը և շատ երկար խո-  
 սակցում է իրա մարդու հետ. յետոյ գալիս է Շու-  
 շանիկը. յետոյ գալիս է Հմայեակը և ասում է. թէ  
 ամէնքը պատրաստ են ճանապարհ ընկնելու. յետոյ ե-  
 ղում են ղորքը, երգում են և յետոյ ամէնքը դուրս են  
 գնում և վարագոյրը վէր է գալի. ապա թէ խեղճ  
 Արդդանը ազատուում է հեղինակի տուած պատիժից .  
 էգպէս չէ կարդը, պ. Արիւնեանց. և նոյն իսկ բա-  
 նականուած թիւնը ցոյց է տալի, թէ էս երեք տեսարան-  
 ները հարկաւոր էր բոլորովին ուրիշ տեսակ կարգաւա-  
 ըել. Ահտք էր, որ Արդդանը դուրս գնար բեմից առա-  
 ջին տեսարանի վերջումը. Բայց որովհետեւ երկրորդ տե-  
 սարանի սկզբումը նա էլի բեմի վրա է, վասն որոյ հար-  
 կաւոր էր էս երկրորդ տեսարանին ուրիշ սկիզբն տալ .  
 դ՞. կարելի էր, որ Համազասպեանը և Աստիկը ներս  
 գային, առաջինը պատմէր, թէ ի՞նչ պատրաստուած թիւն-  
 ներ են լինում, ո՞ւմ համար են. էս տեղ կարող էր նա  
 պատմել էն արժանաւորուած թիւնները Հմայեակի, որ Հը-  
 մայեակը ինքը պատմեց Արդդանին 4 երեսումը. Յե-  
 տոյ ներս գար Արդդանը և այլն. Արկրորդ տեսարանը  
 աւելի հանդիսաւոր կարող էր վերջանալ էսպէս՝ Այլը որ  
 Համազասպը օրհնեց իրա որդւոցը, կարող էր ասել Ար-  
 դդանին, որ լաղի- հանդիսաւոր ունկնդրուած թիւն նշանա-  
 կի դեսպաններէ համար և խօսի հարսնախօսուածեան պայ-  
 մաններէ մասին. Արդդանը ուղարկէր Հմայեակին էդ,

տնօրէնութիւնը դեռ պաննիին յայտնելու. յետոյ ինքը  
 և իրա փոքր եղբայրը ընկնէին ծերացած հօր թեքերի  
 տակը և հնապէս գուրս գնային. Արրորդ տեսարանը ա-  
 ւելի լաւ կը ընէր սկսել հսպէս՝ ներս են մտնում Շու-  
 շանիկը և նրա գայեակ Սանգուխտը. վերջինը ծածկա-  
 բար յայտնում է Շուշանիկին, թէ նրան նշնում են.  
 Եւ տեղ կարելի էր ցոյց տալ. թէ ի՞նչ տեսակ սը-  
 նունդ և կրթութիւն է ստացել Շուշանիկը, ի՞նչպի-  
 սի քրիստոնէական առաքինութիւններ ունի, և այլն և  
 այլն. յետոյ կարող էր գալ Ղասաիկը, յայտնել, թէ  
 սուղիենցիայի ժամանակը հասել է, և բոլորը գուրս  
 գնային. Յետոյ գային Վարդանը, Համազասպը և Հա-  
 մազասպեանը. վերջապէս գային Հմայեակը և դես-  
 պանները:

Էսպիսի կամ ուրիշ սրա նման կարգաւորութիւնը եր-  
 կուօգուտ կ'աւնենար. մէկ, որ ցոյց կը տար Շուշանիկի  
 շատ յատկութիւնները, որք ծածկած են մնացել հե-  
 ղինակութեան մէջ, երբ որ սրա յատկութիւնները ա-  
 մէնից աւելի պէտք էր հանգիսացնել, ըստ որում գրե-  
 խաւոր առարկան է հեղինակութեան. և երկրորդ՝ խեղճ  
 Վարդանը կ'ազատուէր երկու օրու այ քաղցածութիւնից և  
 անքուն մնալից. Քայց պ. Վարինեանցը չի կամեցել նե-  
 դութիւն տալ իրա ազնիւ գլխին հսպիսի մտածմունք-  
 ներով և շրջանկատողութիւններով, և հստրով ցոյց է  
 տալի մեղ, թէ թէատրոնական արհեստի միջումը տա-  
 կաւին համբակ է. Աւելի լաւ կը ընէր, որ գրելու ժա-  
 մանակը յետ գնէր անձնապատասխանութիւնը և խորհուրդ  
 անէր հմուտ և տեղեակ անձանց հետ. . . բայց նա չի կա-  
 մեցել, ուրեմն կրկնենք Ռուսաց առածը БОЛЬНОМУ БОЛЯ,  
 СИАСЕНОМУ РАИ (Ղաաթին կամք, ճգնաւորին գրախտ),  
 և շարունակենք մեր նկատողութիւնքը:

Ներս են մտնում Սփրիկ, Վարդպետ և Քաղբա-  
 տունի իշխանքը. Վարդանի հետ սովորական սղջունա-

տուութիւնից յետոյ նստում են կարգաւ : Արդանք  
 յայտնում է, թէ կարգաց Աղգէնի նամակը իրա հօր  
 և եղբարց մօտ, և շատ ուրախ է (1), որ նա ցանկանում  
 է ազգականութեան շարկապով հաստատել բարեկա-  
 մութիւնը : Չ'ըջիկը պատասխանում է, թէ էդ մէնակ  
 Աղգէնի ցանկութիւնը չէ, այլ և բոլոր Արաստանի  
 ցանկութիւնն է : Արդանք հարցնում է՝ «բայց մի՞ թէ  
 Արաստանումը Աղգէնի արժանաւոր աղջիկ չըկար, որ  
 նա Հայաստանիցն է իրա համար հարս ընտրում : Եւ  
 հարցմունքին Չ'ըջիկը շատ երկար պատասխան է տալի՝  
 որ թէպէտ ձանձրալի կրնի, բայց ես հարկաւոր եմ հա-  
 մարում բառ առ բառ դուրս գրել էս տեղ ընթացող-  
 ների նկատողութեան և անաչառ քննութեան համար :

«Արաստանումը աղջկերք և գեղեցիկ աղջկերք շատ կան,  
 բայց մայրեր չըկան ( 2 ) մարդկութեան, քրիստոնէա-  
 թեան և ազգակցութեան սրբազան պայմանները կ'պա-  
 հանջեն, որ մեր խօսակցութիւնը ո՛չ պարսկական խո-  
 բանակցութեամբ լինի և ո՛չ յունական սնապարծուք,  
 ( 3 ) մեր այսն՝ այո պէտք է լինի և ոչն՝ ոչ : Արեւմե-  
 իշխան, ես այս սրբազան պայմաններին հնազանդելով,  
 և ինձ և իմ աշխարհքին անարդանք չըհամարելով պար-  
 ջապար (պարզաբար) յայտնում եմ ձեզ իմ ներքին վիշ-  
 տերը և կարծեմ թէ այս պիտի լինի մի ազգի երջանկու-  
 թիւն ցանկացող անձրնի թացքը (անձին ընթացքը)»

Իրա ազգի պակասութիւնները օտար ազգի մօտ պա-  
 խարակելը մեծ ամօթ է և երբէք ազգի երջանկութիւն  
 ցանկացող անձին դորձ չէ : Միայն յիմարը և ազգի  
 ուրացողը կարող է էդպէս վարուել, այլ իսկական ազգա-

(1) Արեւումը Արդանքը ցանկանում էր վերջ ինչ պարս-  
 կական խորամանկական ունենալ . . . Ահա՛ նրա ուղեցած խորաման-  
 կականը, ըստ որում սրտումը ուրախ չէր և զոհում էր իրա աղջ-  
 կան, իսկ էս տեղ ասում է՝ շատ ուրախ է :

սէրը իրա ազգի պակասութիւնները տանելու ցոյց կը տայ իրա ազգին (և ո՛չ թէ օտարի մօտ) և կը յօրհարէ էն պակասութիւնները բնաջինջ առնել: Պ. Վարինեանցը լսել է, թէ զանգակ են ածում, բայց չըզխտէ, թէ ո՛ր է կեղեցումը: Ազգի պակասութիւնները ուրիշ ազգերի մօտ ծածկելը ո՛չ պարսկական խորամանկութիւն է և ո՛չ չինիմաչինական: ազգի գովարանելը օտարների մօտ ո՛չ յաւնական սնապարծութիւն է և ո՛չ բաբիլոնական, այլ երկուսն էլ իսկական ազգասիրի և հանձարեղ մարդոյ պարտաւորութիւնքն են և բնատուր յատկութիւնքը: Աւրեմն անհիմն է պ. Վարինեանցի դատողութիւնը:

«Մեր Արաստանումն արժանաւոր ճայեր չ'ընկելով (.) ապահանգ-ել է լարտ - Բարտը» (.) մեր Արաստանի կանայքը չ'ուենին հոգս իրանց տուն ու տեղի վրայ սկսած արքունի պալատից մինչ 'ի վերջին ռամլի տունը չես գրանում իրա ժամանակէն պաշարեղինաց պատրաստութիւն, (.) մեր սովորական խօսքն է «վողն ու վողոցը» (.) ես (.) քանիցս անգամ Վարսկաստան գնալիս անցե (անց եմ) կացել Հայաստանից, (.) գնում ես մի գիւկամ քաղաք քանի մարդով կ'ուզես, կէս գիշերին վեր (վեր) արի մի անձանս թի դուռը (գրանը), իսկոյն ընդ առաջ կը վազեն պասուով և ուրախ դէմքով կը հրաւիրեն իրանց բնակարանը, ոտները և ձեռները կը լուսնան, առատ սեղան կ'պատրաստեն. ձիերի համար մը տաճել անգամ հարկաւոր չէ, նորանք ևս իրանց սեղանն ունին: Քանի որ կամիս կանց, կե՛ր, խմէ՛, հարցնող չ'կայ, ո՛վ ես, ի՞նչ տեղից ես գալի, կամ երբ և ո՛ւր կ'երթաս: Այս ամէնը հոգացող տիկնոջ շնորհքն է: Իսկ Արաստանումը եթէ գիշեր ժամանակ մինի տունը գնացիր (.) թէ գիւղ լինի (.) թէ քաղաք՝ քաղցած պիտի քնես, որովհետեւ ինչ որ չ'ուենի ի՞նչ կ'ուտեցնէ, (.) Արաստանի կանայքը աշխատութիւն չեն սիրել:

նորանց դորձքն է զուգուիլ , զարդարուիլ և ման գալ . դեռ  
 այս ոչինչ , ( . ) օրէցօր առաջանալիս շատանում է : Պար-  
 սիկներին տեսնում են , նրանց ձևը , նրանց շարժմունքը  
 նրանց շորերը և նրանց դէմքերը և մազերը ներկելն են  
 վեր առնում : Հաւնատաանից եթէ մին կին եկաւ , իս-  
 կոյն նրանց ձևն են վեր առնում , մինչև անգամ սա-  
 ընցի Նկզինների մտա ուրիշ բան չ'զտնելով ( , ) նորանց  
 պար խողալու ձևն են վեր առել , և կրտսննետ ( , ) սը  
 ամէն գռան առաջ կամ կտրի վրայ մտա եղած հարս-  
 ներ և աղջկերք առաւօտից մինչև 'ի մութը թմբուկ կ'ա-  
 ծնն և լէկկէվար կ'իսաղան : Մեր երկառարդները ծե-  
 րերուն չեն հնազանդիլ ( հնազանդում ) , ( . ) մեր երկառ-  
 արդների մէջ ապականութիւնը այնքան տիրել է , որ  
 հա-տար անգամ նորասիրութեան կարգումն են դնում :  
 Քանիցս անգամ լսել ենք սոցա բերնից , թէ կրօնը պէտք  
 է հնադարի զօրո-ւեան , և ոչ թէ զօրո-ւի-նը կրօնիս : ( Թէ-  
 պէս մեր հողէսը հովիւները , մեր խոհական ծերերը շատ  
 են խօսում և խրատում բառնալ այդ կորստական ըս-  
 կըքունքները , բայց 'ի զուր : Մ.յս պատճառաւ է , որ  
 Արաստանը Հայաստանից մայրեր է խնդրում , մայրեր ,  
 որ իրանց որդիքը ( սրդկերանցը ) իրանց կաթով սնու-  
 ցանեն և ոչ թէ Արաստանի կանանց պէս օտարի կա-  
 թով մեծացնեն իրանց որդիքը ( աւելորդ կրկնութիւն է ) .  
 մայրեր , որ մանկանց մատաղ մտաց մէջ ապաւորեն սէր  
 առ Մատուած և առ հայրենիս , մայրեր , որ իրանց որդ-  
 ւոց սրտերումը ապաւորեն Մատուծոյ երկիւղը և մարդ-  
 կանց ամսթը , և ինչպէս որ ապականութիւնը արքունի  
 պալատից սկսելով կիջնի ( իջանում է ) յետին ռամկի  
 տունը , նոյնպէս և առաքինութիւնը պէտք է նախ սկսէ  
 արքունի պալատից , և ապա աստիճան առ աստիճան  
 տարածուի ռամկի մէջ : Առ ի՞նչ տեղից կարող ենք զտնել  
 մեր ցանկացած մայրերը , ( . . . ) անհաւատ Պարսիկներէց ,  
 ( . . . ) Մատուած մի արասցէ , ( . ) զսուղ Հայներէց , ( . . . )

ոչ բնաւ, (.) բայց միայն Հայաստանից, որ նա (աւ-  
 ւերսրդ բառ) միայն (.) ինչպէս Արաստանի քրիստո-  
 նէական լուսով լուսաւորելու պատճառ դառաւ, նոյն  
 լոյսը անշէջ պահելու և առաքինական գործքերով նորա սր-  
 դիչ (որդւոցը) լուսաւորելու պատճառ կարող է դառնալ:

Էս երկար մտնորդի (ճառի) մէջ էնքան բառեր չը-  
 կան, որքան սխալներ, սուտ խօսքեր և ծուռ դատա-  
 դու թիւններ կան:

Արաստանումը քրիստոնէութեան սկզբնական դարե-  
 րումը բարեպաշտ և առաքինի մայրեր և կանայք հա-  
 ջարներով են եղել: Արա անհերքելի ապացոյցը տես-  
 նում ենք հոյակապ վանքերումը, եկեղեցիքումը և մա-  
 տուռներումը, որոց յիշատակագրութեանց մէջ դրոշմած  
 են մեծագումարնու իրատվութիւնքը երևելի իշխանազնու-  
 հեաց և տիկնաց, և հսպիսի հոյակապ շինուածքը ցր-  
 ուած են Արաստանու սարերումը և ձորերումը: Ծղի-  
 կը, որ Արաստանու թագաւորի եղբայրն էր, մի թէ  
 կարող էր էնքան տեղը ստորացնել իրա աղղը և տակ,  
 թէ Արաստանումը մայրեր չըլին: Արաստանու վարչ-  
 քարչը ապահանուել է, . . . ի՞նչ է նշանակում՝ ապահան-  
 սել է . . . էդ ո՞ր պատմութիւնիցն է բաղել պ. Արա-  
 րինեանցը: Աթէ իրան պ. Արարինեանցին պատահած ընկ  
 Արաստանու չքաւոր գիւղումը կամ տանը գիշերով վեր  
 դալ և քաղցած քնել, էդ ապացոյց չէ, թէ բոլոր Արաս-  
 տանցիք իրա ժամանակին պաշարեղինաց պատրաստութիւն  
 չ'ունին, էն էլ արքանի պալատից սկսած մինչև վերջին  
 ռամիկը: Մէկ ծիծեռնակը գարունքի նշան չէ. մէկ  
 օրինակը ընդհանուրի վրա չէ կարելի տարածել. մաս-  
 նաւորից չէ կարելի եզրակացնել բոլորը. ներկան նման  
 չէ անցեալին: Պ. Արարինեանցը չի կարող ցոյց տալ մեզ  
 պատմութեան կամ գոնեա Վեգենգայի (աւանդու-  
 թեանց) մէջ Արաստանցւոց վարուց և քարուց ապահ-  
 սանական կամ արհագրական օրինակ, ընդհակառակը



Արաստանի սրատմաթիւնը ցոյց է տալի մեղ, թէ հին  
ժամանակու մը անհնարին էր էդ երկրումը առանց պատ-  
րաստութեան ասլիլը: Ըստ որում Արաստանցւոց քա-  
ղաքական կեանքը միշտ վտանգի մէջ էր լեռնական և  
ուրիշ թշնամի ազգերի յարձակումներէց: Էս պատճա-  
ռաւ ամէնքը շինում էին իրանց աները բերի նման և  
շատ ցածր դռներով, որ ձիաւոր մարդ չըկարողանար  
ներս մանել, և ամէնքն էլ իրանց տարեկան պաշարե-  
ղէնքը պահում էին տանը:

Կանանց զուգուիլը և զարդարուիլը ոչ թէ պարսա-  
ւելի այլ գովասանաց արժանի գործ է, ըստ որում կինը  
իրան վայելուչ զուգամը, մսիթարութիւն է իրա մար-  
դուն, և ընկերութեան մէջ հոգի է քաղաքավարութեան:  
Իսկ հասարակական գաղափար ամէնքին յայտնի է, որ հին ժա-  
մանակու մը արևելեան ազգաց մէջ սովորական չէր: Ու-  
րեմն յ՝ զիկը հոգալիս խօսքեր երբէք չէր ասիլ Արաս-  
տանցի կանանց մասին:

Պարսիներանցը հասկացնում է, թէ Արաստանցիք  
սեպհական, ազգային, ոչինչ չեն ունեցել, այլ ամէն  
քեւ էր, շարժումները և ուղարկումները առնում էին Պար-  
սիկներէց, Հոյներէց և Եկզիներէց: Եւս սխալում  
է հեղինակը: Արաստանցիք միշտ ունեցել են իրանց ազ-  
գային սեպհականութիւնները, զ՞ո հազուադէպ, կե-  
րակրեղէնքը, և այլն: Իսկ եթէ ուրիշ ազգերէն էլ առ-  
նում էին նորաձևութիւններ, էդ պարսաւելի բան չէ-  
րստ որում ինչպէս հին ժամանակներումը, էնպէս էլ  
ներկայումս ամէն ազգեր, նա և շատ լուսաւորեալները,  
միշտ առել են և առնում են մէկ մէկուց ամէն սեպհ  
նորաձևութիւններ, ինչ որ հաճոյական է իրանց հա-  
մար: Պարսիների ժամանակակից Հայերը առնում էին  
Պարսիկներէց հազուադէպ, Հոյներէց և Հռոմ-  
մայեցիքէց զնսուորական արհեստը, քաղաքավարութիւնը  
քաղաքականութիւնը և կառավարչական կարգաւորու-

Թիւնքը . . . Մի թէ էդ ամեն կրօնաբանի նրանց, մի  
 թէ ուրիշ ազգից լաւ բանի օրինակ առնելը մնաս է . . .  
 Ար պատմութեան վրա է հիմնել պ. Արքիմեանցը, թէ  
 Արաստանցիք Վեկղիներին են առել լեկղեւար (լեկ-  
 ղինկա) խաղը . . . Նրանք թէ անունն է սխալեցնում  
 պ. Հեղինակին, Նէ, պարոն, էդպէս չէ . . . Նէր նա  
 անուանեալ պարը սեպհական Արաց ազգինն է և ոչ  
 թէ սարեցի լեկղերունը, իսկ անունը գրել են լեկ. նա  
 միայն էն պատճառաւ, որ Վեկղերը, մանաւանդ նրանց  
 աղջկերքը, գոյով 'ի բնէ թեթեաշարժ և ունենալով  
 բարակ, քնքուշ և գիւրաթեք մէջք, էդ պարի ձևերը  
 հնքան նրբացրին, մինչև որ Արացի աղջկայ կամ աղե  
 լաւ խաղալու ժամանակը իբրև գովասանք ասում էին լեկ-  
 ղեւար, ք, Վեկղու նման է խաղում:

Գլխիկը չէր կարող ասել, թէ Արաստանցի հար-  
 սները և աղջկունքը ամէն դրան առաջ կամ կտրի վրա  
 մտա եղած առաւօտուանից մինչև մութը ընթացիկ  
 և լեկղեւար կրօնական, ըստ որում էն ժամանակուայ ան-  
 գագար ա՛յ ու գողի մէջ կապուած Արաստանու հարս-  
 ները և աղջկերքը չէին կարող առաւօտուանից մինչև մութ  
 թը կորով պարապիլ . . . նրանք կրօնականային էդքան  
 երկար մնալ դրսումը և կ'ամաչէին մարդկերանցից: Յայտ-  
 նի է, որ էն ժամանակուայ կանայքը, մանաւանդ հարս-  
 ները և աղջկունքը՝ թախ էին կենում առամարդներին:  
 Իմ կարծիքով, էդ անպարտաւէրի զուարճութիւնը սկսեց  
 տարածուիլ Արաստանցուց մէջ միայն էն ժամանակը,  
 երբ որ Արաստունը ժը դարումը սկսեց հանգստանալ  
 Առուսաց կայսերութեան տակը և ազատուեցաւ անընդ-  
 հատ ահ ու գողից. իսկ է դարումը էդ չէր կարող ըն-  
 նել: Արեմի տեսնում ենք, որ բոլոր էս տեսակ պար-  
 սաւանքը վերաբերում են ներկայ դարուս և պ. Ար-  
 քիմեանցը ականատես լինելով Նուզուրէթումը, Շաւի  
 գիւղումը և ուրիշ սրանց նման տեղերքումը էսպիսի խա-

դերի և թմբկահարութիւնների, որք էս վերջին տասն  
 տարումը էն տեղերքիցն էլ վերանում են, կարծել է,  
 թէ ե գարումն էլ էգպէս էին կ'նում, և էգպիսի մն  
 էին բամբասանքը արտասանում է Տղիկ իշխանի բ'ր-  
 նից: Մի՞ թէ Տղիկ իշխանը: Արց թագաւորի եղ  
 բայրը էնքան մտաւոր- և մղձձ մարդ էր, որ իրա ազ  
 գը մինչև էգ աստիճանը ասորացնէր օտարների մօտ . . .  
 մի՞ թէ նա չունէր ազգային փառասիրութիւն և հայար-  
 տութիւն (ամբիսիօն նասիօնայ), երբ որ ներկայ դա-  
 րումն էլ Արցիք ոչ մէկ բանումը չեն համարում (և  
 շատ իրաւացի) իրանց ազգը ուրիշ Միտական ազգերից  
 պակաս քաղաքակրթեալ: Մի՞ թէ Տղիկը կարող էր  
 ասել շոյոց սպարապետին, թէ՛ Արաստանու երիտա-  
 սարդների մէջ ապահանգութիւն էնքան տիրել է, մինչև որ  
 կառուց անգամ նորասիրութեան կարգումն են դնում:  
 Մանականութիւնից դուրս խօսք է և ակներև զբոյար-  
 տութիւն: Ա. Վարինեանցը 'ի զուր տեղն է էգպէս ծու-  
 րը մտիկ տալի Արաստանցւոց վրայ, և բնաւին չունե-  
 նալով տեղեկութիւն նրանց անցեալ և ներկայ կեան-  
 քից, 'ի զուր է էգպէս հրապարակաւ պարտաւում նը-  
 րանց, և մինչև անգամ վատահանում է նրանց հաւա-  
 տին և կրօնին գիպչել: Մ'չ մէկ հանձարեղ Հայ չի հա-  
 մաձայնում էգպիսի խօսքերին և ես հրապարակաւ վը-  
 կայում եմ, որ էգ կարծիքը և խօսքերը միայն պ. Վա-  
 րինեանցին են պատկանում, ըստ որում բեմից լսելու  
 ժամանակը բոլոր բաղմականաց մէջ տհաճութեան շը-  
 շունջ է լսվում:

Ի՞նչ ապահանգութիւն է նկատել պ. Վարինեանցը  
 Արաստանու երիտասարդների մէջ կամ ի՞նչ է կամե-  
 նում ասել էգ բառովը: Մպականութիւն նշանակում  
 է նախ՝ փչանալը, խանգարիլը, հողանալը մարմնայ (губ-  
 ние, порча), երկրորդ՝ կեղտատու իլը, պղծուիլը (мара-  
 ние) և երրորդ՝ եթէ մօտումը դրուի բարաց կամ վարաց

բառը, էն ժամանակը կրնանակի՝ անառակութիւն, վատարարոյութիւն (ABERRAT) :

Յայտնի բան է, որ պ. Աարինեանցը կամեցել է երրորդ նշանակութիւնը ընծայել Արաստանցոյ . բայց անանկնք, թէ ներելի՞ է հգպիսի խօսք ասելը հրատարակաւ, էն էլ յաւելացնելով, թէ ապօրինի-նը (Գրանառակութիւնը—ра. . . .) արել է արտոնի պաշտօնից սկսած մինչև յետին բամբի տաւը :

Ի թէ, պ. Աարինեանցի խօսքով, Ս ղիկ իշխանը էնքան անպատիւ մարդ էր և հնքան զղուած է իրա ազգից, մինչև որ յանձն առաւ Արաստանու կանանցը, հարսներին, աղջկերանցը և երիտասարդներին ցիխի հետ հաւատարել Հայոց սպարապետի մօտ, ուրեմն պէտք է մակարերենք, թէ շատ վսեմ և ստիպող նպատակ է ունեցել . իայց գործքը և հեղինակութիւնը ցոյց են տալի մեզ մէկ հաս նպատակ, այն է՝ համոզել Աարդանին, որ իրա աղջկը տայ Արաց թագաւորին . Մի՞ թէ հգպիսի նպատակի համար թագաւորազն Արացի դեսպանը հղքան կրտորանար և կրտորացնէր իրա ազգը . . . Ըէ հգ անկարելի՞ և բնականից դուրս է :

Պ. Աարինեանցը Ս ղիկ իշխանի բերնով ասում է, թէ՝ «Արաստանումը այնքան արել է ապօրինի-նը, մինչև որ հասարակ անգամ նորատիրութեան կարգումն են դնում» : Իս խօսքին իբրև ապացոյց յաւելացնում է՝ «Վանիցս անգամ լսել ենք նոցա բերնից, թէ կրօնը պէտք է հասարակի զօրութեան, և ոչ թէ զօրութիւնը կրօնին» : Ես խօսքերումը ոչ միասան է ուղիղ և ոչ բերած ապացոյցը յարմար : Արաստանցիք երբէք հաւատը չեն դրել նորասիրութեան (մօդայի) կարգումը : Վատմութիւնից զիտենը, որ քրիստոնէութեան սկզբնական դարերումը Արաստանու եկեղեցիքը ներկուեցան բաղմաթիւ մարտիրոսաց և նահատակաց արիւնով . կրակապաշտ Վարսիկների դիւանով բռնութիւնքը չըկարողացան ջնջել Արաստանից :

քրիստոնէական հաւատը, որ իրա սկզբից մինչև էս օր  
 ոչինչ որ մեր-Ռէ-ն չի ընդունել իրա մէջ, Աթէ հա-  
 ւատանք պ. Արիմեանցի խօսքին, թէ պատահել են  
 էնպիսի Արատանցի երիտասարդներ, որ ասել են նրան,  
 թէ կրօնը դէպք է հնազանդի դո-Ռէ-ն և ոչ թէ դո-Ռէ-նը  
 կրօնն էր չի կարող ապացոյց լինել նրա խօսքին, Այս  
 չըզիտեմ, թէ ի՞նչ ասել, որ գրքումը և ումիցն է  
 լսել պ. Արիմեանցը կողմիս խօսք. միայն էսքանս կա-  
 րող եմ ասել, թէ նա չի հասկացել էր խօսքի միտքը  
 Արեւի է նրան ասած ընեն, թէ քրիստոնէան իրա հա-  
 ւատը կամ աղբը աղատելու համար կարող է առ ժա-  
 մանակ և առ էրեւս միայն հնազանդուի բռնութեան,  
 և ինչպէս մեր սուրբ Արդանը իրա ընկերների հետ  
 վարուեցաւ, առ երեսո միայն փոխի կրօնը, Մայց էր չի  
 նշանակում հաւատը նորասիրութեան կարգումը դնել:  
 Արեւի է ես չեմ հասկանում պ. Արիմեանցի միտ-  
 քը. թող ուրիշները հասկանան կամ ինքը բացատրի.  
 սակայն տպած գրքումը ուրիշ միտք չըկայ.

Պ. Արիմեանցի ստեղծած Գլխիկը էսքան երկար և  
 ստույթեամբ լիքը դրուատից յետոյ, որի մէջ բոլոր Արատ-  
 անցւոց ցոյց տուեց լատաքարոյ, պարապ, անգործ, անհոգ,  
 անճայր, Ռա-չահա-տա, և այլն, և այլն, վերջապէս ասում  
 է՝ «ասէն էս է պատճառը, որ Արատանը Հայաստա-  
 նից մայրեր է խնդրում. և այլն, Այլ թէ ի՞նչ նը-  
 պատակ է ունեցել պ. Արիմեանցը էր շարքերը յօրի-  
 նելու ժամանակը, ես չըզիտեմ, Միայն յայտնի է ա-  
 մենքին, որ լուսաւորութիւնը տարածուելով ամէն աղ-  
 զայց մէջ, հասկացրուց աշխարհքին, թէ ամէն հան-  
 ճարեղ մարդ պարտական է վարուել ամենքի հետ սի-  
 րով և մտիկ չըտալով թէ ի՞նչ հաւատքի տէր է նա,  
 մարդու մէջ ճարդ փնտրել, Արեմն ներկայ քաղաքակա-  
 նութիւնը ցիվիլիզացիա) չի ներիլ, որ մէկ անձն իրա  
 աղբի ուսմիլի աչքին թող փչելու համար վերաւորի ուրիշ

ազգի պատիւը

Իս էլ հարկաւոր է նկատել. Աթէ յերաւի Թո-  
ղիկը հղպիսի պորտաւանք խօսէր իրա ազգի վրա. ի՞նչ  
կրմտածէր Արդանը. . . ոչ ապաքէն իրա մտքոււմը կ'ա-  
սէր. Թէ էս ի՞նչ տեսակ է էշ է էս մարդը:

Աւրեմն, իմ կարծիքով, շատ լաւ կրննի որ պ. Ար-  
քինեանցը իրա գրքի միջից բոլորովին հանի էր երկու քեր-  
ուածք և Թոլիկի բերնոււմը դնի հետեւեալ համառ տե-  
անմնաս պատասխանը, թէ՛ «Ազգէնը կամենալով հաս-  
տատուն բարեկամութիւն կ'ուպել Հայաստանի հետ,  
ինդրում է Հայոց սպարապետի դուստրը տալ նրան կինը»  
Արքեմ, որ էս պատճառը լիովին բաւական էր և սպա-  
րապետ Արդանը իրա համար մեծ պատիւ կրհամա-  
րէր Թագաւորի աներ դառնալ և իրա դուստրը տես-  
նել Թագուհի. Աթէ հղպէս ընէր գրած՝ շատ ճշ-  
մարիտ և բնական պատճառ կրննէր, ամէնքը կրհաւա-  
նէին և ես էլ չէի ստիպուել հսքան երկար գրութեամբ  
հելքել սխալները.

Արկար և սալախալի ճառը լսելուց յետոյ Արդանը  
պատասխանում է՝ «Կսած խօսքերդ բոլորովին համաձայն  
են մեր եղբայր Ազգէն արքայի գրածներին, ևս պատ-  
րաստ եմ ձեր կա՛կըր կատարելու և յոյս ունիմ, որ  
իմ դուստր Եռչանիկը համաձայն ըննի ձեր ջանկու-  
թեանը. Ի՞նչ Ազգէն արքայի կողմից, ներեցէ՛ք պար-  
զաստութեանս, փոքր ինչ կ'ատկաճաւոր եմ:»

Ազգէնի նամակի մեջ Արաստանու կանանց, հարս-  
ների, աղջկերայից, մայրերի և երիտասարդների մասին խ-  
կի մէկ անպատիւ խօսք չըկայ գրած. ուրեմն շատ սուտ  
է ասում պ. Արքինեանցի ստեղծած Արդանը, թէ  
Թոլիկի ասածները համաձայն են Ազգէնի գրածներին:

Արդանի ժամանակոււմը Հայերը սովորութիւն չ'ու-  
նէին լրանց աղջկերանց համաձայնութիւնը հարցնել նր-  
անելու գործոււմը. էդ նոր է սկսուել Հայոց միջոււմը.

ուրեմն Արդանն էլ չէր ասիլ էդ խօսքը, և եթէ ասէր, թողիկի համար խորթ կըթուար:

Ի՞նչ կասկածանք կարող էր ունենալ Արդանը Աղգէնի կողմից: Եթէ էն ժամանակն էլ նշանները երևում էին, թէ նա մտադիր է հաւատը ուրաւանալ . . . Չըկարծեմ . . . ըստ որում էդ կարծիքը պատմաբանական հիմն չ'ունի, և էն միջոցումը Արդանը չէր կարող ունենալ և չ'ունէր: Ինչ հակառակը նայն իսկ ամուսնութեան նպատակը ցոյց է տալի, թէ Աղգէնը կամենալով պաշտպանել իրա ազգը, աթուր, հասար և եկեղեցին՝ Արսից բռնակալութիւնից, պոսկուեցաւ Հայոց սպարապետի աղջկայ հետ, որ Հայաստանը նիզակակից և օգնական լինի նրան: Իսկ եթէ հաւատաւրացու թեան կասկածանքը չէր, այլ Աղգէնի ուրիշ վատաբարոյութեան վրա էր խօսում Արդանը, էն ժամանակը հարկաւոր էր կամ ինքը Արդանը յատկացնէր և կամ դեսպանները պահանջէին բացատրութիւն: Իսկ գրքումը էտունք չըկայ, ուրեմն ուղղակի պէտք է հասկանանք, թէ հաւատաւրացութեան մասին էր Արդանի կարծիքը: Եթէ էդպէս ենթադրատենք, ապա ուրեմն ի՞նչպէս հաւատանք, թէ Արդանը և Համադասար էդպիսի հիմնաւոր կասկածանք ունենալով, վատահացան իրանց աղջկը դցիլ յայտնի վտանգի մէջ . . . և եթէ էդպիսի կասկածանք ունէին, ընչի՞ իրանց ընտանեկան խորհուրդումը մէջ չը բերին և չըվճռեցին:

Սեմ հասկանում . . . բայց պ. Արիհեանցի գրուածքից երևում է, որ էդ կարծիքը ունեցել է ամէնքին յայտնի հիմն, ըստ որում էդպիսի դատն և մտապիտ խօսքերը լսելուց յետոյ թողիկը, Արդայետը և Ռազրատունին, առանց հետաքրքիր լինելու, թէ ի՞նչ մասին է հասկածանքը, իսկոյն երաշխաւոր են կանգնում և խօստանում են Շուշանիկի վրա հայրական խնամք ունենալ, և Արդանը իսկոյն վկայ է կանչում էդ խօստ-

Տանը մեր Վրկչին:

Արքան անհմուտ է պ. Արրինեանցը պատմութեան մէջ  
և թէապրոնական արհեստումը և ինչպէս անշրջանկատ  
է շարադրել նա իրա գիրքը. էն էլ ի՞նչ գիրք. . .  
Պարսաբանական Աղբերգութիւն: Աւաղ Հայոց գրական  
նութեանը:

Իս խօսքերից յետոյ Արրդանը համբարում է զժ  
ջիկին, շնորհաւորում է նոր աղգականութիւնը և ա  
տում է՝ Միայն առ այժմ մնայ էս խօսքը մեր միջու  
մը, մինչև իմ ամուսին՝ Վասիկին ևս յայանեմ բանի  
որպիսութիւնը և յետոյ կատարենք նշանագրութեան  
հանդէսը: Արաց իշխանները դուրս են գնում, Ար  
դանը հրամայում է Հմայեակին հրաւիրել Վասիկին.  
Հմայեակը դուրս է գնում, Արրդանը էլի մնում է  
բեմի վրայ խեղճ մարդ. . . ո՛չ հաց է կերել երկու օր  
շարունակ և ո՛չ քնել. . . ես վախենում եմ, որ հե  
տևեալ անսարանումը չըթուլանայ նուազութիւնից:

### Տ Ե Մ Ե Մ Ի Ն Գ .

Արրդանը խորը մտածելով ման է դալի բեմի վրայ  
Արևի մտածում էր խեղճը, թէ ինչպէս ժամանակ ճա  
րի մէ թիքոյ հաց ուտելու և մին փոքր քնելու. . .  
Հանաք, մասխարութիւն չէ երկու օր քաղցած, ծարաւ,  
անքուն մնալը. . . Իայց էս անգամն էլ չը յաջողեցաւ,  
ըստ որում Վասիկը ներս է գալի: Արրդանը, չարէն  
կտրած, գործ է գնում իրա վերջին ոյժը, քշում է աչ  
քերից քնոյ ծանրութիւնը, լռեցնում է քաղցածու  
թեան և ծարաւութեան աղաղակը և յայանում է իրա  
կնկան, թէ Համաղասալի և իրա եղբարց համաձայնու  
թեամբ Շուշանիկին նշանել է Արաց թագաւորի հետ:  
Հին ժամանակներումը Հայք սովորութիւն չունէին  
նշանելու գործումը աղջկայ համաձայնութիւնը հարցնել:



բայց պ. Արիստանցը Արդանին ասել տուաւ դեւ-  
 սանների մօտ. Թէ Շուշանիկը կը համաձայնի: Եւ բո-  
 լորովին աւելորդ բան էր: Ինք հակառակը մեր ազգի  
 մէջ աննահանջիկ և հին կարգ է՝ աղջիկ նշնելու ժա-  
 մանակը մօր համաձայնութիւնը ունենալ: Բայց պ. Ար-  
 ղանեանցը ընտանեկան խորհուրդի ժամանակը չը հրաւի-  
 րեց Ղասաիկին, և հիմի կատարում է էս կարգը, իբ-  
 րև մէկ աւելորդ և անզօր սլայման, ըստ որում Արդանը,  
 կնկանից Թագուն, վճռողական խօսք է տուել և շնոր-  
 հաւորել է: Եթէ Արդանը քաղաքական նպատակ ու-  
 նէր էդ բանումը և էս պատճառաւ աւելորդ էր համա-  
 ըում կնկայ հետ խորհուրդ անելը, ուրեմն հիմիկուայ  
 խորհուրդ անելն էլ աւելորդ է. ըստ որում ի՞նչ օգուտ  
 ունի հիմիկուայ խորհուրդը: Եթէ Ղասաիկը չը համա-  
 ձայնի, Արդանը կը հարկադրուի կամ տուած խօսքը  
 յետ առնել և կամ հարկադրել կնկան, որ հնազանդ-  
 ուի: Իսկ եթէ հաւատարմ գիտէր իրա կնկայ հնազան-  
 դութիւնը, ուրեմն ի՞նչ մնաս կը ընէր, որ խօսք տալուց  
 առաջ նրան էլ հրաւիրէր ընտանեկան խորհուրդի ժա-  
 մանակը և յայտնէր էն պատճառները, ինչ որ հիմիկ  
 է յայտնում, երբ որ բանը բանից անց է կացել և երբ  
 որ Ղասաիկի համաձայնութիւնը կամ անհամաձայնու-  
 թիւնը աւելորդ է և օչինչ աղգեցութիւն չի կարող  
 ունենալ:

Ղասաիկը (խորը հառաչելով) ասում է՝ «Եթէ իմ  
 պատուական սկեսարի, իմ տագերց և ձեր կամքով իմ  
 Շուշանիկին խուժաստան դրկէք, ես ի՞նչ կարող եմ  
 ասել, (•) ինչքան դուք գիտէք և կըմտածէք, մենք  
 ի՞նչ կարող ենք գիտենալ, (•) միայն ներեցէք հարց-  
 նել ձեզ, (•) մի՞ Թէ մեր Հայ տղոց մէջ չը կան այն-  
 պիսի քաջ մարդիկ, որ արժանի լինին մեր փեսայու-  
 թեանը: Մեզ համար ի՞նչ են հարկաւոր օտարի Թախտ  
 ու Թագը, (•) ես ամենեկին չեմ մտաւցել իմ պապ

սուրբ Մահակի բանը (·) «իմ վերաւոր ոչխարը օտարի  
 առողջ գազանից լաւ է» (·) մենք այժմ թագաւորու-  
 թիւն չ'ունինք, (·) մեր թագաւորութիւնը երկնքումն  
 է, (·) բայց իմ աչքումը Հայի ամէն մի կարիճ երի-  
 տասարդը մին մին թագաւոր է. (·) մենք մեր տունը շե-  
 նելու աշխատենք, (·) ուրիշ տունը շինելով մեր տունը  
 չը քանդենք. ինչ որ դուք Շուշանիկի համար պատրաս-  
 տել էք բահր ու բաժինք. ճորտ ու ծառայ՝ մի վեր (վէր)  
 ընկած նախարարի տուն ոտի կրկանգնեցնէ. (·) թէ ինձ  
 կը հարցնէք, ընտրեցէք մի քաջ և խելօք հայազգի երի-  
 տասարդ, թող ցած ազգից լինի, տուէք նրան մեր  
 դուստրը, առէք նրան ձեր ձեռի տակը, քիչ ժամա-  
 նակից յետոյ նա էլ կը բազմաւորուի, մեր դուստրն էլ,  
 «Բանիցս անգամ իմ պատուական սկեսարը ասում էր  
 (·) «ճառն արմատով է ծառ, տունն հիմամբ տուն» (·)  
 Իշխան, այսօր դու մեր աղջկայ համար օտար ազգի ար-  
 քայազուն կամ արքայ կը ընտրես (կ'ընտրես) փեսայ,  
 վաղը միւսը կ'ընտրէ, (·) մեր խելօք (խելօք) աղջկուն-  
 քը, մեր կայքը կը տանք օտարին, մենք կը մընանք (կը-  
 մնանք) դատարհաձեռն, (·) Իշխան, ես լաւ գիտեմ  
 իմ, (·) Շուշանիկի քնքուշ սիրտը, հաստատուն հա-  
 ւատը և ճշմարիտ ազգասիրութիւնը, (·) Վաղը օտար  
 երկրումը նորա հաւատին, (·) կամ ազգին դիպչող մի  
 խօսք կ'առեն, նորա համար մահ է (· · ·) և անպատ-  
 ճառ կ'ասեն, (·) այս աշխարհի սովորութիւնն է, (·)  
 մենք այսօր մի բարձրութիւնից վեր (վէր) ընկած, բայց  
 վեհ հոգւոյ տէր ազգ ենք. վերաւորուած սրտի համար  
 վարդով խփելն անգամ՝ քարով խփելու հաւասար է,  
 (·) Իշխան, եթէ հնար է (·) փոխեցէք ձեր դիտաւո-  
 րութիւնը և ձեր դուստրը տուէք հայազգի վե՛ջին ռամ-  
 կին, քան (թէ) օտար ազգի արքայազնին:

Իս պատատխանը շատ գեղեցիկ է պատկերացնում  
 Իստիկի բնաւորութիւնը, հնազանդութիւնը, ազգա-

տիրութիւնը և հասունացած հանձարը: Աստուծոյ յայտնութեան  
տեսնում ենք էն ժամանակուայ առաքինազարդ կանանց  
տիպը և նրանց օրինակելի վարքը: Իայց աստուծոյ որ է  
պիսի լաւ մօտօրոգը (ճառը) լիքն է քերականութեան և  
կէտադրութեան դէմ սխալներով, ինչպէս տեսանք վե-  
րևումը: Մի՞թէ պարիսեանցը, որ քսան և հինգ  
տարի հայկարանութեան վարժապետ է, ներում է իրան  
էս սխալները: Մի՞թէ քերականութեան և կէտադրու-  
թեան կանոնները յարգ չ'ունին նրա աչքումը:

Ասպիսի հանձարեղ պատասխանը լսելուց յետոյ,  
Արդեանը պարտաւոր էր յայտնել իրա կնկան, թէ ի՞նչ  
շարժառիթներից ստիպուեցաւ տալ իրա աղջիկը Ազ-  
գէն թագաւորին. բայց նա ոչինչ չը յայտնելով, յի-  
շում է Աստուածաշնչումը գրած Համուէի և նրա եօթն  
որդւոց պատմութիւնը և Աստիկը պատմում է էդ անց-  
քը: Իմ կարծիքով, էդ պատմելը շատ աւելորդ է, մա-  
նաւանդ թէատրոնի այցելուաց կամ է՞ գրքի ընթեր-  
ցողաց համար նշան է անարգութեան: Ես պատմելովը  
պարիսեանցը կարծում է, թէ նրանց անձանօթ է  
էդպիսի երևելի անցքը, թէ և ուսումնարանաց յետին  
դասատան աշակերտացն էլ յայտնի է: Իսկ եթէ պար-  
իսեանցը կարծել է, թէ այցելուաց կամ ընթեր-  
ցողաց միջումը կրգտնուին էնպիսի անձինք, որք էն պատ-  
մութիւնը չը գիտեն, էնպիսիների համար հարկաւոր չէր  
բեմի վրա պատմելը, ըստ որում չ'իմացողներին բան պատ-  
մելով իմացողներին ձանձրացնելը ուսումնական և քա-  
ղաքակիրթ մարդու գործ չէ: Սամիկները շատ բան չը-  
գիտեն. մի՞թէ նրանց հասկացնելու համար պէտք է բե-  
մի վրա զանազան գրքերից բաներ կարդալ. . . էդ ուր  
կ'երթայ. Օրորինակ. եթէ պատահի խաչակիրների  
պատերազմը յիշել բեմի վրա, մի՞թէ հարկաւոր է չե-  
մացողների համար բոլոր պատերազմը պատմել:

Համուէի պատմութիւնը արտասանելուց յետոյ Ար-

դանը յայտնում է իրա կնկան, թէ ազգի վիճակը զոհ է պահանջում և թէ էս պատճառաւ յարմար ժամանակ է, որ Վասիկը դառնայ Շամունէ և Շուշանիկը Շամունէի որդի: Ես խօսքի վրա Վասիկը իսկոյն կրտսում է իրա հակախօսութիւնը և պատուական խօսքերով ասում է՝ «Հայոց ազգի քաղցր անուանը (1) ապահովութեանը, երջանկութեանը ես կըզոհեմ իմ սիրելի Շուշանիկը: Թող նրա մայրը զրկուի իրա սիրական աղջկանից, միայն թէ Հայոց ազգը երջանիկ և ապահով ըլնի»:

(1) Իննակելի՛ անձնանուէրութիւն, անզուգական ազգասիրութիւն և տօնելի կին և մայր:

Արդանը հրամայում է կանչել Շուշանիկին, որ իրա վերջին պատուէրը տայ: Վասիկը դուրս է գնում: Արդանը ման գալով յայտնում է իրա մտածմունքը, թէ իրա կինը դառնում է Շամունէ, ինքն էլ պէտք է դառնայ Վակարէ . . . (փոքր ինչ մարդարէութեան նման են էս խօսքերը:)

Ներս է գալի Շուշանիկը, հայրը յայտնում է նրան, թէ նշանել է Ազգէնի հետ, բարեմազթութիւն է անում, յիշում է անուանները էն անձանց, որք պէտք է հետը կնան, խրատում է հաստատուն մնալ իրա հաւատին, պանծալի պահել իրա ազգութիւնը և այլն: Շուշանիկը ընկնում է հօր ստորը, խոստանում է կատարել նրա պատուէրները: Ներս է մանում Հմայեակը և յայտնում է, թէ ուղեորութեան ամէն բանը պատրաստ է, թէ Արսցի իշխանները, Հայոց նախարարները և մեծամեծքը սպասում են նախագութի մէջ, իսկ զօրքը դրսի գաւթաւոր սպասում են իրանց սիրական սպարապետի նազելի դուռտը տեսնելու և վերջին հրաժարականը ընդունելու: Արդանը ասում է՝ «ուրեմն զընանք»: Ես ասելով բռնում է Շուշանի ձեռքից (գրած է՝ դուրս են գնում, բայց չէ) դրան մօտ առաջ է գալի Մոջիկը: Արդանը ասում է նրան՝ «Ես վրա»:

տահանալով ձեր խոտախնայը և երդմանցը, իմ բոլոր  
 գերդաստանի և Հայոց ազգի հոգևոր և մարմնաւոր մե-  
 ծամեծների համաձայնութեամբը (վրջին խօսքերը սուտ  
 են, ըստ որում միայն գերդաստանի հետ խօսեցաւ),  
 յանձնում եմ ձեր խնամոցը իմ նազելի դուստր **Շու-  
 շանիկ** (կին) • **Արեմն**, գնաց բարեաւ » **Արդանը** և  
**Գլխիկը** **Շուշանի** ձեռքից բռնած (գրած է դուրս են  
 գնում, բայց էլի չէ) • զօրակները երևում են դրոհից •  
**Ա** • **Արիներանցը** շատ անգամ մտաւնում է իրա գը-  
 ռածները • 16 երեսումը Համազասպը հրամայեց **Ար-  
 դանին** հրաւիրել դեսպաններին և խօսիլ նրանց հետ  
 հարստախօսութեան պայմանների վրա • բայց ոչ բեմի վրա  
 լսեցինք և ոչ տպած գրքումն ենք տեսնում, թէ ի՞նչ  
 տեսակ պայմաններ էին և թէ ե՞րբ խօսուեցան և կրտ-  
 ղական եղան • 20 երեսումը վարդանը ասաց **Գլխիկին** •  
 թէ « յետոյ իշխապետի նշանագրութեան հանդէսը, բայց  
 ոչ բեմի վրա և ոչ գրքումը արժանի չ'եղանք էդ հան-  
 դէսը տեսնելու • Էս տեղ **Արդանը** ասում է, թէ Հայ-  
 ոց ազգի հոգևոր և մարմնաւոր մեծամեծների համա-  
 ձայնութեամբ է տալի իրա աղջիկը, բայց ոչ բեմի վրա  
 և ոչ գրքումը չըտեսանք էդ խորհուրդը, ըստ որում  
**Արդանը** բոլոր երեք տեսարաններումը երկու օր ան-  
 ընդհատ մեր աչքի առաջն էր և էդպիսի բաներ չե-  
 արել • **Մէկ** անգամ դուրս էլ չըգնաց խեղճը, որ կար-  
 ծէինք, թէ էդ միջոցումը կատարեց ասածները • **Միւս**  
 կողմից շատ ցանկալի է իմանալ, թէ ի՞նչպէս պէտք  
 էր կատարել տար պ • **Արիներանցը** **Շուշանի** նշանագրու-  
 թիւնը, երբ որ **Ազգէնը** էն տեղ չէր • **Չընկ' թէ**  
 դեսպաններից մէկն ու մէկին պէտք էր կանգնեցնէր **Շու-  
 շանիկի** մօտ և ձեռքը ձեռքի տար • **Մի՞ թէ** կարելի է  
 էդպէս անել • մի՞ թէ կարելի է նշանագրութեան հանդէ-  
 կատարել Բայրակայ նշանածի հետ • և ի՞նչպէս է կատար-  
 ուում էդ հանդէսը • **Չընկ' թէ** մաշտոցումը գրաւ

հալաւոր հնէքի կարգն էր խոտտանում Աւարդանը կատարել : Մենք ուրիշ նշանագրութեան հանդէս չունենք և թէ ինչպէս էր կատարվում էր հանդէսը Արդարումը յայտնի չէ : Բայց պօ Արարի՛նեանցի համար էր պիտի բաներ ստեղծելը հիշատակն համարձակ կրնամանցնէր են ժամանակուայ հանդէսը հիմնկուան նշանտուէքին :

Շուշանիկին յուղարկաւ որեւէ ժամանակը ո՛չ մայրը և ո՛չ ուրիշ ազգականները հրաժարական ողջն և համբոյր չեն տալի : Այդ բնական չէ : Բնագառնա հարկաւոր էր ներկայացնել Շուշանի հրաժարական ողջնը իրաճնողաց և մանուաւոր իրա բնկեր և հասակակից աղջկերանց հետ և էր տեսարանը շատ օրտառուչ և բնական կրնէր :

Անբաւակաս զօրքը դրսից տեսնում են Շուշանիկին և երգում են են երգը, որ մէկ քանի Թիֆլիզեցի Հայք, առանց մատմելու, հաւանել են : Տեսնենք էս երգի արժանաւորութիւնը :

Այ՛ր հեռանաս քո մայրենի աշխարհից,  
կարօտ թողուս «երբ բարեկամս քեզնից» :

Այ՛րէի զօրքը չըգիտէին, թէ Շուշանիկը գնում է Արաց թաղաւորի կին դառնալու, և են պատճառաւ հարցնում են, թէ էր հեռանաս Բայց մի՞ թէ էր բանը թաքուն էր նրանցից, երբ որ Հայոց հոգեւոր և մարմնոր մեծամեծների խորհրդովը կատարուեցաւ, ինչպէս ասաց Աւարդանը : Այլևորդ շարքումը «երբ բառը անյարմար է և ակամայ է գործ ածած, և բարեկամս վերջաւորութիւնը աշխարհաբառ լեզուի դէմ սխալ է : ըստ որում ասում ենք՝ կարօտ ես թողնում բարեկամս քեզնից, և ո՛չ բարեկամս :

Մեր ամենիս դու մայր էիր գթաւաս :

արդ հեռանաս ( ) մեզ մութ պատէ անխարաս :

Տասն և չորս տարեկան աղջկան մայր չեն ասել : Այդ հասակումը նա ոչինչ չէր կարող անել և չէ արել զօր-

քին կամ ազդին: Աս գնում է Թագուհի դառնալու,  
 ուրեմն բախտաւորութեան է հասնում. . . Մնչի՞ պէտք  
 է զօրքին ճառ պատէ, էն էլ անփառաւ: Ի՞նչ արեգակ  
 էր էն ժամանակումը և էն հասակով Եւրշանը զօրքի  
 կամ ազդի համար, և ընչի՞ պէտք էր նրա գնալուց յե-  
 տոյ մութ պատէր. . . Մնչի՞, եղբայր, ընչի՞, ի՞նչ է  
 պատահել Եւրշանիկին. . . Արան խամ մորթելու չե՞ն  
 տանում, կամ խամ չի՞ մեռել, որ զօրքը հոպէս լաց  
 են ընում. . . Արան տանում են Թագուհի շինելու,  
 ուրեմն պէտք է ամենքը ուրախանան: Այս սրոյ բոլոր  
 էս չորս շարքերը աւելորդ և անխորհուրդ բառեր են,  
 ուրիշ ոչինչ:

Վ. ո սուրբ ձեռօք մեր վերքերը շատ անգամ  
 լուանայիր (,) դեղ դնէիր ամէն ժամ.

քո մազերից սլորէիր վերակապ,

քո բոլոր կեանքն ազգիդ համար էր փառ:

Ա՛յլ է լուսծ, որ Հայոց աղջիկը զօրաց վերքերը լուա-  
 նար, դեղ դնէր և իրա մազերից վերակապ սլորէր: Ի՞դ  
 մեր ազգի մէջ չի պատահել և պատմութեան մէջ նշոյլ  
 էլ չըկայ էդպիսի սխրագործութեան: Մնչի՞ պէտք էր  
 իրա ճողերից սլորէր Եւրշանը վերակապ. մի՞թէ կտաւ  
 չըկար Հայաստանումը: Արկին ստիպվում եմ ասել,  
 թէ պ. Աարինեանցը լսել է, թէ զանգակ են տծում,  
 բայց չըզիտէ, թէ որ եկեղեցումը: Աս կարդացել  
 է եսքի՛ իսո՛քեր Թագուհիութեանի երգումը և բերել է էս  
 տեղ յարմարացրել է Եւրշանիկի վրա: Բայց նմանու-  
 թիւնը շատ հեռու է: Թագուհիութեանը իրա երգովը հը-  
 րաւիրում է մեր ազգին ոչինչ չըլսնայել աղգասիրու-  
 թեան համար:

Վ՛մէն կարգի Հայերին զանազան խորհուրդներ տա-  
 լուց յետոյ, ասում է՝

Ա՛սէի Հայոց օրիորդիներին

— ծախեցէք հաքից ձեր Թանկ շորերը,

Թողէք պաճաւաճանք, զարդ, մարգարիտներ,  
ժանդառած ու գութ են մեր Թրեղը:

Տուէք բեհիզ'այ մեզ ձեր շապիկը:

որ մենք պատաստելք մեր մարմնոյ վերը:

վերակապ հիւսէք դուք ձեր մազերից:

այսպէս յայանեցէք դուք մեզ ձեր սէրը:

Էս տեղ հեղինակ Թաղիաթեանը հրատարակ է Հայ  
օրհորդներին իրանց մազերից վերակապ շինել էն ժա-  
մանակը: Երբ որ կտաւ կամ քաթան չեն տնենալ: Իսկ  
Շուշանիկը երբ հասաւ էն վիճակին, որ կտաւ չըճա-  
րեց ու իրա մազերից վերակապ հիւսեց:

Պատմութեան մէջ չենք տեսել, որ Հայոց աղջ-  
կերքը էգալիտի ծառայութիւն ընեն արած զօրքին Եղե-  
շէի պատմութեան մէջ էլ չըկայ էգալիտի սխրագործու-  
թիւն. եթէ արած լինէին, սուրբ պատմագիրը չէր թող-  
նիլ առանց յիշատակութեան: Բայց էդ վեհանձն ծա-  
ռայութիւնը կատարում են նոր դարերումս առանձին  
կարգի կուսանք, որք անուանվում են *sorores miseri-*  
*cordiae* խոր քրտարար-Լեւոն, որք իրանց անձը նա իրելով  
էգ պաշտօնին, բնակվում են զօրաց բանակներումը և վի-  
րաւորվածներին օգնում են հիւանդանոցներումը: Իսկ  
Շուշանիկը էդ երբէք չի արել:

Սկզբին շարքումը պ. Արարիներանցը շատ աշխատել է  
ճերմկապ բառի համար նայնահնչիւն բառ գտնել, և ոչ  
ինչ չըգտնելով, վերջապէս դրել է «գոյ» բառը: Հայա-  
նի է, որ «գոյ» կոչվում էր քրիստոնէութեան առաջին  
դարումը էն հասարակաց սեղանը, ուր բոլոր քրիստոն-  
եայքը միասին հաց էին ուտում և որ ասվում էր  
օէր: Վիտենք, որ Շուշանիկը իրա սուրբ կեանքովը  
դառաւ պարծանք Հայաստանի, երբ որ նահատակուե-  
ցաւ Սրաստանումը: Բայց չեմ հասկանում, թէ պատկ-  
ուելի՞նց առաջ նրա բոլոր կեանքը — ինչով էր ազդի հա-  
մար «գոյ» կամ ի՞նչ միտք ունի էս նմանութիւնը:



Արժէ սասնաւոր գրելու ժամանակը վերջին բառերի նոյնաճնչին լինելոյ համար կարելի է անյարմար և անտեղի բառեր գործածել: Իսկ կարծիքով, լաւն էն է, որ վերջապէս թիւը նոյնաճնչին չըլնի, քան թէ անյարմար և անտեղի բառ գործածուի: Եր ստրկական պարտաւորութիւնը վաղուց վերացել է. ներկայ դարու աստղաչափները ազատ են գրում: Էին ժամանակներումը սասնաւոր հիւսողների վրա էնքան բռնակալել էր էր աննաճանձ լի պարտաւորութիւնը, մինչև որ Ստասոյ հին հեղինակներից մէկը կամենալով իրա վեց ասրեկան սրգուն պատիկուց սորվեցնել սասնաւորով խօսիլ, հրամայել էր ամէն բառի համար նոյնաճնչին բառ գտնել, և առանց էր հրամանը կատարելու իրաւունք չ'ունէր խօսելու: Այլ որ ճաշի սեղանի ժամանակը սրդին կամեցաւ խնդրել իրա հօրից մէկ կտոր ձմերուկ, բայց սրբաւ (ձմերուկ) բառի համար նոյնաճնչ բառ չէր գտնում: Արջուպէս շատ մտածելուց յետոյ ասաց՝

Дайте слово — гдѣтъ слово

Для моего сына — гдѣтъ слово

(Տու էք ձմերուկ իմ փոքի համար:)

Էնց էս պայմաններովն է, որ պ. Աարինեանցն էլ գործ է ածել ագաղ բառը: Արեմն էս չորս շաբթերն էլ աւելորդ են և Շուշանին չեն վերաբերում:

Երդ Հայոց զօքն իւրեանց մօրից որբանայ:

Արաց ազգը քո խնամօք պերճանայ:

Հայաստանը զրկի իւր սուրբ Շուշանից:

Արաստանը բուրէ հօտով քաղցրալից:

Ի՞նչ պատճառաւ կարող էր Շուշանը էն ժամանակումը, ի՞նչ պատկուելուց առաջ, «արքէ կոչուիլ», ըլնի, թէ զօքը մարդարէացան, որ նա ՆՅ տարուց յետոյ պէտք էր նաճատակուէր և արքէ դառնար: Ի՞նչ էր արած մինչև էն որը Շուշանը Հայոց ազգի և զօրաց համար և ի՞նչ գիտէին զօքը, թէ Արաստանումը ի՞նչ պէտք է անի:

Իս բովանդակ չորս շարքը ըստ ամենայնի աւելորդ բառեր են և ոչինչ խորհուրդ չունին:

Աւր որ երթաս, ուր որ լինիս տիրուհի,  
մեր սիրտ հողին քեզ հետ տանիս մաքրուհի.  
գնաս բարեաւ մեր լոյս հաւատն քեզ ընկեր,  
աջն ու խաչը քեզ պահապանն զօր գիշեր:

Իս չորս շարքը լաւ են, յարմար են, միտք ունին և էս խօսքերը ասելը բնական է, ըստ որում զօրքը էդ կարող էին ցանկալ: Ա իայն էս տեղ էլ պ. Աարինեանցը (էլի Դոմէրի համար) աւելորդ է գործ ածել Ծառահի բառը, և փոխանակ ասելու Գիշեր ցերեկ, ինչպէս ամէնքս սովորաբար ասում ենք, գրել է ըօր Գիշեր, որ տգեղացում է Հայոց ոճը:

Ազգդ ու հաւատդ պինդ պահպանէ մէջ Արայ,  
Հայ անունդ միտդ պահէ անմտաց:

լոյս հաւատքիդ հաստատ կացիր յաւիտեան,  
լոյս հաւատդ քեզ միշտ պահէ անսասան:

Չենք ասում՝ մէջ Արայ, այլ Արայ մէջ — Հաւատը հաստատ պահելու խրատը էնքան շատ է կրկնած, որ կարծես թէ ամէնքը գիտէին, թէ Աղղղէնը 14 սարուց յետոյ պէտք է ուրանայ և Շուշանին էլ ստիպի ուրանալու: Այրեի զօրքն էլ մարգարէանում էին, ինչպէս վերեւումը Աարդանը և ուրիշները մարգարէացան: Աքանչիլի՛ են գործք քո, Տէր, Արեմն տեսանք, որ պ. Աարինեանցի գրած հինգ տուն ոտանաւորից առ աջինը, երկրորդը, երրորդը և հինգերորդը աւելորդ են, անյարմար են և անխորհուրդ. և միայն չորրորդն է յարմար: Բացէք, աղաչեմ, ի՞նչ կայ էդ երգի միջումը գովու թեան արժանի, ի՞նչ միտք է բովանդակած և ի՞նչ գեղեցկութիւն ունի շարադրութիւնը: Էս տեսակ երգը աւելի նման է էն Բայ-Եիլին, որ սգաւոր պառաւ կանայքը երգում են մեռելի վրա, շարելով զանազան գովասանքներ և հարցնելով մեռելից՝ ուր ես գնում . . .

մեզ ում ապով ես թողնում . . . ընչի՞ ես խռովել մեզ-  
նից . . . ճամփեդ ընչի՞ ես ծռել, և այլն, և այլն. Էս  
պիսի երգը ամենեին նշանագրութեան կամ հարսնա-  
խօսութեան հանդէսի յարմար չէ:

Իմ կարծիքով աւելի լաւ կ'անէր այ. Ատրինեանցը,  
եթէ էսպիսի անխորհուրդ և անյարմար երգի փոխարէն  
երգել տար զօրքին հետեւեալ մտքով մէկ երգ, զորօրինակ՝

Պարկեշտասուն կոյս գեղեցիկ նազիլի,  
պերճ շառաւիղ Վամիկոնեան քաջ սոհմի.  
Հայաստանի քնքուշ ծաղիկ Շուշանիկ,  
չնորհաւորեմք քո հարնութիւնդ պանծալի:

Գուտար մեծի Սպարապետին Վարդանայ  
մեծ արքային Վրաստանի հարսնանայ:  
Հայաստանի քնքուշ ծաղիկ Շուշանիկ  
արքայական գահի վերայ բարձրանայ:

Բայց ուր երթաս, ուր որ լինիս, Տիրուհի,  
մեր սիրտը միշտ քեզ ուղեկից կըլինի.  
Հայաստանի քնքուշ ծաղիկ Շուշանիկ,  
գնաս բարեաւ, սուրբ Խաչը քեզ հովանի:

Է- համ

Ետուն Աովկաս սպիտակահէր ծերունին  
ձեռքը տուեց նուիրական Վասիսին.  
բազմադարեան ծերունիքը սուրբ սիրով  
իրար կապուած զուարճանում են միասին:

Մե. Վասիսը ընծայում է Աովկասին  
Թագաւորի վայել պարգև՝ օկն անգին,  
մեծ Աովկասը նստեցնում է էս օկը  
իրա Թագի ոսկեճաճանչ կասարին:

Ադեմական ջրով ցողած պարտիզից  
մեծ Աովկասը խնդրեց ծաղիկ ոննման.

միջ Մասիւր իրա քնքուշ ծաղկունքից  
ընծայում է նրան էսօ. մէկ Դուշան:

Ասարծեմ, որ սրանց նման կամ սրանցից աւելի լաւ  
երգը աւելի յարմար կըլնէր, քան թէ պ Աստիւնեանցի  
յօրինածը. որ, ինչպէս տեսանք, լիքն է անտեղի, ան-  
յարմար և աւելորդ մ. քերով և բառերով, և իրա բո-  
վանդակու թեամբը ոչ թէ հօրանախօսու թեան կամ նշա-  
նադրու թեան հանդիսի երգ է, այլ մեռելի բառէն:

Ինչ և իցէ, պ Աստիւնեանցի յօրինած երգի վեր-  
ջին սուէնը երգելով բոլոր գործող անձիւքը գուրս են  
գնում բեմից, վարս գոյրը ծածկվում է, ապա թէ խելճ  
Արդանն էլ ժամանակ է ճարում մէ թիքայ հաց ու-  
տելու և քնելու:

### ԳՈՐԾԻՆ

### Տեառանք

(Տեառանք (փոխանակ ասելոյ) անտէր կամ Գոճողա-  
նիւնը) կատարվում է Արաց արքայանիսա Գ խէթա (Արց-  
խէթայ) քաղաքումը Աղղզէն արքայի պալատումը, որ  
զարդարում է Արաց ձեով. (.) վարագուրը բացուելիս  
ներկայանում են Ս:Ջիկ իշխանը նստած առխաթի վրա  
խորին տարակուսու թեան և մտածմանց մէջ, (.) ներս  
են մտնում Մարդակեա և Մաղրասանի իշխանները ու-  
խորը գլուխ սուլով առում են Մղջոյն ձեղ. մի ծ իշ-  
խան, (.) (Ս:Ջիկը տարակուսու թեան մէջ ընկղմած չէ  
տեսնում նրանց և ինքն իրան խօսում է), թէ Աղղ-  
զէնի ու բացու թիւնը, քրիտաննէական հաւատոյ անարդու-  
թիւնը. Արաց աղղի մէջ բացուելու ընտանի պատերազ-  
մը. Դուշանիկի և նրա սրղկերանց տարաբախտ վիճակը  
մէկ մէկ նկարագրուելով աչքի առնջիք, աչքիցը բունը  
կարել են: Ե. յո մէջջին գլուխը բարձրացնում է և (.)

122

անամում է իշխաններին և ( ) անդիցը վեր է թաշում  
և ասում է իշխանները իշխանք, ես ձեր գալուստը չե  
անայ իմ բանը այն անդ է հասել, որ արժանի ժա  
մանակս էլ երբեք եմ անամ :

Մարդպետը և Վարդապետի զոյց են ապի իրանց  
կարեկցու թիւնը և մանրան թիւնը վեջապէս խնդում  
են յայտնել արամու թեան պատճառը Ն անկը ասում  
է և երանից թագցնելու բան չունիմ և թագցնելու  
ժամանակը անց է կացել ( ) այս բանի տարուայ Հայ  
աստանի : Այս անից և մեր սահմանների գլխին եկած  
տարաբախտութիւնը լուս գիտէք ( ) Հայելի զոյց  
ասում հաստաց հանգիսիս՝ գրեթէ ակամատես էիք ( )  
բայց ինչ ժամանակ Մարդանը նահատակուեցաւ սուրբ  
պատերս զմի մէջ, բանգուեցաւ Հայաստանի բերդ ու  
պարիսպը, այն օրից ես գիտէի մեր գլխին գալիքը և  
ահա՛ երկկ իմ եղբորից պատգամաւոր եկաւ և յայտ  
նեց, որ իմ եղբայրս քրիստոնէս թիւնը սրտանց ուրա  
ցել է և Պարսից հաստան է ընդունել, արեգակ է պաշ  
տում և ինձ պատգամ է զրկել, որ ես եկե եցոյ սուրբ  
ուխտին, մեր իշխաններին և բոլոր ժողովրդեանը պատ  
ուիրեմ, որ սիրով և յարգանք առջ գնան նրա հետ  
Գլխ (եկող) քուրմերին, պատիւ տանք նրանց և պատ  
րաստ լինինք կրակասունների շինելու և կրակ պաշտելու  
յատկապէս պատուիրել է յայտնել Շուշանիկին, թող  
նել Հայի սուլուս թիւնը, գնալ ժամանակի հետ, և  
զինքը (իրան) և իրա սրգիքը պատրաստել մագու թեան  
օրէնքը ընդունելու :

Վարդապետի ակերեմն, որ բանը բացուել է ներե  
ցէք ինձ, որ ես իմ սրտիս վէքը և ս բանամ : Մրա  
նից երկու տարի առաջ, ելք է ազկերտ արքայի հրա  
մանաւ Հայոց, բայց Վրացանից ( ) ուժէից և այլ  
քրիստոնէսայ ազգաց մեծամեծները գնացին Պարսից դու  
ռը, ձեզ յայտնի է, որ ես էլ Մարգգէնի հետ գնացի :

(.) ուխտաւորս նախարարները երեսունց իբր թէ Հազկերտի կամքը կատարեցին և յետ դարձան. Հազկերտը ամեն ազգից պատանդ ուղեց, (.) Հայոց դաւաճան Աիւնեաց իշխան Աստուկը իրա որդիքը թողեց, միւս ազգերը ևս մեծամեծներից պատանդ թողին, (.) ես ձեր եղբորից խնդրեցի, որ ինձ պատանդ թողնի և ինքը ուխտապահ նախարարների հետ գոյ և մեր աշխարհի վերահուժեան հոգսը քաշէ, նա ինձ ասաց, (.) չէ, դու գնա, ես կըմնամ պատանդ, (.) եթէ դոցա հետ երթամ, դոցա հետ խորհրդակից և գործակից պիտի լինիմ, (.) դոցա խորհուրդը գլուխ գալու բան չէ, (.) եթէ դոքա մի բան կարողացան անել, ես էլ քրիստոնէական հաւատովս կ'ուզամ (կըզամ կամ կուզամ) և կըտիրեմ իմ հայրենի աշխարհին. ապա թէ ոչ (.) Պարսից հզօր զօրութեամբ առօք և փառօք կըտիրեմ ոչ միայն Արաստանին, այլև Հայաստանին և միւս կործանեալ տէրութիւններին, (.) դեռ այս հերիք չէր, (.) Հազկերտին աւելի մտերմութիւն ցոյց տալու համար խնդրեց Պարսիկ կին առնուլ, և նա տուեց նրան իրա զոքանչը:

Գ ղ ի կ. Լ. յո՛, այո՛, (.) Տօթաբերը ինձ ասաց, որ կինն ևս հետը բերում է, բայց ես վերահասու չ'եղայ, (.) բայց դու (.) իշխան Տապրատունի (իշխանն Տազրատունի) այդ բաները ինչի՞ մինչև հիմայ չէիր յայտնում ինձ. — Տապրատունի: իմ չ'յայտնելու պատճառները խիտտ շատ են, (.) նախ որ Ա ազգէնի վրէժխնդրութիւնից վախւնում էի, երկրորդ՝ չէի կամենում ձեր եղբայրական սիրտը վշտացնեմ, (.) երրորդ՝ կասկածում էի, որ չ'լնի (.) թէ (ուշանիկի տկանը հասնի բանը՝ և ես դառնամ նրա մահուան պատճառը, միւս պատճառները մնան:

Գ ղ ի կ. Ա տանգը արդէն դուռն է հասել, լռելու ժամանակ չէ, (.) ես այս գիշեր կանչեցի մեծ եպիսկոպոսը (որն) ու դրան էրէցը (ցին), յայտնեցի նոցա

Աղգէնի պատգամը (•) նորա սարսափեցան, նորա հա-  
զար անէծքներ կարգացին նորա գլխին, պատրաստուե-  
ցան խաչը առնել ձեռքները և հրաւիրել ժողովրդին  
ճանել (աւելորդ բառ է) խաչի դրոշակի տակ, սուր բառ-  
նալ ուրացողների գէմ, և ինձ յորդարեցին այո սուրբ  
միաբանութեանը գլուխ դառնալ, բայց ես աղաչեցի նո-  
ցա, որ խորհելու ժամանակ տան, և ոչ ուր չ'յայտնե-  
լով գեռ վտանգը՝ ծոմ ու պառ պահեն, հսկում, ժամ  
և պատարապ անեն:

Բազրառան. Աս զարմանում եմ, թէ ինչի՞ մեղք  
էքան տարակուսութեան մէջ ենք, երբ որ Հունաց կայ-  
սերութեան պէս քրիստոնեայ հզոր կայսերութիւնը կանգ-  
նած է խաչի և նորա երկրպագուաց պաշտպան. (•) հո-  
գեոր և մարմնաւոր իշխանաց միաբանութեամբ աղաչա-  
նաց թուղթ գրենք Այսեր, հասկացնենք վտանգը և  
օգնութիւն խնդրենք:

Մարդէս. Հայները էնպէս կ'օգնեն մեզ, ինչպէս օգ-  
նեցին Հայերին (•) Հունաց կայսր Մարկիանոսը հա-  
ւատոյ գործքերով է պարապում. (և) Առստանդնու-  
պօլսոյ եկեղեցիքումը մէկ մէկու վրա բանագրանքներ են  
կարդում: Այդպիսի աղգի վրա յոյս դնելը կորստա-  
կան է, (•) մենք այդպիսի աղգին թուղթ գրելից զգուշ  
կենանք, որ Հայերի թղթերի պէս մեր թղթերն ևս Հաղ-  
կերաի ձեռք չընկնեն:

Բազրառանի. Արեմն ձայն տանք մեր նախարարնե-  
րին և իշխաններին, յայտնենք վտանգը և հրաւիրենք  
զօրք հաւաքել, ամէ՛քս միանանք և երթանք թշնամ-  
եաց գէմ:

Մարդէս. Մի՛ կարծէք, որ մենք քնած ենք, (•)  
մեր նախարարներին և իշխաններին մենք լաւ ենք ճա-  
նաչում, (•) արդէն նոցա մեծ մասը գնացել են Աղ-  
գէնի ընդ առաջ, և ընդունելով Վարսից կրօնքը (•) մի-

ացել են նոցա հետ: Մնացեալքն էլ ինձ պատգամ են  
ուղարկել, թէ կոստնձ Հայերի կորուստը աեմեյով  
ամենեին կամք չունին (չ'անին) ընդդիմանալու Աղ-  
գէնին. նոցա համար մի և նոյն է ինչ կրօն լինի (1)  
Թող լինի:

Իս խօսակցութեանց սկզբումը երևում էր, թէ  
մէնակ Սոջիկը գիտէր Աղգէնի ուրացութիւնը և ա-  
ռաջիկայ վտանգը, էն էլ միայն երեկ ստացած պատ-  
գամից, և էն պատճառաւ իբրև ծածուկ խորհուրդ յայտ-  
նեց Սոջիկը Քաղրատունն և Վարդպետին. բայց յե-  
տոյ Քաղրատունույ և Վարդպետի խօսքերից երևեցաւ,  
որ երկու տարի առաջ յայտնի է եղել Աղգէնի ու-  
րացութիւնն էլ, նրա պատկուելն էլ Վարսիկ կնոջ հետ  
նմանապէս իմացուեցաւ, թէ նախարարների և իշխան-  
ների մեծ մասը վաղուց իմացել են էս անցքերը և գը-  
նացել են Աղգէնի առաջ և թէ մնացածներն էլ պատ-  
գամ են ուղարկել Վարսպետին, թէ պատրաստ են  
ընդունել Վարսից կրօնքը: Աւրեմն էդքան երկար միջո-  
ցումը կատարուած և էդքան անձանց յայտնի գործքերը  
և անցքերը ի՞նչպէս թաքուն կրմնային Սոջիկից որ  
էրէ՛հ միայն իմացաւ և յայտնեց մեծ եպիսկոպոսին և  
դրան էրէցին: Եդ բնական կարգից դուրս է անկարելի  
է . . . և հէնց ինքը Սոջիկը ասում է վերջումը, թէ Բո-  
չորը գիտէր և ծածկում էր Շուշանիկից: Ահներև հա-  
կասութիւն:

Հալա դիցուք, թէ Սոջիկը զեարդ և իցէ կարաց  
Թագցնել Շուշանիկից Աղգէնի պատկուելը Վարսից  
Թագաւորի զսքանչի հետ, թէ և էդպիսի մեծ անցքը  
չատ դժուարին կրնէր թագցնելը, երբ որ յայտնի էր  
բոլոր Վարսկաստանին և շատերին Արաստանումը . . .  
Սակայն ի՞նչպէս կարողացաւ նա թագցնել Շուշանի-  
կից էն աշխարհահաճակ Արդանանց պատերազմը: Ի՞նչ



պէս կարելի էր, որ հարիսի երեւելի անցքը լսած չբնէր  
 Շուշանիկը, որ հարեան և շատ մօտիկ հարեան ազ-  
 գի թագուհի էր և ի՞նչ պատճառաւ հարկաւոր կա-  
 ռող էր համարուիլ նրանից թագցնելը . . . մի՞թէ կը-  
 կարծէին, թէ նա դարդամահ կըլնի լսելով իրա հօր  
 մահուան համբաւը: Մի՞թէ կարծում էին, թէ Շու-  
 շանիկը, քրիստոնէական հաւատքի անշարժ սիւնը և ա-  
 ռաքինութեան օրինակը, ուրախ չէր լինիլ, լսելով, թէ  
 նրա հայրը հնարիսի քոջութեամբ է կատարել հաւատ-  
 քի պանծալի գործը և սասցել է մարտիրոսական պը-  
 սակը . . . Ի՞նչպէս կարելի բան էր, որ Ծոջիկի բո-  
 թաբերը ասած ընէր նրան, թէ Աղղզէնը իրա կնկան  
 էլ հեան է բերում և Ծոջիկը մերահասու չըլնէր, թէ  
 էս ի՞նչ է ստում, և յետոյ, երբ որ Բագրատունին  
 ասաց նրան, թէ Աղղզէնը պսակուել է Յաղկերսի գը-  
 քանչի հետ, նա է՛ն ժամանակը միայն միտը բերաւ: Ար-  
 է էս տեղ տրամախահութիւն:

Աորդ տեսնում ենք, որ այ. Աարինեանցը էս խօսակ-  
 ցութեանց մէջ կամեցել է յայտնել պատմաբանական  
 անցքերը. բայց ամսն, որ չի կարողացել բերանել մըտ-  
 քումը հանդամանաց բովանդակութիւնը և խճճուել է  
 անցքերի մէջ. էս տեսակ խճճուելու և հակառակ թեանց  
 պատճառն էն է, որ նա չի կարողացել լաւ ձե տալ  
 իրա հեղինակութեանը: Իմ կարծիքով լաւ չի տրել,  
 որ էս անցքերը պատմել է երեք անձանց խօսակցութեան  
 մէջ, այլ աւելի լաւ կ'անէր, եթէ որ միայն Ծոջիկի  
 կամ իշխաններից մէկն ու մէկի բերանով պատմէր, իբր  
 յորմա-թի-ն, և կամ թէ Ծոջիկը ժողով կազմէր հա-  
 գեորականներից և մտերիմ իշխաններից և նրանց մօտ,  
 իբրև արեւմտա-թի-ն, պատմէր բոլոր անցքերը և յե-  
 տոյ խորհուրդ հարցնէր, թէ ի՞նչ պէտք է անել. էն  
 ժամանակը էլ հարկաւորութիւն չէր ընիլ պատէ պատ

դիպչերու խօսակցուէ մէջ և հակառակներ առաջ բերելու ։ այլ ուղղակի և ժամանակագրական կարգու կը յայտնուէր պատմութիւնը ։ կը բացատրուէին ժամանակակից հանգամանքները ։ իշխանաց մեծ մասի հաւատուրացու թիւնը ։ մնացածների դիտաւորութիւնը ։ Են ժամանակը Գ ջիկն էլ կ'երևար քաղաքագէտ և էն ժամանակուայ դիպումացիային տեղեակ մարդ ։ ինչպէս որ էր իսկ և ոչ թէ շշկուած և հնած մարդ ։ ինչպէս որ ցոյց է տուել նրան պ ։ Արիներանցը ։ Արեմն տեսնում ենք ։ որ պ ։ Արիներանցը դեռ շատ խակ է բնական արհեստի մէջ ։

Եւքան հակառակ խօսակցութիւններից յետոյ Գ ջիկը ասում է իշխանք ։ (•) դուք ձեր միտքը ասացիք ։ այժմ լրեցէք իմ միտքը ։ Եստուած մեր մեղացը բարկանալով մեզի այս տարաբախտութեանը հասցրուց ։ որ ամէն կողմից սգնու թեան դռները փակած են ։ (•) մենք երեք հոգի ենք մնացել մեր սուրբ հաւատին հաւատարիմ ։ (•) դիցուք թէ մի քանիսին և ս յորդորանքով ։ խոստումներով և այլ հնարքներով կարողացանք միտքանացնել մեզ հետ ։ (•) դորանով ոչինչ չենք կարող առնել Ա զգէնի երկաթէ կամացը ։ մեր ընտանի թշնամեացը և Արախից հզոր զորութեանը դէմ ։ դիցուք թէ մենք մեռանք ։ դորանով մեր անձը և հոգին կ'փրկենք (կը) ։ բայց այլոց օգնել չենք կարող մանաւանդ թէ ողջ աշխարհին մշտնջենական կորստեան պատճառ կ'ընինք ։ (•) ուրեմն արիք մենք ճշմարիտ հոգւով միանանք միմեանց հետ ։ խոստանանք և ուխտենք որտով սիրել և մինչև մահ պահել մեր սուրբ հաւատը ։ երեւոյց կատարենք Ա զգէնի կամքը ։ և այս առիթով նուիրենք մեր անձը վշտացեալներին յայտնի և 'ի ծածուկ օգնելու ։ (•) եմ հասկանում ։ Երեւոյց կամքը կատարելը և 'ի ծածուկ օգնելը բնական է ։ իսկ յայտնի օգնելը բնական չէ ։ ըստ որում իսկոյն կը բռնի երեւոյց կամք կատարու-

դին: էլ ի՛ նոր հակասու թիւն.) Ո՛հ, ես տարտախում եմ, ես տեսնում եմ իմ աչքիս առաջը, թէ ո՞րքան զոհեր պիտի ունենանք հաւատոյ համար. (.) Արատամի հողում թէ և վառ շեր շատ կան, բայց անուշահոտ ծաղիկներ և ապակաս չեն. (.) այս զոհերի առաջինը պիտի լինի իմ հարս Շուշանիկը, որի հայր անմահ Արդանը դեռ հարմարաբար թեան ժամանակը՝ յայտնեց իւր կարծիքը Աղագէնի վրա. բայց մենք (.) իշխանք, յիշեցէ՛ք այն սոսկալի ժամը, մենք սարսափելի երդումով երաշխաւոր եղանք. և նա իւր նազելի գուտորը յանձնեց մեր խնամոցը. (.) ուրեմն կատարենք մեր խոստումը, կատարենք սատուածսիրտ թեան սրբազան օրէնքները, ապրենք միայն, որ օգնենք վշտացեալներին:

Բագրատունի՛ն և Մարդպետը ասում են՝ համաձայն ենք. Ծղիկը շարունակում է՝ Ուրեմն, իշխանք, վատանգը մերձ է, ուրիշ հնարք չկայ և ժամանակ կորցնելը առանց պատրաստու թեան վտանգի մէջ ընկնել է. (.) կանչենք Շուշանիկին և յայտնենք նորան իւր մարդու բօթաբեր հրամանը. Մարդեպ իշխանս պետ), գնան և Շուշանիկին այս տեղ հրաւիրէ՛ (.) (Մարդպետը գուրս է գնում):

Ահրեւումը տեսնիք, որ Բագրատունի և Մարդպետ իշխանները եկան Ծղիկի մօտ, յայտնի չէ, թէ ինչ նպատակաւ. բայց յետոյ երեք խօսողների մէջ ծածուկ խորհրդարան բացուեցաւ, և ամէն մէկը յայտնեց իրա միտքը, թէ և սկզբնական խօսակցութիւնից երևում էր, որ նրանց մէջ չըկար դեռ հաստատուն մտերմութիւն և մինչև էսօր դեռ չէին յայտնել իրարու սրտի խորհուրդները. ինչ և իցէ, երբ որ Ծղիկը առաջարկեց ճշմարիտ հոգւով միանալ, խոստանալ և ուխտել արատով սիրել և մինչև մահ պահել սուրբ հաւատը, երեսանց կատարել Աղագէնի կամքը և իրանց անձը նուրի-

րել վշտացեալներին յայսին և ՚ի ծածուկ օգնելու, Ռազ-  
րաատունին և Վարդպետը ոչ խոստացան և ոչ երդուե-  
ցան, այլ միայն ասացին՝ համաչայն էնք: Էսպիտի վսեմ  
խորհուրդի մէջ դարտակ համ-չայնութիւնը բաւական չէ  
և չի կարող ապահովացնել: Էս տեղ անպատճառ հար-  
կաւոր էր երդո՞ւն, ինչպէս որ պահանջեց Ս. Չիկը,  
բայց ոչ ինքը երդուեցաւ և ոչ նրանց երդմեցոյց, որ  
շատ վսեմ և արտառուչ տեսարան կրէնէր բեմի վրա:  
Րայց պ. Արիստեանցը աւելորդ է համարել էսպիտի վը-  
սեմ առարկան:

Այսակցութիւնը շարունակելով Ս. Չիկը ասաց՝ «Արատ-  
տանի հողումը թէ և փուշեր շատ կան, բայց անուշա-  
հատ ծաղիկներ էլ պակաս չեն»: Այլևի պ. Արիստեանցի  
Ս. Չիկը մտաւցել է էն երկար ճառը, որ ասաց Վար-  
դանին էդ երկու իշխանների ներկայութեւն, թէ Արատ-  
տանումը ապահանգութիւնը էնքան փել է Լազարի պաշտպեց  
սինս՝ մինչև յեփն առմէի փո՞ւր, մինչև որ հա՞տար ան-  
գամ նորասիրութեան կարգումն են դնում: Էս ի՞նչ վա-  
փոխական բնաւորութիւն ունի էս պ. Ս. Չիկը... մէկ  
տաքին է փչում, մէկ հովին:

Ահատողութեանցս սկզբումը տեսանք, որ Վարդանը  
Շուշանիկի հարսնախօսութեան ժամանակը ասաց, թէ  
Ազգէնի կողմից փոքր էնչ կասկածաւոր է, բայց չը յայտ-  
նեց, թէ ի՞նչ մտին է էս կասկածանքը, իսկ Ս. Չի-  
կը, Վարդպետը և Ռազրաատունին, առանց հարց-  
նելու կասկածանքի պատճառը, երաշխաւոր կանգնեցան  
և խոստացան հայրական գութ ունենալ նրա վրա: Էիմի  
էս տեղ երեւցաւ, որ Վարդանի կասկածանքը եղել է  
Ազգէնի ուրախութեան մտին: Մի՞ թէ էդպիտի կաս-  
կածանք կարող էր լինել և յայտնի էր 10 տարի առաջ  
... էդ ո՞ր պատմութիւնիցն է յայտնի պ. Արիստեան-  
ցին... մի՞ թէ էդպիտի հիմնաւոր և շատերին յայտնի

կասկածանքը էլած ժամանակը Աարդանը կրհամաձայ-  
 նէր իրա սիրելի Շուշանիկ դուստրը գցել ակնուրև վը-  
 տանգի մէջ և ընչի՞նա չը յայտնեց էս կասկածանքը  
 իրա հօրը և եղբարցը, երբ որ խորհուրդ էին անում տա-  
 լու կամ չըտալու մասին . . . Աարծեմ, որ եթէ Աար-  
 դանի հայրը և եղբարքը գիտենային, թէ եղպիսի կաս-  
 կած կայ, էնպէս շուտով չէին համաձայնիլ և իսկի  
 չէին էլ վախենալ Աազգէնի և Արաց ազգի թշնամու-  
 թիւնից, այլ յանձը կ'առնէին զո՛հ լինել սաղ անով  
 տեղով և իրանց դուստրը չէին տալ էնպիսի մարդու,  
 որի վրա կասկածանք կար հաւատուրացու թեան:

Հա սնախօսութեան ժամանակը Ս՝ջիկը Քազրա-  
 տունին և Մարդպետը երաշխաւոր կանգնեցան միայն  
 դու թ ունենալու Շուշանիկի վրա, Աարդանը վկայ կան-  
 չեց Պրկչին: Իսկ նրանք ձայն չըհանեցին: Ին տեղ Աազ-  
 գէնի ուրացու թեան մասին խօսք էլ չըկար: Իսկ էս տեղ  
 Ս՝ջիկը ասում է՝ թէ մենք սարսափելի երդումով ե-  
 րաշխաւոր ելանք». ուրեմն էն ժամանակը երդմամբ խոս-  
 տացիլ են թոյլ չըտալ, որ Աազգէնը Շուշանիկի հա-  
 ւաար կարողանայ իոխել: Մի՞թէ եդ կարելի բան էր,  
 և մի՞թէ Աարդանը կրհամաձայնէր իրա դուստրը տալ  
 Քայն հաւատաւրով եղպիսի խոստմանը: Աթէ եղպէս էր,  
 ընչի՞ պարզ չէր խօսում ին տարի առաջ Աարդանը և  
 պարզ չէին խոստանում երաշխաւորները: Իս ի՞նչքան  
 հակասութիւններ են . . . որ մէկը բռնեմք: Աթէ ա-  
 մէն էսպիսի հակասութեանց ետե ից ընկնեմք, մեր կրի-  
 տիքը պ. Աարինեանցի գրքից եռապատիկ մեծ կըլնի:

Մարդպետի դուրս գնալուց յետոյ Ս՝ջիկը մտածում  
 է, թէ ի՞նչպէս յայտնի Շուշանիկին Աազգէնի ուրա-  
 ցութիւնը, և ասում է՝ «Էս քանի՞ տարի է, որ Աազ-  
 գէնը Պարսից արքայի մօտ է. . . թէ Շուշանիկի սիրտը  
 չ'վերաւորելու (չը) համար ես ամէն հնարքով թաքցընի

նրանից Աազգէնի սառնաթիւնը, Հայաստանի տակն ու վրայ լինիլը, Հայոց սուրբ հաւատոյ համար անձնագոյն պատերազմը, Արդանի և իւր ընկերոց մահը, Աասուկի և նորա համախոհների շարութիւնքը, ոխտապահ նախարարների և եկեղեցւոյ սուրբ ոխտի պարսկաստանի (Պ) մէջ քաշած նեղութիւնքը, և ( ) վերջապէս Մամիկանեանց տան տեղի կործանումը, ( ) և Մարտառեան աշխարհից տարագիր Մշու երկիրներ ապաստան լինելը, ( ) եւ (Էս) ամէնը արի ( ) որովհետեւ հնարք ունէի, բայց այժմ գուժկան պիտի դառնամ իմ քրիստոնեայ ( ) աղօթատէր հարսի համար, ( ) ահա նա գալիս է. (աչքերը սրբում է).

Ներսէ մտնում (ուշանիկը Մարդպետ իշխանի հետ և տեսնելով իւր տագրը (տեգորը) և Մագրատունի իշխանը (ին) գունաթափ և տարակուսած՝ ինքն ևս տարակուսած սղջունում է նոցա, յետոյ հարցնում է տրեւութեան և իրան կանչելու պատճառը, և ասում է, թէ չըլի՞ Աազգէնին մէկ վտանգ է պատահել:

Չ. Ը. Է. Ուշ ( ) Տիրուհի, Աազգէնը մարմնով կենդանի է և առողջ:

Շ. Զ. Է. Իշխան, ես չեմ հասկանում ձեր խօսքը, բացայայտ խօսեցէ՛ք, ( ) հերիք է (հերիք է) տանջէ՛ք մի տարաբախտ կին, որ արդէն իւր վշտերի ծովի մէջ ընկղմւելու մօտ է. (իշխանքը չոքում են Շուշանիկի առաջը):

Չ. Ը. Է. Տիրուհի, քրիստոնէական սուրբ հաւատով զօրացրէ՛ք ձեր սիրտը, որ կարողանաք լսել մեր սարսափելի բօթը. կամ թէ ձեր ամուսին Աազգէնի դառն և սարսափելի հրամանը. բայց ամէնից առաջ կ'աղաչենք ( ) տիրուհի, ներել մեզ, ո՛հ, ՚ի սրտէ ներել, մենք յանցաւոր ենք ձեզ մօտ, մենք ենք ձեր տարաբախտութեան պատճառը, մենք երաշխաւոր ենք ձեր ան-

Տին, բայց (1) վայ մեղ, երաշխաւորու թեան սուրբ պարտ-  
քը վճարելու անկարող ենք. (2) ձեր ամուսինն Ապո-  
ղէնը քիստանէական սուրբ հաւատք 'ի սրտէ ուրանա-  
լով՝ գաղտնի Պարսից զօրքերով և մագերի բազմու թեանք.  
Նա միւս կինն է առել Պարսից թագաւորի զբանչը և  
ինձ պատգամ է դրել, որ յայտնենք ճշդ (ձեզ), որ  
զուք և ձեր որդիքը պատրաստ լինիք ընդ առաջ գնալ  
Ապողէնին և նրա կնոջը. ընդ առաջ գնաք մագերին,  
թողնէք ձեր հաւատք և երկրպագու թիւն տաք արե-  
գական և կրակին: (Շուշանիկը սակաւ առ սակաւ թու-  
լանում է, ընկնում է բարձի վրայ և կիսակտուր ձայ-  
նիւ ասում է՝

Շուշանիկ. Հայի աղջիկը . . . Մամիկոնեանց սերուն-  
դը . . . Արդանի դուստրը . . . հաւատք ուրանայ . . .  
և կուռք պաշտէ . . . չէ, նա կրմեանի . . . (Գողիկ և  
միւս իշխանները վեր են կենում):

Երբ որ Մարդպետը գնաց Շուշանիկին կանչելու,  
Գողիկը ասաց, թէ էսքան տարի թաքցրել է նրանից  
Հայաստանումը կատարուած երեկի անցքերը, Աերե-  
ւումը ցոյց տուի, թէ էդ թաքցնելը անկարելի  
էր, իսկ նկատողութեանս վեճումը ցոյց կըտամ,  
թէ ի՞նչ նորատակաւ է գրել պ. Վարինեանցը էս ան-  
կարելի թագցնելը:

Իսթը տալու համար հարկաւոր չէր, որ իշխանքը չո-  
քէին, ըստ որում էդ ո՛չ երգումն է և ո՛չ աղօթք. այլ  
թողութելի էր միայն ներողութիւն խնդրելու ժամանակը.  
Շուշանիկի թուլանալը սակաւ առ սակաւ սկսում է  
էն ժամանակ, երբ որ Գողիկը վերջացնում է բօթը.  
Եդ բնական չէ, այլ բնականաբար պէտք է սկսուէր էն  
առաջին բառից, որ յայտնեց նրան Ապողէնի ուրացու-  
թիւնը. Զիտայ, երբ որ նրան ուշքի կըբերէին, էն Բա-  
մանակը կարող էր նա արտասանել իրա խօսքերը կիտա-

կտուր ձայնիւ: Իսկ պ. Արքիմեանցի գրածից երևում է, որ Շուշանիկի Թուլանայը Թէպէտ սկսուել է, բայց սպասել է մինչև որ արատանի երեք շաբ խօսելը: Հեղինակը չի մտածել, թէ Թուլանայը մէկ վայրկեան ծուծն է կատարւում և խօսելու ժամանակ չի սալի: Արանից երևում է, որ պ. Արքիմեանցը բնութեան օրէնքի վրա չէ հիմնել իրա երևակայութիւնը:

Արք որ Շուշանիկը Թուլանում է, Տ՝ժիկը ասում է՝ Իշխանիք, տեսնում էք, որ այս ողորմելի կիներ մեռնում է, հասցրէք սթափողական դեղ, բժիշկ կանչեցէք: Ասասելով ինքը տեղից չի շարժում, այլ Վարդպետ իշխանը մօտեցնում է քթին սթափեցուցիչ դեղ: Տ՝ժիկը Շուշանիկի տաղրն էր և շատ սիրում էր նրան, ուրեմն ի՞նչպէս համբերեց, վրա չընկաւ և չաշխատեցաւ ուշքի բերել նրան. և ի՞նչպէս կամք տուաւ, որ օտար աղամարդ մօտենայ իրա հարսին: Եղ Ա դարու Հայոց վարք չէ: Աերկայ դարումս էլ, եթէ հարսը Թուլանայ և տաղրը ներկայ գտնուի, ինքը վրա կընկնի և ոչ թէ օտար աղամարդու կըհրամայի քաշքշել և ուշքի բերել: Ուրեմն հարկաւոր է, որ պ. Արքիմեանցը լիտի էս տեղը և դրի, թէ Տ՝ժիկը վրա է ընկնում օգնելու և ուշքի բերելու, և ՚ի միասին հրամայում է Վարդպետին սթափողական դեղ բերել: Ես սթափողական դեղն էլ, չըկարծեմ որ, Վարդպետը պատրաստի ունենար ջէբումը, երբ որ եկաւ Տ՝ժիկի մօտ խօսելու. իսկ եթէ ասենք, թէ Շուշանիկին կանչելու ժամանակը պատրաստեց նա. խոսեանէլով, թէ նա անպատճառ պէտք է Թուլանայ, ուրեմն շատ անկիրթ մարդ էր, ըստ որում կգպիսի նախատեսութիւն ունենալուց յետոյ պէտք էր որ ծածուկ հրամայէր Թագուհւոյ նաժիշաներին և աղախիններին պատրաստ կանգնել դրան ետևը և պատրաստի պահել իրանց մօտ սթափողական դեղը: Ահաք է լաւ գիտե-



նար էն պարանը, թէ թաղուհոյ անձը օտար տղամար-  
դի համար անմերձենալի է:

Ինչ է իցէ. Կարգպետի մօտեցումը դեղին Եւրոպայի-  
կը աչքերը բաց է անում և ասում է՝ Կըր եմ ես,  
նէ, երազի մէջ եմ ( ) թէ արթուն . . . ճշմարիտ  
են լուծներս ( ) թէ ցնորք (գնորք) . . . Կրկին թու-  
լանում է, կրկին տալիս են դեղը, կրկին ուշքի է գա-  
լի և ասում է՝ իշխանք, արդէն իմ հոգիս քաղվում է,  
ես մեռնում եմ, իմ որդիքը լաւ պահէք ( ) դուք և  
ձեր Կատուածը . . . (էս տեղ չըկոյ գրած, թէ թուլա-  
նում է, բայց մենք պէտք է հասկանանք, թէ թուլա-  
նում է, ըստ որում Ծղիկը ասում է՝ Կարգպետ իշ-  
խան, կանչէ սորա որդիքը և աղջկիքը, ( . նոյա աղջ-  
կուսը ( ա երազ բառ է ) ձայնը դուցէ ուշքի բերէ  
այս սղորմելին, իսկ եթէ վրանդ պատահի, թող որ-  
դիքը ներկայ լինին և վերջին օրհնութիւնը ասեն (ըս-  
տանան ):

Կատուք ասելով և մինչև վերջին հրամանի կատար-  
ելը ոչ ոք մօտ չի գնում թուլացածին: Կո ի՞նչ բա-  
րասիրտ մարդիկ են: Կարգպետը շատով ներս է բե-  
րում Կիւրան և Կախթանդ որդիք (որդ կերանցը),  
Քեթեան և Վոփիա գառնորդ (գուսարերին), որոնք տես-  
նելով իրանց մօր վիճակը և միւսներին սարտախը ( ) զար-  
հուրելով աղաղակում են ո՛հ, այս ի՞նչ զարհուրելի տե-  
սարան է . . . յետոյ չարում են իրանց մօր առաջ (ա-  
ռաջներ) և ասում են):

Կիւրան. Կայր ջան ( ) ի՞նչ պատահեցաւ քեզ,  
( . ) ո՛հ, ո՛ւրեք ես թողնում քո սիրական որդիքը (որդ-  
կերանցը), ( . ) մայր ջան, քո Կարգանի սիրոյն, աչքդ  
բաց արա, ապա թէ ոչ ( ) մենք ևս կըմեռնինք: ( )

Վոփիայ. Կայրիկ, սղորմէ (մէ՛) քո աղջկանցը, ( . )  
նէ, երկինք, այս ի՞նչ վայ է, որ բերիք մեր դէմին .

իշխանք, եթէ մեր մայրը մեռնում է, 'ի վառն Վա-  
տուծոյ, հանեցէք ձեր օրերը և մեղ (մեղ, մեր մօր  
ոտի տակ մատաղ արէք: Մայր, լսէ քո Վօլիկայի ձայ-  
նը, լսէ նորա աղաղակը, մի' (մի խօսք առաջ մեծք մեռ-  
նում ենք:

Հատ սրտառուչ տեսարան է և շատ սրտաշարժ խօս-  
քեր են որդւոց ասածները, բայց ամենից, որ պ. Կա-  
րինեանցը չի գիտացել բնականաբար դասաւորել էս խօս-  
քերը: Նական կարգը են է, որ եղպիսի գիպուածու-  
մը բոլոր որդիքը միասին արտայայտէին իրանց զգաց-  
մունքը: Էն էլ մէկ վայրկեանումը և ո՛չ թէ սպասելով  
մէկ մէկու, որ մէկը վերջացնի իրա խօսքերը (և բաւա-  
կան երկար խօսքերը) և յետոյ միւր սկսի: Էւթ էո՞  
որ պ հեղինակը առաջ լաւ ձայնարկուած ինքն  
գնէր ամեն մէկի բերնումը, յետոյ, երբ որ զգացմանց  
առջին շարժմունքը կը հանդարտէին, կարող էր էն սը-  
գայի խօսքերը ասել ասոր, իբրև արտայայտիչ յուսա-  
հատու թեան:

Շուշանիկը աչքերը բաց է անում և ասում է՝ ո՛հ,  
տարաբախտ որդիք:

Վագրատունին քաջալերում է նրան, յիշելով նրա  
ծագումը և միտք բերելով Շամուէի և Յորայ համ-  
բերութիւնը: Շուշանը ներողութիւն է խնդրում իրա  
վարքագու թեան մասին, որի պատճառն է Ապագէնի սէրը  
և որդւոց գորովը: Վագրատունին էլ իրա կողմից նե-  
րողութիւն է խնդրում իրա համարձակութեան համար:  
Շուշանիկը պատասխանում է թէ այսուհետե էլ Տե-  
րուհի չէ, թէ էն օրից վայ տուեց իրա գլխին, երբ որ  
օտար աղքի մարդու հետ պսակուեցաւ, թէ յանձն է  
առնում ամենայն շարջարանք և վիշտ և թէ ցոյց կը-  
տայ աշխարհին, որ արքունի թագն ու գաւազանը խո-  
նարհում են աշխարհասիրութեան դէի առաջ, բայց մի

տկար օտարական Հայ աղջիկը քրիստոնէական հաւա-  
սոյ անյայթելի զօւթեամբը, ոտի տակն է առնում  
աշխարհի փառքը և վկայ է լինում ճշմարտութեան:

Եւստ Գեորգիի են Եւզանիկի վեղին խօսքերը մի-  
այն վեղին շարքերումը հարկաւոր էր բոլոր բայերը ա-  
պառնի ժամանակաւ դիւել և ոչ թէ ներկայիւ, ըստ  
որում նրա սուածները տակաւին ապագայ էին:

Տղջիկը ասում է իմ հայրս մի բան ունիմ ասե-  
լու ձեզ բայց լաւ գիտեմ, որ իմ ասելիքս անարգու-  
թիւն է իւձ համար, միայն թող սրտագէտ Մատուածը  
իմ ասոյ մե խորհորդը և դիտարարութիւնս, ալիք ձեր  
ամբաստոյ՝ ձեր սրգւոյ և մեր մտկութեան համար ընդ-  
առաջ գնացէք Ազգէնին, գոնեան երեսանց կատարե-  
ցէք նրա համարը, և յետոյ կամաց կամաց համարե-  
ցէք նաան թողնել հեթանոսութեան օրէնքը և դառ-  
նալ գէղի ճշմարտութեան ճանապարհը:

Եւզանիկ Չէ. իշխան միջի հիմայ ձեր հարսն էի  
և ձեր աղին, և այս 15 տարի է ձեռ համարնին չէ  
(չէ) ասած շունիմ (շունիմ), բայց այժմ հասնեմ  
երկնաւոր թողաւորին, ևս բնաւ տեսնելու չեմ Ազգ  
գէնի երես ) բանի որ նա կուսքերի երեսը տես-  
նում է ( օ վ ջին շարքը աւելարդ է և Եւզանիկը  
չէր կարող էր ասել և կատարել ) եւս աւետարանի ա-  
շակերտ եմ

Եւս միջոցին մէկ զօրապետ ներս է մտնում և ասում  
է. թէ Ազգէն աքթան իւր բոլոր բազմութեամբը գա-  
լիս է և խիտա բարկացած է . . . բոլորը դուրս են գնում,  
մնում է միայն Եւզանը (Միջի մնաց, եթէ չէր կա-  
մենում տեսնել Վազգէնի երեսը )

Հանկարծ (Թնչպէս թէ յանկարծ, երբ որ զօրապետը  
խնաց արաւ . . . էր յանկարծ չի ասուիլ ) ներս է մտ-  
նում Ազգէնը, Եւզանիկը կամենում է դուրս գնալ

( առաջ ընչի՞ մնաց, հիմի ընչի՞ է կամենում գուրս գալ ),  
 Աղգէնը բանում է նրա կանից և գոչում է՝ « Արամա-  
 կոյր Շայի աղջիկ, (•) այս ի՞նչ է քո արածը, (•) դու  
 ինձի (ինձ) խայտառակեցիր իմ բարձրաստիճան կնոջս  
 մօտ, ճշմարտաբարող քուրմերի և բոլոր պարսկական զօ-  
 րաց առաջը: Ի՞նչպէս յանդգնեցար իմ հրամանս չը-  
 կատարել և չըգալ ընդ առաջ, (•) և այդ բաւական  
 չէ (չէ), իմ եղբոր և Վագատունի և Վարդպետ իշ-  
 խանների հետ իմ ասնս մէջ ժողոված՝ դաւաճանու  
 թեան խորհուրդ էք անում:

Շուշանիկը պատասխանում է, թէ շա, երբ մեկը  
 մէկու դէմ դաւաճանութիւն անել դիտեն, բայց իրանց  
 տիրոջ դէմ ոչ բնաւ: Աղգէնը միամտութիւն էս խօս-  
 քից իրա եղբոր և միւս իշխանների դաւաճանութեան  
 մասին, էլ չի կանչում նրանց և չի պահանջում, թէ  
 հաստատ ընդունում են նրանք կրակ ապաշատ թիւնը,  
 թէ ոչ, պահանջում է միայն իրա կնկանից հնազան  
 դու թիւն, և վերջապէս հանում է սուրբ և վրաս է ընկ-  
 նում՝ Ներս են վաղում Գ՛ջիկը և Շուշանիկի որ-  
 դիքը և աղջկեքը: Վերջինները փաթաթվում են իրանց  
 մօրը, առաջինը խնդրում է ազատել տառապետ կրն-  
 կան: Վախտանգը խնդրում է հօրից սղորմիլ իրանց մօ-  
 րը, Գ՛ջիկը խնդրում է ժամանակ տալ, Աղգէնը տա-  
 լիս է երեք օր ժամանակ, Գ՛ջիկը գուրս է տանում Շու-  
 շանիկին և նրա որդկերանցը:

Աղգէնը մէնակ մնալով բեմի վրա բարկանում է,  
 որ իրա մտքերը չեն կատարվում: Էս միջոցին ներս է  
 մտնում սենեկապետը և դնելով Աղգէնի առաջը մի  
 կապոց (կապոցք), ասում է՝ Վ. քայ, էս կապոցը զբիեց  
 ձեր կն (ամուսին) Շուշանիկը, (•) սրա մէջ են իւր  
 թաղուհու թեան շորերը, և հրամայեց ասել, թէ այ-  
 սուհետե թագաւորի կին չէ: Աղգէնը բարկանալով

ասում է՝ գնա շուտ իմ եղբորս ասան բերէ ինձ մօտ այն  
կամակոր կիւր (կիւրան). սենեկապետը դուրս է գնում .  
Աղագէնը մէնակ մնալով ասում է , թէ լաւ է ճա-  
նաչում Հայերի և մանաւանդ Շուշանիկի կամակո-  
րութիւնը :

Մեծի բնական և գեղեցիկ կրէնէր , եթէ Շուշանի-  
կը Աղագէնի հետ խօսելու ժամանակը դէն գցէր իրա  
գլխի թագը նրա ոտքի տակ և էնդրով ցոյց տար , թէ  
ինչքան անարգ է համարում էդ փառքը քրիստոնէական  
հաւատքի առաջիւրդ : Իսկ եթէ երկրորդ անգամ Շու-  
շանիկին կանչելու համար էր հարկաւոր կապոցքի ու-  
ղարկելը կարող էր պ . Վարինեանցը էս անգամումը ու-  
ղարկել Սենեկապետի ձեռքով միայն շորերը կամ ու-  
րիշ ընծաները : Արժեւ , որ իմ ասածը աւելի ազդու  
և էնէրգիկան (եռանդատ զգացմունք ցոյց կրտար :

Ներս են գալի Ս . Ջիկը և Շուշանիկը . Աղագէնը ,  
ցոյց տալով էն կապոցքը , ասում է իրա եղբորը՝ է՞ որ  
դա յանդգնել է ինձ մօտ ուղարկել իրա ալքունի շորերը :

Մ . Եր բառից պէտք է հասկանանք , թէ Աղագէնի  
տուած երկքորեայ ժամանակից գոնէ մէկը անց է կա-  
ցել . բայց տեսնում ենք , որ կապոցքի ուղարկելը մի և  
նոյն տեսարանումը , մի և նոյն օրումը եղև . Աւրեմն այժմ  
բառը աւելորդ է և միայն խառնում է ճշգուծիւնը :

Նկատյ Աղագէնը ներս է կանչում դահճապետին և  
հրամայում է պատրաստել տանջանաց գործիքները . Շու-  
շանիկը համարձակ ասում է , թէ տանջանքներով չի  
կարող նրանով խեցնել . Աղագէնը սուրը քաշում է ,  
վրա է ընկնում ասելով՝ ձայնդ կարէ , լեզուդ արմատից  
կրկարեմ . Ս . Ջիկը իրա եղբոր ձեռիցը բռնելով մէկ  
կողմն է տանում և զգուշացնում է , թէ էդպէս յայտ-  
նի տանջելը և սպանելը կարող է խռովութեան պատ-  
ճառ դառնալ , և խորհուրդ է տալի ուղարկել թիֆ-

լիս, մահապարտից բաժնոր ձգել և առանձին շորջարել և  
 Աղգեհնը հաւանում է էս խորհուրդը, հրամայում է  
 դահճապետին կապել թշուառական կնկան, մին լուս  
 ծծեցից յետոյ և ստով քաշէ քաշ տանել Ս. Բ. Փիլիս, և  
 յանձնել բանդապետին և յայտնել հրամանը, որ դը  
 նեն մի մու թ բանդի մէջ, ոչովի չը թողնեն գ. ու դը  
 նալու, որը մի անգամ մի կտոր հաց և մի քիչ ջուր տանն

Եւ Կ. Կ. Ե. Ի (մոխանակ Կ. Ե. Ե. Ե. ըստ սրում է դ  
 հրամանը պէտք էր առաջ ընէր արած) բերդի գէմու  
 գէմ կամուրջի միւս երեսին կրակատուն շինել և շար  
 թէնը երկու անգամ թնդ տանեն դրան կրակատան մօտ  
 և ստիպեն կրակին երկրպագութիւն տալու, եթէ կա  
 տարէ իմ հրամանս, շուտով ինձ աւետիս բերին և պար  
 գե ստանան, ապա թէ ոչ (և կրկին ծեծելով ձգեն  
 բանդը մինչև մեռնի:

Էս վերջին հրամանի մէջ Աղգեհնը մտաոցաւ աւե  
 լացնելու մէկ պայման էլ, որ շատ հարկաւոր էր, ին  
 եթէ Եւզանիկը կրակին երկրպագութիւն տայ և ինչ  
 պէս վարուեն նրա հետ մինչև թագաւորին աւետիս հա  
 ցնելը և նրանից հրաման ստանալը:

Թագաւորի հրամանը լսելուց յետոյ Եւզանիկը թու  
 լանում է, զինուորները վեր են քաշում և տանում են:

Իստեղ Եւզանիկի թաւանալը աւելորդ էր, ըստ  
 սրում նա ինքը առաց, թէ տանջանքներից չի վ. խնում և  
 Նրան վեր քաշողները պէտք է լինէին դահճապետը և  
 նրա օգնականները և ոչ թէ զինուորները, որոց անունը  
 անգամ չըկայ յիշած վերեւում:

Եւզանիկին դուրս տանելու ժամանակը վարագոյրը  
 իջում է:

Հանրէս երկուրդ

Տեսարան Լ.

Տեսարանը (փոխանակ ասելոյ՝ անցքը կամ դուժողութիւնը) կատարուած է Ս. Ֆիլիզի Մեանիսի բերդումը մութ բանախի մէջ, (•) Շուշանիկը նստած (է) միայն բանդի մէջ և ձեռները կապած մտօք աղօթք է անում, (•) գալիս է նրա մօտ բանդապետը:

Բանդապետ. Աերեցէք, տիրուհի, որ ես իմ այցելու թիւնս ուշացրի, (•) այս օրը (•) ձեր այս բանդը գալից յետոյ (•) ինձ համար տարի դարձաւ, (•) աչքս մնաց արեգակի վրա, (•) մտիկ եմ տալիս (տալի) դէպի երկինքը՝ դեռ լոյս է, (•) անհամբերութիւնը ինձ խեղդում էր, (•) շտապում և խիստ շտապում էի, թէ երբ ի՞մ թնէ (կը), որ երևամ (գամ) իմ սուրբ թագուհւոյ ոտները համբուրեմ և ներողութիւն խնդրեմ իմ դառն պաշտօնս կատարելու համար:

Շուշանիկ. Բայց դուք ո՞վ էք, որ այդպիսի կարեկցութիւն էք ցոյց տալի ինձ:

Բանդապետ. Ես այս թշուառութեան տան, այս բերդի բերդապահ և այս բանդի բանդապետն եմ. իմ պաշտօնս զարհուրելի է. ես նշանակած եմ Աղղզէնի անօրէն հրամաններին (•) կատարող, (•) բայց ես նուիրել եմ իմ անձս թշուառականների կարեկցութեանը, (•) ես այս սարսափելի պաշտօնին անյարմար եմ, բայց ի՞նչ անեմ, (•••) իմ տէրը, իմ բարերարը, Սոջիկ իշխանը ինչ ժամանակ լսեց իրա եղբօր ուրացութիւնը և Պարսկաստանից վերադարձը, ինձ կանչեց և ասաց, (•) սիրելի Արսէն, (•) մեր աշխարհի և մեր աղղի թշուառութիւնը արդէն մօտեցել է, շուտով մեր բանդերը կըլքցուին անմեղ զոհերով, ժամանակը էնպէս վը-

տանգաւոր է, որ անմեղու թիւնը յայտնի պաշտպանու-  
 թիւն չի կարող գտնել և միայն մնում է մեզ ծածուկ  
 օգնել նշանց, (•) ես կարգում եմ քեզ Սեանիսի բեր-  
 դի բերդապահ և բանդապետ (») : Աս ջղիկի ոտ-  
 քերը ընկայ և խնդրեցի ազատել ինձ էդ զարհուրելի պաշ-  
 տօնից, բայց նա ասաց, (») սիրելի Արսէն, յանձն (դ)  
 առ այդ դառը պաշտօնը, որ միջոց ունենաս վշտացած-  
 ների դառնութիւնը քաղցրացնել, մեր բանդերը այսու-  
 հետե գող-ը և մարդասպաններ (գողերով և մարդասպան-  
 ներով) լքցուելու չեն. այսուհետե քրիստոնէական ոտը  
 հաւատոյ վկայքը պէտք է բանդի մէջ մաշուին. Այր-  
 ջապէս համոզեց ինձ : Այն օրից, որ (երբ որ) յանձն  
 (ս) առայ ես այս պաշտօնը, կամաց կամաց զանազան  
 պատճառներով հեռացրի այս տեղից այն պաշտօնակալը  
 (ներին) և զինուորը (ներին), որոց վրա կասկածանք ու-  
 նէի և այժմ բաւականին ապահով եմ. (•) Աւրեմս,  
 թոյլ տուէք ինձ, տիրուհի, արձակել ձեր կապերը,  
 որ մի փոքր դիւրութիւն գտնէք :

**Շուշանի.** Աս շնորհակալ եմ ձեր կարեկցութիւնից,  
 պարոն. բայց ես չեմ կամենում իմ դիւրութեամբ  
 այլոց վնաս տալ. թողէք ինձ մնալ, ինչպէս որ կամ  
 և կատարեցէք Ազգէնի հրամանը :

**Բանդապետ.** Այս դիշեր ձեզ այս բանդը բերելից ա-  
 ռաջ, եկաւ այս տեղ իմ բարերար ջղիկ իշխանը հա-  
 տարակ գիւղականի շորերով և ոտով, որ սչով չ'իմա-  
 նայ նորա այս տեղ գալը, մի առ մի յայտնեց ինձ ձեր  
 վտանգը և հրամայեց, որ ամենայն տեսակ խնամք ցոյց  
 տամ ձեզ վրա, (•) պատուիրեց դրսից կատարել Ազ-  
 գէնի անօրէն հրամանը, շաբթէնը երկու անգամ առ-  
 նել ձեզ կրակատան մօտ, բայց ծեծելու պատուէրը կա-  
 տարել իբր թէ ծածուկ, թագուհութեան պատիւը պահ-  
 պանելով : Աս, իմ կինս և որդիքս մինչև 'ի մահ պատ-



բառս ենք ձեզ ծառայելու :

Իսկ խօսակցութեանց մէջ ակներև հակասութիւնք և  
սխալներ կան : Բանդապետը խօսակցութեան սկզբումը  
ասաց՝ այս քո տարի դարձաւ ինձ համար, սպասում էի  
մթնանալուն, որ գամ և ներողութիւն խնդրեմ և այլն :  
յետոյ ասում է՝ այս գիշեր ձեզ այս բանդը բերելից ա-  
ռաջ, եկաւ Ս. Պօլիկը և այլն : Ինչպէս հասկանանք՝ երբ  
են բերել Շուշանիկին բանդը—էս գիշեր, թէ էս օր...  
եթէ էս օր են բերել, ուրեմն Ս. Պօլիկը երէի գիշեր է եկել :  
կարծեմ որ էսպէս պիտի լինի :

Ս. Պօլիկ իշխանի համար ասում է բանդապետը, թէ  
եկաւ հասարակ գիւղականի շորերով և ստով, ուրեմն  
աւելորդ են հետեւեալ բառերը՝ «որ ոչ-մ շինմանս նորա այս  
պէղ գալը», ըստ որում տաւանց են էլ ամէնքի համար հաս-  
կանալի է հասարակ գիւղականի շորերով դալու նախատակը :

«Իայց ծեծելու— կրճաւը հարարել էիք թէ ծածո—ի, ան-  
հասկանալի է : պէտք էր ասել՝ Բայց ծեծելու ծախս չա՛յն  
արք՝ ծեցէի : Թէ էր կրճանք ծածո—ի է հարարւա՛մ, թա-  
ղուհու թեան պատիւը պահելու համար :

Բանդապետը նաեւ անում կայերը լալով : Շուշա-  
նիկը հանում է մատից մի մատանի և ասում է՝ «Ս. Պ-  
նիւ բանդապետ, (•) ես երէի իմ արքունական շորերը  
Ալազէնին դրկեցի, բայց մտապահմամբ կամ գուցէ Ս. Պ-  
տուծոյ կամեցողութեամբը այս մատանին մնացել է,  
(•) առէք ձեր երախտեաց փոխարէն : Բանդապետը վըշ-  
տացած սրտով հրաժարւում է ընծայից : Շուշանիկը  
խնդրում է առնուլ և պահել իրրև տւանդ, և իրա  
մահից յետոյ, սալ իրա մեծ որդի Միհրանին : Բան-  
դապետը համբուրում է Շուշանիկի ձեռք, առնում է  
մատանին և ասում է՝ շատ բարի, ես այս արքաղան ա-  
ւանդը երբ և իցէ կըհասցնեմ իրա տեղը, այժմ կէս  
գիշեր է, հանգստացէք, մնա՛ք բարեաւ (դուրս է գնում) :

Շուշանիկը մտում է մէնակ, էստրով սկսում է թտեսարանը, բայց ոչինչ փոփոխութիւն չըկայ: Շուշանիկը ինքն իրան խօսում է՝ սխմ մեղքիս արժանի պատիժն է, որ ահա վէց քարէ է դառն շարշարանքով այս մութ բանդի մէջ սե պատերից աւելի ոչինչ չեմ տեսնում: շարթէնը երկու անգամ ( ) յիրաւի ( ) ինձ դուրս են տանում, բայց վայ էն դուրս տանելուն, տանում են կրակատան մօտ և ստիպում են կրակին երկրպագանել: Մի՞նչե երբ պիտի շարունակեն էս յիմարութիւնը: մի՞թէ մինչև հիմայ չըհասկացան, թէ Սարգանի դրատեր համար էդ անկարելի բան է: Հայաստանից լուր չ'ուենիմ: իմ հօրից, իմ մօրից, իմ առն տեղից ոչինչ տեղեկութիւն չըկայ: մարդս կորստական ճանապարհի վրա, ինձ թշնամի, որդկերանցիցս հակառ չ'ուենիմ: ( )

Դատ անգամ էս դարհուրելի վիճակը ինձ էնպէս նեղացնում է, որ ուզում եմ այս քարավի գլխից ընկնիմ Տուաը, բայց քրիստոնէական սուրբ հաւատը արգելում է ինձ: ( ) է, ևս պիտի ապրիմ մինչև այն օրը, որ այս անգին գանձը (ցոյց է տալիս ( ) վզից քաշ արած խաչը) մի հաւատարիմ մարդոյ ձեռք յանձնելով, հասցնեմ իմ հայրենի աշխարհը, պիտի ապրիմ, որ մի Հայ քահանայ ճարեմ և իմ քրիստոնէական վերջին պարտքս վճարեմ: պիտի ապրիմ, մինչև իմ հայրենի աշխարհից մի լուր ստանամ: «Ինձ, մարդասէր Նստուած, կատարէ քո աղախնոյդ այս վերջին խնդիրները, և այն ժամանակ եղիցին կամք քո:»

Էս խօսքերից Շուշանիկի իմացանք, որ ահա վէց քարէ է անց կացել բերդումը, բայց նախընթաց տեսարանումը իմացանք, որ բանդը մտնելու առաջին գիշերն էր և բանդապետի հետ ծանօթանալու առաջին նուազը: Երբ որ առաջին գիշերը բանդապետը ստաց' Բարէ գիշեր և դուրս գնաց, ոչ վարագոյրը իջաւ, ոչ Շուշանիկը

Ժաժ եկու տեղիցը և ոչ բեմի վրա փոփոխութիւն եղաւ: Ար մէկ խօսքին հաւատանք. . . Ար թէ պ. կարինեանցը կարծում է, թէ Տեառան ի գրելովը պէտք է ամէն մարդու հասկացնի, թէ վէր արիւն գլորուեցան: Այ, պ. կարինեանց. բեմական տեսարանները բնական նաբար և սմէնքի համար դիւրիմաց պէտք է դասաւորել, և էդ տեսակ դասաւորելու համար հարկաւոր է ունենալ բեմական արհեստի դիտութիւն, թէ ասորոնական գործումը բաղմամբ հմտութիւն և սուր շրջանկատողութիւն. իսկ եթէ էտունք չունենայ հեղինակը, ահա էս պիտի սխալների մէջ կ'ընկնի:

Պ. կարինեանցը ասում է, թէ Շուշանիկը մէնակ մնացած, ինքն իրա հետ խօսելով, ցոյց է արել վզին քաշարած խաչը: Ա՛մն է ցոյց տալի, երբ որ բանդումը մէնակ է: Այ, թէ ցոյց է արել ասելով կամեցել է, որ դերասանը այցելուացը ցոյց տայ, շատ սխալ է: ըստ որում բեմի վրա գործող անձը պէտք է ներգործի բնականաբար, ինչպէս անցքը կատարուել է իրա ժամանակին և իրա տեղումը, առանց իրիք հաղորդութեան հայեցողների հետ: Այ, պ. կարինեանց, ցոյց չէ տալի, այլ համուած է ծոցից, ճիշի է արել և համբուրում է: Կերատանը ինքը գիտէ, թէ ինչպէս պէտք է մտիկ տայ և համբուրի, որ այցելուքը տեսնեն, թէ ի՞նչ կայ ձեռքին:

Շուշանիկի խօսելուց յետոյ ներս են մտնում բանդապետը և մի օտարական մարդ:

Իւնդամայն. Տիրուհի. իմ բարեբար իշխան Գոջիկը այս մարդուն ղրկել է ինձ մօտ և առանձին նամակաւ գրել է (պատուիրել է կամ հրամայել է), որ ներկայացնեմ ձեզ. նա ինձ գրում է, որ սա Աշու երկրիցն է գալի, ինքը արեղայ է և անունը Լ'նդրէաս. սա շուրերը փոխել է, որ ոչ ոք կարծի չըբանի (աւելորդ բաներ). դուք լաւ գիտէք, եթէ Աղգէնը իմանայ սա:

րա քրիստոնեայ եւ տաւել հոգևորական լինելը, բն-  
լարս միասին կորած ենք. (ըստ ամենայնի աւելորդ խօս-  
քեր են . . . առանց էն էլ ամէնքը հասկանում են.)

Շուշանիկը շնորհակալութիւն է անում, ասում է՝  
«Այլևի Տոջիկը իմացել է, որ շուտով դուրս է գալու  
իմ մահուան վճիռը, և հոգևոյս փրկութեան հոգան  
է քաշում . . . սիրելի բանդապետ, թողէք մեզի (մեզ)  
մի փոքր ժամանակ առանձին, Վանդապետը դուրս է  
գնում. Շուշանիկը ասում է՝ հայր, դուք արդէն իմ  
հոգիս զօրացրիք, ինձ երկնաւոր թագաւորին զինուոր շե-  
նեցիք, իմ խիղճս մաքրեցիք և ինձ անմահական կայով կե-  
րակրեցի»:

Էս խօսքերից պէտք է հասկանանք, թէ բանդապետի  
դուրս գնալից յետոյ Շուշանիկը խոստովանուեցաւ և  
հաղորդուեցաւ. բայց էդ գործողութիւնը չըկայ նշանա-  
կած և չի հասկացվում, թէ ե՞րբ և ո՞ր տեղ կատար-  
ուեցաւ: Վանեա՛ գրած էլա ընէր. թէ Շուշանիկը և արե-  
ղան գնում են բանդի միւս սենեակը կամ դուրս են գնում  
բանդապետի տանը կատարելու էդ սուրբ խորհուրդը. բայց  
էդ էլ չըկայ. և Շուշանիկը անշարժ մնացած է բեմի վրա:

Յետոյ Շուշանիկը հարցնում է Հայաստանի վե-  
ճակի մասին, իրա հօր, մօր և բոլոր ազգականների ա-  
ռողջութիւնը. արեղան պատասխանում է, թէ այդ մա-  
սին մի խօսք էլ չի կարող առել, ըստ որում խօսք է  
տուել Տոջիկ իշխանին: Շուշանիկը արտով շնորհակա-  
լութիւն է անում Տոջիկին, որ նա չի կամեցել վրդո-  
վել նրա սիրտը դասն համբաւներով: (Նչի՛ցն էր իմա-  
նում, թէ համբաւները դասն պիտի լինէին, և թէ նրա-  
նից թաքուն էին պահած Հայաստանի մեծ պատերազ-  
մը և Վարդանանց կոտորածը.) Հանում է ծոցից մի  
փոքրիկ ծրար, տալիս է արեղային և ասում է՝ Արա մէջ  
անգին գանձ կայ և մի թուղթ, որի մէջ գրած է էդ

դանձի ինչ լինելը , ինչպէս իմ ձեռք անցնելը և թէ  
ի՞նչ պէտք է անէք էդ դանձը . ես ձեզ երգում եմ  
տալի , որ շուտով գնաք Հայաստան , էն տեղ բանաք  
ծրարը և ինչպէս գրած է , էնպէս կատարէք :

Մ. Բեղան դուրս է գնում . Շուշանիկը մէնակ մնալով  
զգում է սրտումը երկնային մխիթարութիւն , ուրախա-  
նում է , որ իրա սրտի երկու բաղձանքը կատարուեցան .  
« Եստոյ ասում է՝ « Գոտն եւ Դ տարի է հայրենիքից հե-  
ռանալու և էն օրից սկսած մինչև էս օր չեմ երգել . այժմ  
Բանաստեղծական հոգիս բացուել է , վասն որոյ կ'երգեմ ինչ  
որ բնութիւնը կըլծելագորի . Էս ասելուց յետոյ երգում  
է արժանայիշատակ « Երաւթիւն վարդապետ Մ. լամ-  
դորեանի 1824 թուին Մոսկովումը յօրինած ընթեր-  
ցողներից շատերին յայտնի երգը՝ « Եստոյ և Էնայ Գո-  
տնիս » :

Եթէ Շուշանիկը ունէր բանաստեղծական հոգի , որ  
քսան և մէկ տարի մոկուած էր և հիմի բացուեցաւ , և  
եթէ բնութեան թելադրանքը կամեցաւ երգել , ուրեմն  
պէտք էր իսկոյն յօրինէր և երգէր . իսկ եթէ էդպիսի  
ձիրք չ'ունէր , ուրեմն պէտք էր էդուք չ'ասէր , այլ միայն  
միտը բերէր իրանից առաջ յօրինած հին երգերից մէկը  
և երգէր , կամ թէ , պ . Վարինեանցը ինքը պէտք էր  
երգել տար նրան կամ հին և կամ նոր , իրանից յօ-  
րինած , երգ . և ո՛չ թէ էս երգը , որ Շուշանիկի մահ-  
ուանից 1400 տարի յետոյ է յօրինած . Ո՞ր տեղ էր  
լսել կամ կարդացել խեղճ Շուշանիկը էս երգը , էս  
ի՞նչ գերբնական հրաշք է . . . մի՞ թէ Շուշանիկը կա-  
րաց երգել էն երգը , որ 1400 ասրուց յետոյ պէտք էր  
ծնէր Մ. լամդարեանի մտքումը . Եւ ի՞նչ նմանութիւն  
և յարաբերութիւն ունի էս երգը Շուշանիկի վիճակի  
հետ . Էս երգի սկզբումը ասած է՝ Եստոյ և Էնայ , իսկ  
Շուշանիկը երգելու ժամանակը 36 տարեկան էր , ու-

ընեն նրա հենաց ուսուցող շէր: Կն տեղ տասն է նկարէն  
 404 իճ հարսնա-Ռէան, իսկ Շուշանիկը 21 տարի աւելի  
 կին էր և մայր: Կն տեղ տասն է երկէնէ՝ զէր4 իճ հարս-  
 նա-Ռէան, իսկ Շուշանը 21 տարի առաջ աւարտել էր  
 իրա հարսնութիւնը: Ի՞նչ յարաբերութիւն կայ որս  
 միջումը: Մի թէ պէ կարինեանցը կարծել է, թէ էս  
 երգի մէկ քանի բառը փոխելով կարող է յարմարացնել  
 Շուշանիկին, երբ որ բոլոր բովանդակութիւնը անյար-  
 մար է, ըստ որում էն տեղ խօսողը կոյս աղջիկ է: Կն  
 ի՞նչ է փոխածները... Փոխանակ ասելոյ՝ դուք դատերք  
 տոհմին (3-ինէն, գրել է՝ տոհմին Հայհաղէան, փո-  
 խանակ՝ եղև այս ճա-Ռ գերեզման գրել է՝ եղև այս ճա-Ռ  
 Բանդարան: Կն վերջին բառը Հայոց լեզուումը չըկայ,  
 և որան վերջաւորութիւնը առանց իրիք հիման է աւել-  
 լացրած: Մի՞ թէ ոտանաւորի համար իրաւունք ունինք  
 նորասակցծ վերջաւորութիւն աւելացնել բառի վրա:

Տեսարան Գ.

Շուշանիկի երգելու ժամանակը գալիս է մի ծեր մարդ  
 Հայաստանի շորերով, գաւազանը ձեռին, կուզ 'ի կուզ  
 ման է գալի բերդի բարրքումը: Բանդարանը ներս է  
 մտնում և առում է Շուշանիկին՝ Տիրուհի, ներեցէք (1)  
 համարձակութեանս յայտնել ձեզ, որ դուք յիրաւի երկ-  
 նային զօրութեամբ սգևորուած, մի նոր աշխոյժ էք ըս-  
 տացել: (2) դուք, որ այսքան տարի մեզ հետ խօսելն

(1) Կնքան էլ ներեցէ՞ կըլնի, որ լսում ենք... Դա-  
 մանակ չ'ունիմ համրելու, բայց կարծեմ, որ սաղ էս  
 գրքումը, հաւելից աւելի կըլնի կրկնած ներեցէ՞, հա-  
 ներեցէ՞:

անգամ խնայում էիք (վերևումը տասանք, որ անխնայ  
խօսում էր, և ընչի՞ պէտք է չըխօսէր բարեսիրտ բան-  
դապետի և նրա ընտանեաց հետ) այժմ քաղցրախօս տաս-  
րակ էք դարձել. (էս ի՞նչ լաւ կամայլիւնեան է գիտա-  
ցել էս պ. բանդապետը. . . թող սրանից դաս առնեն  
մեր երիտասարդքը էսպիսի կամայլիւնեաներ. ) Բայց  
ձեր քաղցր ձայնի արձանգանքը գիշերուան լռութեան  
հետ խառնուելով (ձե՛ջ արածուելով) մինչև մեր ամենա-  
խորին բանդերն են թափանցում. (երևի զանգակի ձայնի  
պէս է եղել ձայնը, որ բանդի հաստ պատերից անգամ  
թափանցել է) և տարաբաղդ բանդարկեալները դռները  
կոտրատում են, որ դուրս դան և այդ հրեշտակաձայն  
երգեչը (չին) տեսնեն. դրանից վատ բան առաջ կ'ու-  
գայ (կուգայ), մենք յաւիտեան կ'կորչինք (կը):

Շուշանի. Վերեցէք, բարի բանդապետ. շուտով  
կ'ազատուիք իմ ձեզի (ձեզ) սուած նեղութիւնից. Ես  
իմ Վրարչից երեք բան եմ խնդրել. այս գիշեր եր-  
կուսը կատարուեցան, մնացել է մէկը, էն էլ կրկատար-  
ուի, ես կըմբռնեմ և դուք կ'ազատուիք կասկածանքներից:

Բանդապետը նոր մէկանց դուլաանքներ է արտասո-  
նում Շուշանիկին նրա առաքինութեանց մասին, յե-  
տոյ յայտնում է, թէ մի Հայաստանցի ծեր մարդ լա-  
լով և կոծով երկու օր է, որ ման է գալի բերդի բո-  
լորը և խնդրում է ձեզ տեսնել. ( ) մենք ( ) երկիւղ  
կրելով ( ) նրան շատ բարկացանք և սպառնալիքներ ( )  
տուինք, որ հեռանայ, բայց հնար չեղաւ (չ'), ողոր-  
մելին անուտիլ անխոնիլ Շուշանի ասելով լաց է ըլ-  
նում և աղաչում է մի րոպէ ձեզ մօտ թողնելու. ( )  
ես արդէն ամեն վտանգը յանձն եմ առել. ձեր աղօթ-  
քը հսքան տարի ինձ պահել է և էլի կըպահի. . . կը-  
հրամայէք, որ էն ծեր մարդուն ձեզ մօտ բերեմ:

Շուշանիկը խնդրում է բերել, բանդապետը դուրս

է գնում. Եւ շանիկը չորում է, գոհանում է Վսա-  
ճանից և իմանում է, որ իրա մահաւան ըսպէն հասել  
է, ըստ որում երրորդ ցանկու թիւնն էլ կատարւում է:  
Ներս են մտնում բանդապետը և ծերունին:

Էս տեսարանի սկզբումը ասած է, թէ մի ծեր մարդ  
ներս է մտնում և կուզ 'ի կուզ ման է գալի բերդի բո-  
լորումը. հիմի էս տեղ կրկին ասում է, թէ ներս է  
մտնում: Աւրեմն մէկն ու մէկը աւելորդ է:

Ներունին իսկոյն ընկնում է Եւ շանիկի սոխ սաս-  
ջիւր (ոտքերը), փոքր ժամանակ մնում է անխօս, և յե-  
տոյ նրանք երկուսը, իմ ծերունին և Եւ շանիկը, փոխ առ  
փոխ արտասանում են էն ոտանաւորը, որ պ. Վարին-  
եանցը երկու տարի առաջ յօրինել էր և տպել էր Մե-  
ղր-Հայաստանի լրագրի 1859 ամի 13 համարումը «Ծեր  
Վաստակ» վերնագրով: Էս ոտանաւորով խօսելու ժա-  
մանակը Ներունին յայտնում է Հայաստանի դառն յե-  
ղափոխու թիւնքը, Վարդանանց պատերազմի կատարածը  
և Վարդան քաջ նահատակի մահը:

Հիմի իմացա՞ք ընչի համար էր, որ պ. Վարինեանցը  
բոլոր հեղինակու թեան ընթացքումը աշխատում էր թաք-  
ցնել Եւ շանիկից էն աշխարհահռչակ անցքերը, որք  
կատարուեցան Հայաստանումը Վարդանանց պատերազ-  
մի ժամանակը Վարսից (Յաղկերտ թագաւորի հետ...  
հիմի իմացա՞ք, թէ ընչի ջոջիկ իշխանը երկու բովան-  
դակ տարի աշխատեցաւ թաքցնել Եւ շանիկից էս անց-  
քերը... և հասկանո՞ւմ էք, թէ ինչքան դժուար կրէ-  
նէր նրա համար թաքցնել էդ անցքերը, երբ որ բոլոր  
Սրաստանը, որ հարեան է Հայաստանին և էն պա-  
տերազմի ժամանակը մերձաւոր յարակցութիւններ ու-  
նէր Հայոց և Վարսից հետ, գիտէր և մասնակից էր...  
Էս բոլորը էնդուր համար էր միայն, որ պ. Վարինեանցը  
իրա բեմական հատուածի վերջումը կարողանայ կայցնել



Իրա Սասնայի ոտանաւորը օ Երկու տարի Աղղկէնը  
 Պարսկաստանու մէն էր սրանից առաջ երկու և երեք տա-  
 րի Հայաստանու մէն շատ երևելի յեղափոխութիւնք էին  
 կատարուում և Հայերը ամէն քրիստոնեայ աղգերի, մա-  
 նուանդ իրանց հարեան Արացիքի հետ գրագրութիւն-  
 ներ էին անում և օգնականութիւն էին խնդրում . . .  
 մի թէ կարելի՞ բան էր որ Շուշանիկը, Արաց թա-  
 գուհին խաբարութիւն չունենար . . . ի՞նչ պատճառաւ  
 Ս. Չիկը պէտք էր թագոյնէր նրանից և մի՞ թէ ընդհան-  
 րական հրաման դուրս տուեց, որ ո՛չ ոք մէկ խօսք էլ  
 չ'ասի Շուշանիկին . . . Մի՞ թէ Շուշանիկը կը համ-  
 բերէր էնքան երկար ժամանակ և չէր աշխատիլ իրա հա-  
 ւատարիմ հպատակների ձեռքով մէկ համբաւ ստանալ  
 իրա հայրենի տնից . . . Իայց պ. Աարինեանցը մտիկ չե-  
 տուել էս անկարելութեանը, ըստ որում կամեցել է  
 իրա Սասնայի կայցնել հատուածին և էստուր համար  
 զօրով զոհել է ճշմարտութիւնը:

Ա. Երջին բոթը լսելիս Շուշանիկը կամաց կամաց թու-  
 լանում է և կցկտուր ձայնով ասում է՝ Աարդան . . .  
 իմ Աարդան . . . իմ հայր սիրական . . . (Ս. էպէտ  
 գրած է, թէ թուլանում է, բայց ժամանակ չի ձա-  
 րում թուլանալու, ըստ որում ներս է մանում դահ-  
 ճապետը և յայտնում է թագաւորի տուած դատակ-  
 նիքը, որի զօրութեամբ Շուշանիկը վերջին անգամ պէտք  
 է տանուի կրակատան մօտ և եթէ երկրպագութիւն չը-  
 տայ, իսկոյն պէտք է գլխատուի:

Դահճապետը դատակնիք յայտնող չէ, նա միայն կա-  
 տարող է պատուհասի կամ պատժոյ, Թագաւորի դա-  
 տակնիքը պէտք է յայտնէր կամ քաղաքապետը կամ  
 բերդապահը միայն դահճապետի ներկայութեամբը:

Շուշանիկը խնդրում է դահճապետից մին քանի ըսպէ  
 ժամտնակ, մինչև որ մէկ երկու խօսք ասի ծերունւոյն:

որի համար ասում է, թէ բանդապետի ծառան է և վեց տարի ցամաք հացի կտոր և ջուր էր բերում. դահճապետը խղճահարվում է, տալիս է հինգ ըսպէ ժամանակ և դուրս է գնում սպասելու:

Եթէ պ. Արիմեանցը քաղաքապետի կամ բերդապահի բերնով էր յայտնել դատակնիքը, էն ժամանակը առելի քնական կրէ՛էր, որ Եւզանիկը խղճահարութիւն խնդրէր և ստանար նրանցից, քան թէ դահճապետից, որ իրա պաշտօնի նշանակութեամբը պէտք է անխիղճ մարդ ըլնի. և ի՛նչպէս համարձակուեցաւ նա բանդապետի և իրա երկու օգնականների ներկայութեամբը ժամանակ տալ. մի՛ թէ չըվախեցաւ նրանց մասնութիւնից. «Դահճաների միջումը հազարից մէկը հազիւ կը պահի փափկասիրտ. . . երեւի պ. Արիմեանցի դահճապետն էլ էն հազուագիւտներէն է»:

Դահճապետի դուրս գնալուց յետոյ Եւզանիկը ասում է, թէ արդէն հասել է իրա բոլոր քաղճանացը, թէ առանց դահճաների սուրը ներկելու կրմեռնի. շնորհակալութիւն է անում բանդապետից, դառնում է դէպ ՚ի ծերունին, արտասանում է նոյն սպասարկից երեք տուն. յետոյ փոքր ինչ մնում է լուռ. վերջապէս կցկտուր և թոյլ ձայնով ասում է՝ «Տէր. . . Յիսուս. . . ընկա՛լ. . . զհոգի իմ. . .» թէք է ընկում բարձի վրա:

Ներս է մտնում դահճապետը և ասում է՝ «Մահապարտ. քնելու ժամանակ չէ. ես քեզի ( ) մի քանի խօսք ասելու ժամանակ տուի և ո՛չ քնելու. . . և այս սարսափելի ժամուն ի՛նչպէս է քունդ տանում: — Տանդապետը լալով պատասխանում է՝ Ո՛չ, դա արդէն մեռած է»:

Դահճապետը տնտղում է և տեսնում է, որ յիրաւի մեռած է, զարհուրելով (զարմանալով) ետ է քաշվում և բանդից դուրս գնալով ասում է՝ Ո՛հ, այս

ինչ հրաշք է, (•) ես կ'երթամ և այս իմ աչօքս տե-  
սած սքանչելիքը կրպատմեմ Աղգէն արքային, և բո-  
լոր աշխարհքին, թէ և սրանով իմ կեանքս վտանգի  
մէջ ընկնի: Արագուրս գնալուց յետոյ (•) առուկը ար-  
տառանում է նոյն սքանչելի վերջին եօթը տունը, վա-  
րագոյրը իջնում է:

Շուշանիկի մահուան րուպէն հարկաւոր էր աւելի հան-  
դիսական ձևով կատարել, ըստ որում սուրբ և արդար  
անձին մահ է: Հարկաւոր էր, որ բանդապետը և (•) ա-  
ռուկը ծունկ չոքած, ձեռքերը իրարու կպցրած ջերմե-  
ռանդն լուծեամբ մային անխօս, մինչև որ դահձա-  
պետը գար և նրանց լուծիւնը ընդմիջէր, Հարկաւոր  
էր, որ բանդապետը յայտնէր նրան, թէ Շուշանիկը  
մեռել է. այլ նա ինքը մօտենար, տնտղէր և գործադրած  
մնար քարացածի պէս. և հէնց էս յաղթական վայր-  
կեանումը վարագոյրը վէր գար:

Բայց պ. Արիստեանցը հօպիսի հանդիսաւոր և արը-  
տառուչ տեսարանը զոհել է իրա ոտանաւորի վերջին եօ-  
թը տունը ասել տալու համար:

Ասքան սխալներով, անյարմարութիւններով, բնակա-  
նից դուրս դասաւորութիւններով և անհամապատասխան  
հանգամանքներով լիքը, անարուեստ և անհմուտ ձեռ-  
քով գրած թէատրոնական հատուածը (պիէսը) եր-  
կու կամ երեք անգամ ներկայացրին (Թիֆլիզումը Հայ-  
ոց Հոթէոր Աւրոցի որդեգիրքը օգնականութեամբ մէկ  
քանի աշակերտաց տեղւոյն նահանգական գիմնազիայի,  
և ամէն անգամ (Թիֆլիզոյ Հայոց հին ուսումնարանի  
մեծ դահլիճը լիքն էր բաղմականներով, որոց շատերը ան-  
պայման հաւանութիւն էին ցոյց տալի ինչպէս հեղինա-  
կութեանը, էնպէս էլ բեմի վրա կատարմանը:

Տեսնենք էս հաւանութեան աղբիւրները և պատ-  
ճառները: Թէատրոնական բեմը, որ արհեստագործել

էր աստիճանաւոր Մողոման Լ. բամբակեանցը, ունենալով  
 իրա տնօրէնութեան տակը մեծ գահլիճի երրորդ մասը  
 և նրա ետևի մեծ սենեակը, շատ լաւ էր կարգաւորած:  
 Լ. աջին տեսարանը ( դեկորասիօնը ) ներկայացնում էր  
 Արդանի տունը վայելուչ զարդարած, երկրորդը Մե-  
 տեխի ամրոցը նոյնպէս գեղեցիկ շինած և նկարած, իսկ  
 երրորդը Աղգէնի տունը մասնաւոր փոխարկութիւննե-  
 րով շինած առաջինից: Գերասանների հագուստները  
 (կօստիւմ) նոյն պ. Լ. բամբակեանի ձեռով արհեստա-  
 գործեալ շատ լաւ էին, բայց որովհետև հաստ թղթից  
 (կարտանից) էին շինած և վարաղներով զարդարած, վասն  
 որոյ շարժուածքի և մանաւանդ նստել վերկենալու հա-  
 մար շատ անյարմար էին: Էս տեսակ պսպղուն զարդա-  
 բանքը յանկարծ պատկերանալով այցելուաց առաջեր  
 բազմաթիւ մոմեղինաց պայծառ լուսոյ օգնականութիւն,  
 շատ մեծ ազդեցութիւն ունեցաւ այցելուաց աչքերի վրա,  
 ուրեմն և պատրաստեց նրանց սիրտը դէպի դովութիւն:  
 Բայց շատերը նկատեցին, որ Շուշանիկի և Գասիկի  
 հագուստները առաջին գործողութեան մէջ շատ տգեղ  
 էին: Էս հագուստների ձևը առել է պ. Լ. բամբակեան-  
 ցը Պարսկաստանու Հայ կանանց շորերից, որոց օրինա-  
 կը նկարած է Մոսկովումը տպած «Գողթահանու-նի-ն Լ. Գ-  
 ռապապահան Հայոց 'ի Սոսոսոսոսոս 'ի 1828 ամի» պատկե-  
 րումը: Սակայն պ. Լ. բամբակեանցը չի մտածել, թէ  
 էդ հագուստները Հայոց և դարու հագուստները չեն.  
 և էն պատճառաւ այցելուաց առաջեր ներկայացան Գըս-  
 տիկը և Շուշանիկը Խօյեցի կամ Սալմաստեցի և կամ  
 Քուրդստանցի Հայ կանանց շորերով: Լ. յնու ամենայ-  
 նիւ բեմը, նկարները և հագուստները իրանց պսպղուն  
 փայլմամբը և նորութեամբը եղեն առաջին պատճառ  
 քնդհանուր հաւանութեան:

Գերասանները շատ լաւ և անսխալ էին սերտել ի-

րանց ճառերը (մօնօլօգները)։ Արա պատճառն էն էր, որ երեք ամիս շարունակ ամենքը զբաղուած էին սերտելով էն երկար և քրտնաբեր խօսակցութիւնքը, որ տեսնում ենք գրքումը, և էդ երեք ամսումը համարեա՛ ամէն շաբաթ կրթութիւնք (ընթացիտիօն) էին լինում. իսկ մնացեալ ժամանակը բոլորովին նուիրած էր բեմի շինութեանը, նկարների, դեկորատիօնների և կոստիւմների կազմութեանցը և պատրաստութեանցը։ Այլ ահա՛ էս էր գլխաւոր պատճառը, որ հոգևոր ծայրագոյն իշխանութիւնը արգելեց հոգևոր Ապրոցի որդեգրաց և աշակերտաց պարապիլ թէափոնական գործով, որ յետ չբանան իրանց ուռանելի առարկաներից, և ո՛չ թէ պ. Արիստանցի կարծեցեալ մի քանի շարանախանձ անձանց դաւաճանութիւնը, որ նա յիշում է իրա յառաջաբանութեան մէջ, Պ. Արեւնեանցի մտացածին դաւաճանութիւնը (եթէ յատուկ եղած էլ ընէր), չէր կարող արգելաւ տալ, եթէ հոգևոր իշխանութիւնը ինքը չբահամարէր թէափոնը մնասակար էն որդեգրաց և աշակերտաց համար, որք պատրաստվում են Աստուծոյ սեղանի և տաճարի սպասուորներ դառնալու։

Անսխտլ սերտած խօսակցութիւնքը, որք դերասանները արտաբերում էին առանց կարօտելու Սուֆլետօրի օգնականութեանը, նոյնպէս և նրանց պարզ առողանութիւնը շատ ազդու եղանակաւ ներգործեցին ունկնդրաց վրա, և ահա էստունք էին հաւանութեան երկրորդական պատճառը։

Դերասաններից միայն մէկ քանիսը գերազանցուեցան շարժուածքով (ժեստիֆիկասիօն) և իրանց գործքերը (աօլ) կատարելով։ Տիրացու Յարութիւն Արաղեանը շատ լաւ կատարեց Համազասպի աօլը, դողդոջիւն ձայնիւ խօսելով իբրև հինաւուրց, մէջքը կռացած ծերունի, Ապրոցի որդեգիր տէր Յակովբեանցը Շուշանիկի

ուօլը միայն երրորդ գործողութեան մէջ ( բանգումը ),  
 պատկերացնելով Շուշանիկի առաքինազարդ բնաւորու-  
 թիւնը, Սահակ Ղաթիբեկեանցը ծեր Նառուկի ուօլը,  
 շարժուածքով և արտաբերութեամբ պատկերացնելով  
 Մշեցի Հայի տիպը, և նոյն տիրացու Կարապետանը Տղ-  
 ջիկի ուօլը: Մնացեալ գերասանները գերազանցուեցան  
 միայն էնդրով, որ անսխալ սերտել էին իրանց խօսակ-  
 ցութիւնքը, բայց նրանց առողանութեան և շարժուած-  
 քի մէջ հոգի չըկար, թերևս էն պատճառաւ, որ իրանց  
 օրումը թէատրոն չէին տեսել: Քաղմաթիւ զօրականքը  
 լաւ երգեցին պ. Արինեանցի յօրինած «էր հեռուստ»  
 երգը, որ ինչպէս վերևումը տեսանք, իրա բովանդակու-  
 թեամբը հարսնախօսութեան հանդիսի վայելուչ չէ, այլ  
 նման է Տետլի Բայալիի: Էս երգի եղանակը, ուր մասին  
 պ. Արինեանցը իրա յառաջաբանութեան մէջ ասում  
 է, թէ «պ. Գաբրիէ Ղ. Բովեանցը «մըրեցիւն էլ «հաս», մաս-  
 նաւոր փոփոխութիւններով նման է Ռուսաց հին եր-  
 գերի եղանակին, զ՞՞ երրորդ շարքը շատ նման է Ռու-  
 սաց շատ հին բանական երգին ВОЗЛЕ РЪЧКИ, ВОЗЛЕ  
 МОСТУ, ինչպէս կարող են վկայել մուզիքա իմացողները,  
 եթէ բարեհաճին քննել դրքի ետևից կպցրած խաղե-  
 րը (նօտերը): Իմ կարծիքով աւելի լաւ կըլնէր, եթէ  
 էդ երգը Հայոց հին եղանակներից մէկն ու մէկով երգ-  
 ուէր, քան թէ էս նորաստեղծ եղանակովը: Ես մուզի-  
 քա չըգիտեմ, վասն որոյ և չեմ վստահանում դատա-  
 դութիւն անել էս եղանակի յատկութեանց վրայ, միայն  
 մուզիքա իմացողներից լսում եմ, որ սա ո՛չ մէկ ազգի  
 բնաւորութիւն չ'ունի, այն է՝ ո՛չ իտալական է, ո՛չ եւ-  
 րոպական, ո՛չ ասիական, ո՛չ Ռուսաց և ո՛չ Հայոց: Աղա-  
 նակ ստեղծողը պէտք է գիտենայ մուզիքա և երգեցողուե-  
 կանոնները, իսկ առանց էս գիտուեց յօրինած եղանակը  
 ասան էսպէս կըլնի, ինչպէս որ պ. Ղ. Բովեանցինն է:

Երկրորդ և երրորդ գործողութեանց միջոցումը (անտրակտումը) զորականքը և Վարդանը երգեցին մէկ երկայն երգ, որ նայնպէս տպած է գրքումը: Էս երգը ոչինչ կապակցութիւն չունի ներկայ սղբերգութեան հետ և մանաւանդ Վարդանի ներկայութիւնը բնական չէր, ըստ որում երկրորդ գործողութեան մէջ իմացանք, որ նա սպանուած է պատերազմումը: Այլանակը նոյն պ. Մ. բովեանի յօրինածն է, և շատ անախորժ է լսելեաց համար: Չըզիտեմ ի՞նչն է հարկադրել էս անյարմար երգը մուծանել հատուածի մէջ . . . Ս. ըիշ ոչինչ նպատակ չէ երևում, բաց ՚ի սնտղարծուի նիդ, որով պ. Վարինեանցը կամեցել է իրա ստանաւորները, իսկ պ. Մ. բովեանը իրա յօրինած եղանակը թաւաղայ անել խալխին: Աւայ մարդկային սնտղառութեան:

Փնոք և պատիւ բոլոր դերասաններին, որ իրանց քրտնաջան սերտելովը մեծ բաւականութիւն տուին մեզ, և մանաւանդ պ. Սողոմոն Մ. բամբակեքեանին, որ գեղեցիկ ճարտարութեամբ շինել էր բեմը և հազուսաները: Էստուէք էին վսեմ պատճառները ընդհանուր հաւանութեան: Ի այց գլխաւորագոյն պատճառը, որ ամէնքի սիրար հակեց դէպի գովութիւն և ամենքին քաշում էր թէատրոնի մօտ, ոչ ոյլ ինչ էր, եթէ ոչ հեղինակու Ե. սարգիսն: Շուշանիկի անունը մագնիսական զօրութիւն վառում էր սիրար . . . Շուշանիկի անունը, որ անգին է ամէն հայի համար, բացում էր նրանց ձեռքերը առատ պարգևել ամենատեսակ նուիրատուութիւնք . . . Շուշանիկի անունը շարժում էր ամէն հայի հետաքրքրութիւնը և կարծես թէ զօռով քաշում էր իրա մօտ: Եթէ էդ պաշտելի անունը չըլնէր, ներկայ քննութեան մէջ ցոյց տուած բազմաթիւ թերութիւնները հեղինակութեան իսկոյն կը ստուեցնէին այցելուաց եռանդը, և թէատրոնը մէկ անգամից աւելի չէր կարող ներկայա-

նալ, եթէ Եւրոպայի և Արդարանի անուանները չբն-  
 նէին, ուրիշ ի՞նչ կայ բովանդակ հեղինակութեան մէջ  
 գրաւիչ . . . ի՞նչ արժանաւորութիւն ունի հաս-  
 ուածը . . . ի՞նչ գեղեցկութիւն կայ գործողութեանց  
 կազմութեան մէջ . . . ո՞ւր է անցքի կապուածքը և  
 արձակուրդը (завязка и развязка) . . . ո՞ւր է  
 էն դասաւորութիւնը, որ պէտք է սկզբումը զանազան  
 խառնուածքով խճճի հանգամանքները և էնդրով վա-  
 աի հետաքրքրութեան եռանդը. ո՞ւր է էն աստիճան  
 առ աստիճան բարձրանալը անցքերի, որ պէտք է գրա-  
 լի մարդոյ միաքը, և էն անակնկալ բացուիլը և պար-  
 ջուիլը բոլոր հանգամանաց բովանդակութեանը, որով  
 պէտք է տպաւորուի մարդու հոգւոյ մէջ բովանդակող  
 բերգութիւնը իրա բոլոր պատկերներով: Ա՞ն էս  
 պայմանները պ. Արեւնեանցի հեղինակութեան մէջ.  
 Ա՞ն ապաքէն միայն Եւրոպայի անունը և նրա մահ-  
 ուան պատկերը դուրս տարին այցելուքը թէատրոնից,  
 իսկ մնացեալ բոլոր հանգամանքները երազի պէս ան-  
 հետացան ամէնքի մօքից: Արեւմտ. Արեւնեանցի հե-  
 ղինակութիւնը միայն առարկայի անունովն է կենդանի.  
 Սակայն սրբապղծութիւն է, եթէ անուսումն քամիկը  
 ձեռք քնար առած դուրս գայ բեմի վրա և կապիտ մատ-  
 ներով խիտ սակեթել լարերին առանց կանոնի: Սրբա-  
 պղծութիւն է, եթէ դարբինը վստահանայ ծոցի ժա-  
 մացոյց շինել, քաղաքը վստահանայ բժշկութիւն անել,  
 մարդակեր կողեցին վստահանայ խալախան օպերայի վրա  
 դատողութիւն անել . . . . .

Ներկայ կրիտիքական քննութիւնիցս հետեւեալ եզ-  
 րակացութիւններն են դուրս գալի.

1.) Եթէ պ. Արեւնեանցը կամենում է, որ իրա  
 հեղինակութիւնը արժողութիւն ունենայ հասկացող ան-  
 ձանց աչքումը, մենք խորհուրդ կը տանք, որ խոստա-



ցեալ երկրորդ տպագրութեան ժամանակը ուղղել և  
 սրբագրել բոլոր սխալները, անյարմարութիւնքը, բնակա-  
 նից և առողջ դատողութիւնից դուրս գործողութիւնքը  
 և խօսակցութիւնքը, և անյարմար դասաւորութիւնքը,  
 բողոքովին հանի Չ. ջիկի երկար ճաւը և նրանմանները,  
 փոխի զօրաց անվայելուչ երգը (մեռելի բայաթին) և  
 ընդհանրապէս բարեհաճի ուղղել, բոլոր թերութիւնքը,  
 որք ցոյց եմ տուել իրանց տեղերքումը:

(Բ.) Բարեհաճի նմանապէս ուղղել և սրբագրել  
 բոլոր քերականական սխալները, մանաւանդ կետագրու-  
 թիւնքը, ըստ որում գրութեան մէջ միայն կետագրու-  
 թիւնն է մտքի որոշողը և յատկացնողը, Վմանապէս  
 մտագրութիւնը դարձնի հետեւեալ կանոնի վրա էլ.  
 Հայոց աշխարհաբառ լեզուումը ապառնի ժամանակը  
 ունի իւր մասնիկ, որ դնում ենք բաղաձայն տառով  
 սկսուած բայերի առաջը. զօ կտանեմ, իւրեմ, իւրեմ  
 կտանամ և այլն. իսկ ձայնաւոր տառով սկսուած  
 բայերի առաջը ը տառը կորչում է, և նրա տեղ դը-  
 նում ենք ապոստրոֆ (') նշանը էն նպատակաւ, որ ի  
 տառը չըկուչի արմատական բայի հետ. զօ. կ'ածեմ,  
 կ'անեմ, ի'մանամ, կ'ուտեմ, կ'երեմ և այլն:

Պ. Կարենեացը երբէք չի հետեւում էս կանոններին,  
 այլ գրում է ինչպէս պատահի (տես նրա գրքումը. ե-  
 րեսք՝ 4 կ'կատարեմ. 5 կ'հասնէինք. 6 կ'պարծենայի  
 կ'սիրէին. 7 կ'խորհէին, կ'հրամայէք. 8 կ'յայտնուի.  
 կ'տայ, կ'յուսամք, կ'լինիք, կ'կարդանք, 9 կ'առաքէի.  
 կ'վայելէ, կ'բանայի. 58 կ'լինի, կ'լնի. 68 կերթամ,  
 կ'փարեմ. և այլն:

(Եւ Պ.) Եթէ միւտանգամ կրկամենայ հայոց գը-  
 րականութեան ընծայել էսպիսի թէատրոնական հատ-  
 ուած, բարեհաճի առաջ մէկ քանի երեւելի հեղինակաց  
 աշխատութիւնքը կարդալ և տարէնը մէկ քանի ան-

գամ եւրոպական թէաարոններ գնալ, և յետոյ խորհուրդ անել իմացող անձանց հետ և էնպէս ձեռն տալ գործին: Մանաւանդ իրա հեղինակութեան համար որքան կարելի է թեթեալ առարկաներ ընտրի և ո՛չ թէ Շուշանիկի կամ Արգանի կամ ուրիշ սրանց նման վսեմ առարկայ, որի վրա ողբերգութիւն գրելը նրա գործը չէ, ինչպէս որ տեսանք:

Բայց նա է որքան թերութիւնքը և սխալանքը չըտեսնելով իրա գրքի մէջ և կարծելով, թէ իրա հեղինակութիւնը մէկ երևելի գործ է, իրա գրքի վերջաբանութեան մէջ իրաւունք չի տալի ուրիշներին (Թ. Ֆիլիզումը ներկայացնելու էս ողբերգութիւնը, Ս. էպէտ տպած գիրքը սեպհականութիւն է գրականութեան և ո՛չ մէկ հեղինակ մինչև էս որ էսպիսի բռնութիւն չի արել, և էս սրտաճառաւ ամէն մարդ իրաւունք ունի թէ (Թ. Ֆիլիզումը և թէ ուրիշ քաղաքներումը ներկայացնել, բայց տեսնելով էս ողբերգութեան հաղարաւոր թերութիւնքը և սխալները, ո՛չ որ մինչև էս որ չի ցանկացել և չի ցանկանում էդ իրաւունքը խլել հեղինակից, ըստ սրում, ինչպէս տեսանք, բաց 'ի սոսանից, ոչինչ արժանաւորութիւն չ'ունի, և եթէ որքին կամենայ էլ ներկայացնել, պէտք է առաջ վերաբնի և գլխէ 'ի գլուխ ուղղի: Աւրեմս Утра не стоить свѣчей — խաղը չ'արժէ մամերին:

Շուշանիկ, Շուշանիկ... Բու, որ հայոց կանանց համար օրինակ ես առաքինու՛ն, ներկի՛ր քո կենաց և մահուան հանդիսի նկարագրողին, որ անհմուտ ձեռքով գուրս հանեց քեզ բեմի վրա. ներկի՛ր նրա աններելի վատահու՛նը և հանի՛ր նրա սրտից անձնապաստանութեան և մեծամըտութեան կիրքերը: Հայոց գրականութիւնը քո սուրբ անունը արտասանելուց միշտ պէտք է կրկնի՝ «Միտո՛ւ Շուշանիկ, որ ընկար պ. Արեւնեանցի գրչի տակ»:

11

11

11





